

"Droschak"  
ORGANE  
de la F. R. A.  
"Daschnaktzoutioun"

# ԴՐՕՇԱԿ

Adresse:  
Rédaction du Journal  
Droschak  
GENÈVE (Suisse)



## «ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԸԿԱՆ ԴԱՆՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

### «ԴՐՕՇԱԿ» Ը

902

Շուրջ տասնամեայ դադարից յետոյ վերահրատարակուած է Դրօշակը:

Դրօշակը հայկին պատերազմի առաջ բերած գաղցուածքի և դժուարութիւնները 1914 թւին հարկադրեցին առժամապէս դադարեցնել Դրօշակցութեան օրգանի հրատարակութիւնը: Նրովհետեւ թէ՛ նրան Երկրից կենդանի մտաւարարիչը եւ թէ՛ նրա տարածումը վերջու գրեթէ անհնարին դարձան: Պատերազմին փորձող քաղաքական իրադարձութիւնները — Հայաստանի Հանրապետութեան հաստատումը, մեր անդու պայքարը, այդ Հանրապետութեանը սպառնացող ներքին եւ արտաքին վտանգների դէմ, պետական կազմակերպութեան խնդիրները, Երկրի վերաշինական աշխատանքները եւ այլն — որոնց ի սպաս էին դրուած Հ. Յ. Դրօշակցութեան բովանդակ ուժն ու միջոցները՝ չափազանց դժուարացնում էին Դրօշակի վերահրատարակութեան գործը: Թէպէտ եւ նրա կարիքը շատ էր զգացուած անաւանդ պետական վերաշինութեան վերջին շրջանում:

Թիւրք-բոլշեւիկեան ներխուժումի հետեւանքով Հայաստանում վերահաստատուած բռնակալ ընտրւել նորից երկաթեայ փականքի տակ զրեց ազատ միտքն ու խօսքը եւ նորից նախկին անկեղալ մամուլի պահանջը հրապարակ եկաւ: Ընդառաջ գնալով այս պահանջին՝ Հ. Յ. Դրօշակցութեան թուրքէջի եւ վէճնայի խափնողութիւնները ժամանակին որոշում կայացրին Գրօշակը վերահրատարակելու: Այսպէս մի շարք տեխնիքական եւ այլ կարգի դժուարութիւններ արգելք հանդիսացան այս որոշման իրագործմանը, մինչեւ որ Հ. Յ. Դրօշակցութեան գլխավորը ժողովը եկաւ իր վճարական կարգադրութիւններն անելու այս մասին: Դրօշակի չի մնալ ան ինչի բը, ինչպէս անցեալում՝ չոյնպէս եւ ներկայումս մնում է

նորը: Այդ խնդիրն է ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱ, որ Դրօշակը սկզբում Տաճկահայաստանի մէջ յետազային նաեւ Ռուսահայաստանի սահմաններում հրահրում եւ առաջ էր մղում իբրեւ հայ ժողովրդի ազատագրութեան պահանջ սուլթանական եւ ցարական բռնապետութիւններէ դէմ: Այսօր սուլթաններն ու ցարերը հեռացել են քաղաքական հորիզոնից, բայց Հայկական Դատը իբրեւ մի միացող վերջ մնացել է հրապարակում եւ իր դարմանումին է սպասում:

Սակայն եթէ ճիշտ է, որ Հայկական Դատը մեր օրերի համար եւս պահում է իր ցաւալի այժմեութիւնը, ապա ճիշտ է նաեւ այն, որ նրա ներսն ու շուրջը վերջին փոփոխակայք տասնամեակում տեղի են ունեցել այնպիսի հսկայական փոփոխութիւններ, որ նա այլեւս նախկին ձեւով հանդէս գալ չի կարող ոչ մեր քաղաքական-հասարակական կեանքում եւ ոչ էլ Դրօշակի էջերում:

Այդ փոփոխութիւններից առաջինը եւ հիմնականը անկախ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ փաստն է, որ փոխարինելով Հայկական Դատի յեղեղուկ եւ առաձգական գաղափարին՝ մի տեսակ դարձակէտ հանդիսացաւ նրա անցեալ եւ ապագայ փուլերի միջեւ: Հայաստանի Հանրապետութեան հրուշակումով եւ փաստով այլեւս վերանսում են մէջտեղից Հայկական Դատի գաւազան ձեւակերպութիւնները — ինչպէս օրինակ բարենորոգումների ծրագիր, հայկական ինքնավարութիւն, Ֆեդերատիոն Տաճկաստանի եւ Ռուսաստանի սահմաններում եւն., որոնք տարբեր ժամանակներում, մեծ մասամբ արտաքին պայմանների ազդեցութեամբ, առաջ էին քաշուում իբրեւ մեր հարցի լուծման գործնական միջոցներ: Այս բոլորի տեղը ներկայումս տիրակաւնօրէն բռնում է Թիւրքահայաստանը եւ Ռուսահայաստանը մէկ անկախ պետական մարմին մէջ միացնելու գաղափարը, մի գաղափար, որ ներքազորւած է միջազգային ակտերով եւ հայ ժողովրդի անկախ պետական կեանքի փաստով:

Արդ, Դրօշակի առաջին խնդիրը պէտք է լինի կեդրոնացած պահել ցաք ու ցրիւ էկած հայ ժողովրդի քաղաքական միտքը Միացեալ եւ Անկախ

Հայաստանի գաղափարի վրայ, հիմնաւորել ամէն տեսակէտից նրաիրականացման անհրաժեշտութիւնը, ցրել նրա շուրջը ծագող ամենաթիթեմ կասկածներն անզամ եւ սողորել հայ ժողովրդի քաղաքական ձգտումներն այդ գաղափարով մինչ այն աստիճան, որ նրանք այլեւս անդիմագրաւելի դառնան աշխարհիս ամենամանկատկառ բռնաւորների համար իսկ:

Բայց ոչ միայն Հայկական Դատի ձեւակերպութիւնն է փոխւել ներկայումս, այլ եւ այն արտաքին եւ ներքին ազդակները՝ որոնցից կախում է նրա լուծումը: — Նախկին ցարական կայսրութեան փոխարէն մեր առջեւ ցցւած է իտորդային Ռուսաստանը, որ իր բռնակալ ընթիմով եւ աշխարհակալ ձգտումներով յիշցնելով հանդերձ կործանւած ցարիզմը՝ այնուամենայնիւ պայքարի բոլորովին այն մեթոդներ է հարկադրում ներկայումս, ջան որ մենք կիրառում էինք անցեալում: Նայեալս խոշոր փոփոխութիւնների է ենթարկւել մեր Դատի միւս գլխաւոր ազդակը — Տաճկաստանը: Սրանց մէջ կարեւորը մեզ համար այն չէ, որ նախկին սուլթանների զանին տիրացել են նոր տիրոջ մարդիկ, կամ որ օսմանեան կայսրութեան սերակների վրայ բարձրացել է թիւրքական Հանրապետութեան դրօշը, այլ այն՝ որ Տաճկահայաստանի սահմաններում հայ տարրը ոչնչացել է եւ որ թիւրքական զօրքերը այսօր կանգնած են Արաքսի եւ Ախուրեանի ափերին: Հասկանալի է, ի հարկէ, որ այս խոր փոփոխութիւնները նոր դործելակերպի անհրաժեշտութիւնն են դնում մեր առջ հանդէպ Տաճկաստանի: Այնուհետեւ առաջ են եկել նոր ազդակներ, որոնց մենք անցեալում զրեթէ հաշիւ չէինք առնում Հայկական Դատը հետապնդելիս — մեր անդրկովասեան եւ կովկասեան հարեւանները, որոնք այսօր ազգային վերածնունդի շրջան են ապրում եւ մեծապէս կարող են ազդել մեր քաղաքական գործի ընթացքի եւ վախճանի վրայ: Վերջապէս եւրոպական եւ ամերիկեան դիւանադատութեան հանդէպ հայ ժողովրդի ունեցած ակնկալութիւններն ու յուսախաբութիւնները քաղաքական մեքենայութիւնների մի հսկայական ցանց են բացել մեր առաջ, որ մենք անտես աննել չենք կարող առանց նոր արկածների վտանգին ենթարկւելու:

Այս խոշոր փոփոխութիւնները քաղաքական գործելակերպի նոր ուղիներ որոնելու, պայքարի նոր մեթոդներ մշակելու անհրաժեշտութիւնն են ստեղծում հայ ժողովրդի համար: Եւ Դ Ր Օ Շ Ա Վ երկրորդ կարեւոր խնդիրը պէտք է լինի պարզել հայ ժողովրդի համար թէ՛ վերոյիշեալ ազդակներից իւրաքանչիւրի արժէքն ու դերը մեր քաղաքական ձգտումների տեսակէտից եւ թէ՛ այն քաղաքակա-

նութիւնը, որ պէտք է որդարանայ նրանցից իւրաքանչիւրի հանդէպ: Տաճկահայաստանի դրօշով զարմանի հասցնելու համար քննել:

Սակայն միայն Հայկական Դատի արտաքին պայմանները չեն խոր փոփոխութիւնների ենթարկւել վերջին տասնամակում, այլեւ ինքնահայ ժողովուրդը, որ այդ Դատի հիմնական ազդակն է հանդիսանում: Համա իւրաքանչիւն պատերազմից նսկել է անհելիորին կոտորակւած հէնց միւսիւն 1918 թ.ի տարագրութիւնների կորցնելով Դր Ի. Ի. 1/3-ը, տնտեսապէս քայքայւած եւ բարոյակէս սղճատւած: Նրա մի մասը սմբած հայրենի երկրի սերակների վրայ՝ հազիւ հազ կարողանում էր գլուխը պահել, իսկ միւսը աստանդական յանձն է երկրից երկիր՝ առաջ իր գլուխը դնելու մի պահով անկիւն գտնելու երկու մասի վրայ է տարացած է Ֆիզիքական, քաղաքական մղձաւ երկուսն էլ ենթակայ արտաքին այլասերման զին: Այդ հանգամանքներում քնական է, ոչ ժողովուրդի պահպանման հոգսը առաջնադար պէտք է գրաւէ բոլոր քաղաքական մտահոգողների մէջ:

Եւ Դ Ր Օ Շ Ա Վ ըստ ամենայնի բաժանել այս մտահոգութիւնը, պէտք է զբաղւել մեր գնդութների կազմակերպման խնդրով, պէտք է անդու պայքար մղէ, որ թափառական դադիականների առաջ բացւեն Հայրենիքի դռները, պէտք է կենդանի պահէ արդէն այլուստիւստ քաղութների կապը Մայր Երկրի հետ եւ կրկին իր ետեւ դով պայքար մղէ այն, ազգային, այլասերման վտանգին դէմ, որին մատնւած է հայ ժողովուրդը ամենուրեք:

Վերջապէս անցած տասնամակում շատ լուրջ փոփոխութիւններ է առաջ բերել ամեն երկրում, ընկերային կառուցուածքի եւ զասակարգային հիօթիկ յարաբերութիւնների մէջ: Սրան հետեւանքով ջր իրարանական շատ ուսմունքներ եւ մասնաւորապէս ընկերվարական վարդապետութիւնը զրւել են այն պիտի հարցերի առաջ, որոնք մինչեւ Համաշխարհային Պատերազմը առանձին կարեւորութիւն չէին ներկայացնում: Ընկերվարութիւն թէ կոմունիզմ, խաղաղ թէ բռնի ընկերային յեղափոխութիւն, դիկտատուրա՝ թէ դեմոկրատիա, ընկերվար Միջազգային թէ կոմունիստ Միջազգային, Ազգերի Լիկա՝ թէ ժողովուրդների զգուշակցութիւնն ու զանազան հարցեր, որոնք այսօր այնպիսով են լայն խառատորական զանգւածները կարելի է ասել բոլոր երկրներում եւ բազմաթիւ ընկերային նոր տեսութիւնների եւ ուղղութիւնների ազդելու համար հիսանում:

Հասարակական զարգացման այս նոր պայման

ներն աչքի առաջ ունեւա Դ Ր Օ Շ Ա Ս կ ը աւելի մեծ չափով, քան իւր անցեալում պէտք է տեղ տայ իր էջէնը մտնալիս յօրէ Ծների, որոնք վերոյ յիշեալ եւ նմանօրինակ հարցերի ուսումնասիրութեան նւիրած կէտին միտ շնայով մեր կուսակցական շարքերի մէջ ըստ կարելոյն յստակ մտածողութեւն առաջ բերել ժամանակակից ընկերվարական շարժման տեսական եւ գործնական խնդիրների շուրջը:

Ըստ ինքեան հասկանալի է, որ Դ Ր Օ Շ Ա Ս մէջ, ինչպէս անցեալում նոյնպէս եւ ներկայումս ստասխան արտայայտութիւն պէտք է գտնէ Հ. Յ. Իշահակցութեան կազմակերպական կեանքը այն չափով, որ անկեղալ կամ կիսայեղալ կուսակցական աշխատանքի պայմաններում թոյլատրելի է: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել այս վերջին վերապահումը, որովհետեւ Հ. Իրին երկրում հաստատուած բոլշևիկեան բեթմի մեր կուսակցական գործնէութիւնը ներկայումս որ աւելի անարգ հանգամանքներով է շրջապատուած, քան նոյն իսկ Գոլիցինի եւ սուլթան Արդիւլ Համիդի օրով:

Դ Ր Օ Շ Ա Ս ի բրեւ Հ. Յ. Իշահակցութեան պաշտօնական օրգանը, բնականաբար արտայայտիչը պէտք է լինի այն մտքերի եւ գործերի, որոնք բնորոշում են մեր կուսակցութեան ծրագիրը, կազմակերպական կանոնները, տակտիկ եւ ընթացիկ քաղաքականութիւնը: Քաղաքական, ազգային, ընկերային եւ կուլտուրական կեանքի բոլոր կրեւոյթները ինչպէս Հայաստանում, նոյնպէս եւ արտասահմանում պէտք է լուսարանւին նրա էջերի: Կամաձեւս՝ կուսակցութեան սկզբունքների եւ որոշումնէ, Անհատական ըմբռնողութիւններ եւ սեռակէտներ կարող են երեսուն գալ Դ Ր Օ Շ Ա Ս մէջ այն չափով միայն, ինչ չափով որ, անգամ շատ փորձած եւ շատ լաւ կազմակերպած կուսակցութիւնների մէջ, ամենապարտադրտեսակէտներն իսկ երբեմն տարբեր մեկնութիւնների տեղիք են տալիս:

Ճանամեայ դադարից յետոյ, Դ Ր Օ Շ Ա Ս պայտը յոյս է տեսնում այն խորին հաւատով, որ նա մեր ազգային, քաղաքական եւ ընկերային նոր պայմաններում էլ պատուով պէտք է առաջ տանէ նայ ժողովրդի միտքն ու կամքը յեղափոխութեան եւ ընկերվարութեան պահանջների համաձայն կերտելու այն նւիրական գործը, որ այնքան հոյակապօրէն վարել է նա անցեալում: Մեր կուսակցական Մարմինների եւ աշխատակից ընկերների նախանձախնդրութիւնից է կախւած արդարացնել այս համարը, պահելով Դ Ր Օ Շ Ա Ս ը այն փառաւոր արթնութեան վրայ, որտեղից նա աւելի քան երկու թասնամեակ այնքան տիրակնտօրէն իշխել է հայ ժողովրդի մտքի եւ սրտի վրայ:

## Հ. Յ. ԻՇԱԿՑՈՒԹԵԱՆ 10<sup>ր</sup> ԸՆԴՀ. ԺՂՈՎԸ

Քաղաքական անկատու դեպքերի հետեւեղով հինգ տարի է, որ Հ. Յ. Իշահակցութիւնը յարմարութիւն չէր ունեցել զուարիտ իր հերթական Ընդհանուր Ժողովը:

Վերջին Թրգ Ընդհանուր Ժողովը տեղի էր ունեցել Երեւանում, 1919 թ. Հոկտեմբերին, երբ տակաւին կանգուն էր Հայաստանի Հանրապետութիւնը, երբ մեր ժողովուրդը անհամբեր սպասում էր Հայկական Հարցի փերջական լուծման, երբ Հայ քաղաքական միաբը դեռ ուներ յաղթողի հոգեբանութիւն, եւ մեր կուսակցութեան առջև բացուէ էին գործունէութեան յափշտակիչ հորիզոններ: Մենք պատրաստուած էինք փակելու քաղաքական պայքարի առաջին շրջանը եւ անցնելու յաջորդին՝ պետական ստեղծագործութեան եւ տրեստական շինարարութեան: Որչեւորութեան, յոյսի եւ անսահման լուսատեսութեան օրիք էին դրանք...

Այդ ժամանակից ի վեր, սակայն, շատ բան է փոխուած: Եւ առաջին ու ամենազգաւոր փառաը այն է, որ Հայաստանը նորից զրկւել է անկախութիւնից, կազմինձոր է դարձած Հարաւի ու Հիւսիսի աշխարհակալ ուժերի ձեռքին եւ նորից ճւճ-ճւճէն եղած՝ ընկել է թրջական ու առական լծի տակ: Մերի Իշահակցութեւն-Հայկական ազատագրութեան այդ միջազգային charte-ը—փոխարինւած է Լօզանի խնդկատակութեամբ... Երեւանեան եւ Բօշնիկի աշխարհակալների օգնութեամբ նորից յաղթողի չօլիք է սուկ կործանաւոր թուրքեան հ, իբրեւ հետեւանք նրա յաղթանակների, Հայ ժողովրդի մի հազարն զանգուծ գործնալ դուրս է քրւած իր հայրենիքից եւ արւած է աշխարհի չորս հովիթն:

Խանգարւած է Հայկական կեանքը ընդհանրապէս: Երկրի ժողովուրդը լուռ տառազուծ է պարտադրւած եւ անհարազատ իշխանութեան ինքնակալական կրունկի տակ եւ իր հանապազօրեայ Հացից դուրս ուրիշ բաների մասին մտածելու ժամանակ ու հնարաւորութիւն չունի Հայ միաբը, ազգային մշակոյթը ամբողջութեամբ անււած է կուլտերտական ժանդարմների հսկողութեան տակ եւ ճգմւած է անխնայ: Մտաւորականութիւնը խեղաւում է պարզեւտարական դիտաւորութիւնի ստեղծած հեղձօցից միջնորդում, անգունանում է եւ խամբում: Նոր սերունդը սիտեմատիկօրէն այլաներում է ու թունաւորում: Նրանից պարտասում են «փովուս» չար կամազօրիկ եւ Հաւատարիմ մարդանքնաններ:

Գալը Երկրի եւ զօգութիւնների միջեւ կտրւած է, եւ Հայաստանի դռները փակւած են, որպէսզի յաւատ արտասահմանից ներս չբերեն ժողովրդի միաբը առաւելու վտանգաւոր գաղափարներ: Երտասահմանում հրատարակւած գրքի ու թերթի մօտքը արգիւծւած է ամենախիտ կերպով: Երկրում հրատարակւած թերթն ու գրքն էլ կամ չի հասնում արտասահման եւ կամ եթէ հասնում էլ է, շատ քիչ է կարգացում, տարօրինակ ուղղագրութեան եւ պարունակած անհեթեթ գաղափարների պատճառով: Եւ Երկրի ու արտասահմանի միջեւ հոգեկան հարրդակցութեան բացակայութեան

Հետեւանքով գաղութաւոյ կեանքը չի կորցանում մանկ բնականն հունի մէջ, ներդաշնակել, կազմակերպել ու յառաջադիմել: Ներքին տնկերջ Հակամարտութիւններ, կազմակերպութեան բարդակալութիւն, ընդհանուր դժգոհութիւն, նախաձեռնութեան օգիտ պակաս, ետական ապրումները աճում, նոր սերնդի յարաճուն ուժացում, ապրումներ անտարբերութիւն — ահա գաղութաւոյ կեանքը ընդհանուր պատկերը: Եւ այս ամենի գլխաւոր պատճառը այն է, որ գաղութների վրա չկայ Հայաստանի բարոյական կոնտրոլը, և այդ քառն ու շփոթը քաջալերում են Հէնց Հայաստանի վարիչների կողմից:

Նոյն շփոթը և՛ Հասարակութեան մտքերի մէջ: Վերագնահատութիւններ, քաղաքական դեպքումներ, մասնավոր որոնումներ, օճանց մէջ բարոյացում ու վհատութիւն: Ռմանք շտապում են տեսնել նոր ուղիներ, սերլիցներ ձգում են Եւրոպայի փակելը ռուսական կողմից... Եւ սրա հանդէպ Հայ աշխատաւորութեան անյողողը կամը ազատագրութեան և յամառ դիմադրութիւնն ու պայքարը անկախութեան վերանաճման համար:

Անխնութեան պոլսքը է մղում և Հայաստանի շուրջը, Հրեւիս՝ Ատրիշտում ու Վրաստանում ընդդէմ կարմիր ինքնիշխանի, և հարաւ՝ Քիւրդիստանում, տաճկական բռնապետութեան դէմ «Հանրապետական» թիւրքան շարժական է ամեն նորանոր «յաղթութիւններ» և անխուսափելիորեն, քալլ առ քալլ մտնում է դէպի նոր փուլումներ:

Խաղաղութիւն չկայ և յաղթական ծերացալում: Համաշխարհային պատերազմը՝ իր ոչաւոր Հետեւանքներով փաստօրէն յաղթող ու պարտող չուէց — պարտուելին ամենքը: Պատերազմի դաշտում յաղթողները ապրուելին անտեսութեան և, մոտեւանց, հոգեբանութեան բնագաւառում: Ետկանների խնկարում, արտաճութեան և ներաճութեան տագնապ, արդիւնաբերութեան կրճատում և զործարկութիւն, մղողին մրցութիւն նոր շահաստաններ զբաւելու և վառելիքի ու հում նիւթերի աղբիւրներ ապահովելու համար, փոխադարձ կասկած ու թշնամանք, զարտնի դաւադրութիւններ, ընկերային բարբերի ահաւոր անկում — ահա յետպատերազմեան Դաշնակիցների աննեղաշնակ համերգը:

Այս համատարած քառնի մէջ միակ միտքաբանական ու զգաստացուցիչ կրեւոյթն այն է, որ օրէ ցօր ու ժեղանում է աշխատաւորական զանգուանները դիտակցութիւնը և կազմակերպելու ու միանալու թափը: Սօցիալիստական Միջազգային յարաճուն կարգացումն ու զօրացումը դրան ապացոյց:

Խոչըր գծերով այս էր միջազգային կայութիւնը և մեր ներքին կեանքը, երբ 1924 թ. Նոյեմբ. — 1925 թ. Յունւարին զգումարեց Հ. Յ. Դաշնակցութեան 10րդ ընդհանուր ժողովը, որին վիճակած էր շափազանց դժարին դեր — վերաքննութեան ու հարեւարաբեր նիւթարկի մեր վերջին Հինգ տարիների գործունեութիւնը և նկատի տանելի գործունեութեան ծրագրի: Գուսակցութիւնից դարձ — մեր բարեկամներն ու չէզոք Հասարակութիւնը լարեւած Հետաքրքրութեամբ սպասում էին, թէ ի՛նչ խօսք է ասելու Հայ իրականութեան մեծագոյն քաղաքական կազմակերպութիւնը: Հակաաւարդ-

ները չարանկրթութեամբ գործակութիւններ էին տնւում կողմէ: Երբ շփում այն ակնկալութեամբ որ մեր շարք բում օրհան կ'ունենայ երկպառակութիւն, որից իրենք ևս կ' րաշն:

Հ. Յ. Դաշնակցութեան 10րդ ընդհանուր ժողովը մի իրական մանրանկար էր այլապես երկինքների երբեւ սպաբոյ Հայ աշխատաւորութեան: Պատգամաւորն էին կեղծ երկրից, Պարսկաստանից: Միւրիայից, Եգիպտոսից, Յունաստանից, Բալկաններից, Ամերիկայից և այլն: Օրակ տրքը կարճ մեւած էր բազմակողմանի ու ճոխ: Հաւաքւած էր առատ նիւթ: Պատրաստած էին ընդարձակ գիւտցումներ և մտերացնել լուսարանութիւններ՝ քաղաքական, Հաշական, դատական, կազմակերպական ու ծրագրային հարցերի մասին: Ըյս ընդհանուր ժողովը քաղաքական կուսակցութեան սովորական Համադարձը չէր ստել, այլ մի տեսակ պարլամենտ: Եւ զբաղւեց ո՛չ միայն զուտ կուսակցական հարցերով, այլէ իր անդամներին և մարմիններին կատարած պետական ուղիտասանքը քննութեամբ:

Ընդհանուր ժողովը ահագին աշխատանք կուտղեց: Ի յուճում ստացան ընդարձակ օրակարգի բոլոր հարցերը: Եւ գոհուականութեամբ պէտք է արձանագրել, որ Համադարձութիւնն ու գաղափարական ներդաշնակութիւնը արեւոյ ողին էին նիտներում: Անելի քան երբեք ամենքի մէջ բարք էր կուսակցութեան հզօրութիւնն ու միակամութիւնը: Եւ Հայաստանի պետակցութիւններն ու տարակարծութիւններն առկիւններ էլ չկալին: գարմանայի գուգաղկութեամբ, Երկրի ու սրտատակմանի մարմինների ու Շրջանային Ժողովների ուր լիւծ բոլոր ոլորտները Հիմնական հարցերի վերաբերմամբ համարեա բառառ բառ Համապատասխանում էին միմեանց — պարզ ապացոյց, որ կուսակցութիւնը իր բոլոր մասերով սպրում ու շնչում է գաղափարական միեւնոյն միտքորտի մէջ և ողբերում է միեւնոյն ի գ է ա լներով:

ԱՆԿԱՆ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ.

Առաջին և Հիմնական հարցը, որով զբաղեց ընդհանուր ժողովը, բնականաբար, պէտք է լինէր կուսակցութեան քաղաքական իղէալի ձեւակերպումը և յետագայ քաղաքականութեան որոշումը — ուրիշ խօսքով «Անկախ և Միացման Հայաստան» պահանջի վերականգնումը: Ըյս մղալին նեկայացուցելին մի շարք գիւտցումներ, որոնք հանգամանօրէն քննութեան էին ենթարկում հարցը, և մի քանի նիւտ տեսակ վիճարանութիւններից յետոյ, ժողովը միաձայնութեամբ վճռեց, թէ այսուհետեւ և՛:

«Հ. Յ. Դաշնակցութիւնը կը շարունակէ մէկ պ Անկախ և Միացման Հայաստանի ձեւակերպել վրա:

Անկախ Հայաստանի անեղծունելը պիտի միանան ու անբողջանան մեր հայրենիքին երկու գլխաւոր հաստատութիւններ — ռուսասանայ և քրքիսան — իտղեր այն սահմաններով, որ անհրաժեշտ են մեր երկիրը փաղափակուելու կենսունակ միտար մը դարձնելու և այսպէսով ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնն ու անոր սեփական և՛ մշակութային բարգաւաճումը:»

Վասնզեկից մինչև Մեղրի բոլոր ժողովուրդները տա-  
ւաւ են ու եզովում տիրող կարգերը:

Պնդելով Հայաստանի անկախութեան պահանջը վրա՝ Գաշ-  
նակցութիւնը մեկնում է հայկական միջավայրի առարկայական  
և հեթակայական պայմաններէց: Առարկայօրէն՝ միայն անկախ  
Հայաստանում կարող է համախմբել Հայ ժողովուրդը, արմա-  
ւուէտ լուծել թրքահայ կնձիւը և իր զարգացման համար  
ապահովել լաւագոյն յարմարութիւնները: Ենթակայօրէն՝ Գաշ-  
նակցութեան պահանջը բղխում է Հենց ժողովրդի գիտակցու-  
թիւնէից:

Հ. Յ. Գաշնակցութեան 10րդ Ընդհանուր Ժողովը Հայաս-  
տանի անկախութեան մասին ընդունած բանաձեւով միայն ձե-  
ւակերպել և մի անգամ ևս ուժգործէն յայտարարել է այն, ինչ  
որ տարիներէից ի վեր խոր արմատներ է ձգած Հայ իրակա-  
նութեան մէջ և զնտակցուած պահանջ է Հայ աշխատատեղու-  
թեան համար: Իրրեւ իրատես և կենդանի գործի կուսակցու-  
թիւն, Գաշնակցութիւնը իւրացրել և գործնական քաղաքա-  
կանութեան առարկայ է դարձրել այն, ինչ որ արդէն կեանքն  
է Հասունացրել: Սրա մէջ է մեր կուսակցութեան ոյժը և  
նրա Հետապնդած գաղափարների կ ե ն ո ս ռ և կ ո ռ թ ի Ն Ը Լ:

Ս. ՎՐՃՅԵԱՆ

### ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Ը

ԵՒ

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ Ը

Յայտն է, թէ ինչ վերաբրմունք ունին բոլշեակիները այն  
բոլոր ընկերվարականների հանդէպ, որոնք չեն բաժանում  
նրանց ընկերային և քաղաքական հայեացքները, կամ պար-  
զապէս չեն ուզում նրանց թմբուկով պար դալ: Քանի իշ-  
խանութիւնը իրենց ձեռքին չէր՝ բոլշեակիներն աշխատում  
էին բարոյապէս վարկաբեկել նրանց՝ աշխատատեղական զան-  
գաւծներին ներկայացնելով իրրեւ «սոցիալ-պարտիտներ»,  
«սոցիալ-դաւաճաններ», «կապիտալիզմի վաճառուածներ»,  
բուրժուազիի սպասարկուներ» ևն: Իսկ երբ իշխանութիւն  
իրենց ձեռքն անցաւ՝ նրանք որոշեցին նաև կազմակերպօրէն  
— մինչև իսկ Ֆիզիքապէս ուղեչայել ընկերվարականներին:  
Ընկերվար կուսակցութիւններն ու բանուորական Հաստատու-  
թիւնները լուծած յայտարարեցին, մամուլն ու հրատարա-  
կութիւնները խափանեցին, հազարաւոր և տասնեակ հազար-  
աւոր ընկերվարականներ բանտերը նետեցին և նրանց մէջ  
աչքի ընկածներէից շատերը գնդակահարեցին, քաղցամահ  
եղան, հեռաւոր նահանջներ աքտորեցին կամ կիսաքաղց տա-  
րազրութեան տալտանքներին մատուցեցին:

Այս վերաբրմունքը, ինչպիսի բացատրութիւն էլ տրւի  
նրան, մէկին է և որոշ. — բոլշեակիան կամ խորհրդային  
րէժիմը զնտում է ընկերվարականներին իրրեւ թշնամի բա-  
նակ և նրանց դէմ աւելի մեծ դաժանութեամբ պայքարում,  
քան այլ հասարակական տարրերի դէմ:

Սպասելի էր, որ այս ուղղածից և անվերապահ թշնա-  
մական վերաբրմունքը համապատասխան անդրադարձումս ու-  
նենոր ընկերվարականների շրջանում: Սպասելի էր, որ նրանք  
բացայայտ թշնամութեամբ պատասխանէին այն մարդկանց,  
որոնք գաղափարական հակառակորդների դէմ գաղափարու-  
կան միջոցներով պայքարելու փորձերն ստի և կեղծիքի, հրի  
և ստի ուժին էին դիմում իրենց հակառակորդներին տապա-  
լելու համար: Սակայն իրականի մէջ մենք այլ բան ենք տես-  
նում:—

Մինչև 1920ի կէսերը ընկերվարականները բոլշեակիան  
վայրագրութիւնների հանդէպ ընդհանրապէս կամ լուռութիւն  
էին պահպանում կամ մինչև իսկ արդարացնող վերաբրմունք  
ցոյց տալիս: Բանուոր-գիւղացիական իշխանութեան հաս-  
տատումը լայնածաւալ կայսրութեան մէջ, կապիտալիզմի խոր-  
տակումը, հողերի համախցումը, միջազգային աշխարհակա-  
լութեան դէմ աննահանջ պայքար յայտարարելը, ազգերի  
ինքնորոշման սկզբունքի իրականացումը — այսքան Հոյակապ  
գործերի դիմաց ինչ արժէք կարող են ունենայ գանազան թե-  
րացումներ կամ բռնութիւններ, որոնք, ի դէպ ասած, ան-  
խուսափելի են բոլոր մեծ ու փոքր ընկերային ցեղութիւնների  
ժամանակ: Այսպէս էին արամարանում ընկերվարական զան-  
գուածները 1917 թ-ի հոկտեմբերեան յեղաշրջումից մինչև  
1920 թ-ի կէսերը:

Ճիշտ է. այս ժամանակտիջոցում էլ ընկերվարական  
տեսաբանները երբեմն-երբեմն հանդէս են գալիս բոլշեակի-  
ան յեղափոխութիւնը քննադատողի դերում: Բայց նրանց  
քննադատութիւնները չափազանց զգոյշ և բարեացակամ  
բնույթ են կրում: Նրանց կպատակն էր ուղղութեան բե-  
րել բոլշեակիներին և ոչ թէ նրանց դէմ գրգռում և թշնա-  
մութիւն ստեղծել աշխատատեղական զանգաւծների մէջ: Չա-  
փազանց բնորոշ է այս տեսակէտից Օտտո Բաուէրի — ժա-  
մանակակից ընկերվարութեան ամենակարգաւորն զէմբրից  
մէկի — վերաբրմունքը դէպի բոլշեակիները: Անգամ 1921  
թ-ին, երբ ընկերվարական շրջաններում շատ բան էր փոխ-  
ուիլ բոլշեակիզմի գնահատութեան տեսակէտից, նա իր երկերից  
մէկում՝ «բոլշեակիան նոր տնտեսական քաղաքականութեան  
անկայունութիւնը վեր հանելով՝ գրում է. «Ռուս բոլշեակի-  
ները իրենց «նոր կուրսի»-ի այս վերլուծութիւնը պիտի թիւրմ-  
բանեն անուշուր իրրեւ «թշնամիք» դէպի առասաց յեղափո-  
խութիւնը և ներկայացնեն իրրեւ «գաւաճանութիւն» երա  
հանդէպ: Գա նրանց իրաւունքն է: Նրանք կեանքի ու մահ-  
ւան կալցարի մէջ են արտաքին և ներքին հօրաբազմի թըշ-  
նամիների դէմ: Այսպիսի պայքարի մէջ գտնուող պատրանք-  
ների պէտքը ունի: Լիակատար լաղժանակի Հնարաւորութեան  
պատրանքը ուժի աղբիւր է ինչպէս պատերազմի, նոյնպէս  
և դասակարգային կռի միջոցին, և կուղիներին մեծ արիւ-  
թիւն և մեծ տոկոսութիւն է տալիս: Նա հոգեբանական  
նախադրեան է հանդիսանում կռի մէջ «դիմանալու» համար:  
Մեզ չի վայելել հզանաքի ենթարկել կենսական պատրանք-

\* Der « Neue Kurs in Sowjetrussland » von Otto Bauer.  
Wien 1921

ներն այն մարդկանց, որոնք կրակի մեջ են գտնուում, քանի որ մենք հեռու ենք գնդակներից»։ Ի՞նչ համեմատություն այս քննադատության և ընկերվարականների դեմուրդը ամեն հայհուցաբանությունների միջև, որ 1917ից ի վեր այնքան աժան գնով ցուցադրուում է բոլշևիկեան բուրժուականներում...

Սակայն ժամանակի ընթացքում, երբ պարզեց բոլշևիկեան յեղափոխության և խորհրդային ռեժիմի բնույթը, ընկերվարականների այս բարեացակամ վերաբրմունքը նրանց հանդէպ փոխուեց։— Բոլշևիկեան յեղափոխության առաջ իրական արդիւնքներն ասելի պերճօրէն քան որ և է հեղինակաւոր վկայութիւն եկան ասելու ամենալատաստե ընկերվարականներին անգամ, որ այն, ինչ կատարուում է խորհրդային երկիրներում, ոչ մի կտպ չունի ընկերվարութեան հետ։ Նրանք սկսեցին կուսակ, ճիշտ է երկար տասնամեակներէջ յետոյ և իրական գրաստերի ճնշման տակ, որ աշխարհու ոչ մի անկիւնում բանուորներն ու զիւղայինները այնքան իրաւարկուած չեն, որքան «բանուոր-զիւղայական» պետութեան մէջ, որ բոլշևիկները որդեգրած կողպուտի և թալանի քաղաքականութեամբ այդ պետութիւնը գնում է ոչ թէ՛ գէպի ընկերվարութիւն, այլ ղէպի տնտեսական կեանքի լիակատար բաշքայուում և ժողովրդական գանգաւների թշուառացում, որ բոլշևիկները շուկայից յայտարարութիւնները յօքում մանր ազգերի պատասխանութեան ոչ այլ ինչ են, բայց ինչ գունդակ խաճեր՝ այդ ազգերին բոլշևիկեան աշխարհակալութեան յորձանքի մէջ անհետ համար, որ խորհրդային երկրներում հաստատուած բռնակալ կարգերը այլ նկատուում չունին, բայց եթէ ժողովրդական գանգաւների վրայ բոլշևիկեան շեֆերի իշխանութիւնը անասուն պահելու մտահոգութիւնը էր. ևն.

Մինչև Կոմունիստ Միջազգայինի երկրորդ համագումարը (1920 թ. Օգոստ. 1—6) ուր որդեգրեան լինիեան նշանաւոր 21 կէտերը, որոնք պէտք է ուղեցոյց հանդիսանային ընկերվար կուսակցութիւնները և նրանց գաղափարական ազդեցութեան տակ գտնուող բանուորական կազմակերպութիւնները պառակտելու համար, վերաբրմունքի այս բեկումը զգացուում էր զիւստարապէս այն կուսակցութիւնների մէջ, որոնք հուատարիմ էին մնացել Երկրորդ Միջազգայինին — ինչպէս օրինակ անգլիական Լէյբլը Պարտիէն, Գերմանակ Սոցիալ Դեմոկրատիայի մեծամասնութիւնը, Բելճիքայի, Սկանդինաւեան երկիրների. Հոլանդիայի և մի քանի այլ երկիրների կուսակցութիւնները։ Վերոյիշեալ համագումարից յետոյ, երբ բոլշևիկները մի կողմից սկսեցին վճռական թափով իրենց քայքայիչ աշխատանքները կատարել անխտր բոլոր ընկերվար կուսակցութիւնների մէջ, իսկ միւս կողմից պատասխանական արկածներ ճրահելու եւրոպական այլ և այլ երկրներում, Խառնակ հազարաւոր բանուորների կտորածի պատճառ դառնալով՝ նոյն վերաբրմունքը, ճիշտ է ասել մեզ և վերապահ ձեւով, ծայր տեյց և այն կուսակցութիւնները մէջ, որոնք իսկի էին իրենց կալու Երկրորդ Միջազգայինի հետ, ինչպէս օրինակ անգլիական Սնկլախ Աշխատարական Կուսակցութիւնը, Ֆրանսական Ընկերվար Կուսակցութիւնը, Գերմանական Սնկլախ Ընկերվարականների Կուսակցութիւնը, Աւստրիական Սոցիալ-Դեմոկրատիան ևն, որոնք յետագային միացան Վիէնայի (2 ½ յորժորժող) Միջազգայինի մէջ։

Պէտք է նկատել սակայն, որ այս հակաբոլշևիկեան տրամադրութիւնը ոչ առաջին խմբակցութեան և ոչ էլ մանաւանդ երկրորդի մէջ երբէք այնպիսի սուր բնույթ չտաացաւ, որ խորհրդային ռեժիմը բունի միջոցներով տապալելու հարց դրոււմ էր։ Սրա պատճառները երկուս են։ Ընկերվարականները պատճառական ին է բջիլ առ վ դեռ շարունակուում էին բոլշևիկներին իրենց գաղափարակիցները համարել։ Միայն են ըմբռնեց բոլշևիկները ընկերվարական յեղափոխութեան նախադրեալներն ու մեթոտները, սակայն վնասներ են առաջանում այդ ռիսկներին բանուորական գործի համար, բարոյական սալթաբուրի մէջ են ընկնում նրանք իշխանութիւնը իրենց ձեռքը պահելու մտահոգութիւնից մզւած — այս բոլորը ճիշտ է։ Բայց ճիշտ է նաև այն, որ նրանք մեր երէկայ ընկերներն են և զապափարակիցները ընկերվարութեան վերջնական նպատակի հարցում։ Ինչպէս կարելի է նրանց դէմ գէնք բարձրացնել, անգամ եթէ նրանք, պայքարի տաքութիւնից մոռնեան, մեր դէմ գէնք բանեցնելու յիմարութիւն են երեսան բերում։ Ինչպէս կարելի է այդ յիմարութիւնից ազրուած՝ հրաժարել զապափարական հակաակորդները դէմ զապափարական միջոցներով պայքարելու առանդութիւնից, որ միշտ տիրական է եղել ընկերվարական ընտանիքում և այնքան բարձրաւոր ժողովրդական գանգաւների իրաւացութեան բարձրացնելու տեսակէտից։ Այսպէս են զգում կամ մտածում ընկերվարականները և դա առաջին պատճառն է հանդիսանում, որ նրանք խորհրդային ռեժիմը բունի տապալելու հարցը չեն գնում իրենց առաջ։ Երկրորդ պատճառն այն է, որ ընկերվարականները երկիւղ ունին, թէ բոլշևիկները բունի տապալմամբ իշխանութիւնը խորհրդային երկրներում կանցնի միապետականների կամ առհասարակ յետադիմականների ձեռքը, որ ոչ միայն անձայր արխանհեղութիւնների գուռը կը բանայ այդ դժբաղդ երկրների համար, այլ և, յուսալքելով բանուորական գանգաւաններն ամենուրեք, համաշխարհային ընկախունի ազգաւղան կտայ։

Ճիշտ են այս նկատուումն ու երկիւղը թէ ոչ — դա այլ հարց է. փաստն այն է, որ նրանք մինչև օրս զապիչ դեր են կատարել ընկերվարականների հակաբոլշևիկեան տրամադրութիւնների մէջ։ Նրանց պատճառաւ շատ ընկերվարականներ ոչ միայն մերժում են բոլշևիկեան ռեժիմը բունի տապալելու միտքը, այլ և պատարաստակամութիւն են յայտնում գործով օգնելու բոլշևիկներին, եթէ արտաքին ուժերը այդպիսի տապալման ծրագրներով միջամտելու լինին խորհրդային երկրների գործերին։

Այս պատարաստակամութիւնը, որ ուսուլեհական պատերազմի ժամանակ գործնակածօրէն արմէքարուրել էր՝ արդէն այն վճռական զիմարութեամբ, որ մի շարք երկրներում երեսան բերին բանուորները Ֆրանսական ռազմամիջքը դէպի Լեհաստան փոխադրելու գործում՝ համապատասխան՝ ձեռակերպութիւն տաացաւ համարիչ համարիչ մարին, (1923թ. Մայիս) բոլշևիկներին նկրած բանաձեւի մէջ։ Այդ բանաձեւը դատապարտելով հանդիմ, որ բոլշևիկները պառակտելով բանուորական կազմակերպութիւնները ամենուրեք ենցուկ են հանդիսանում ընկացիայի, որ նրանք նուսնել են Հայաստանը և Վրաստանը և որ նրանք իրենց աէնօրով արդարացնում են

կապիտալիստական կառավարութիւններ կողմից կիրարկող տնօրէր այնուամենայնիւ կոչ է անում ընկերվարական կուսակցութիւններին վճռապէս դիմագրուել կապիտալիստական կառավարութիւններին բոլոր փորձերին, որոնք երեսան կգան զինւած միջամտութեամբ, կամ բոլորով կամ բոլորով խորհրդային կարգեր տապալելու նպատակով:

Այս բանաձեւը ամենեւին չէր զոչացնում ուս սոցիալիստ յեղափոխականներին և սոցիալ դեմոկրատներին: Նրանք պահանջում էին բաշխելով և խորհրդային բեժմի դատաւարութիւնը աշխարհի վճռական ձեւով, որ այլեւ երբ և իցէ տեղիք չմտն ենթադրելու, թէ ընկերվարութեան և նրանց միջև որևէ, թէլուզ ամենահեռուոր կապ գոյութիւն ունի կամ կարող է ունենալ: Բանաձեւը մշակող յանձնախումբի նիստին ուսանող տարացած ասում էին, որ իրենք երեւելով ընկերվարութեան սկզբունքներից՝ մեռնական և կեանքի պայքար են մղում բոլշեւիզի դէմ, և պահանջում էին պարզ ու կորուսկ անել իրաւացի է այդ պայքարը, թէ պէտք է զնալ համաձայնուելու կամ համակերպելու բոլշեւիզիներին: Համազումարը այս գործի տակ ստիպուած երաւ ընդունել մի լրացուցիչ բանաձեւ ևս, որի մէջ ձեռտ է, բաշխելով և խորհրդային բեժմը դատաւարութեան են շատ աւելի վճռական արտայայտութիւններով, քան առաջինի մէջ, բայց նորից չետ է մղում արտաքին միջպնտութիւնների քաղաքականութիւնը:

Վրացական ապստամբութիւնը (1924ի Օգոստոս) առիթ դարձաւ խորհրդային բեժմի հանդէպ որդեգրած այս վերաբերմունքը նոր հարցարարութեամբ բերելու Ընկերվար Միջազգայինի առաջ: Ընկերվարական մի կուսակցութիւն (Վրաց Ս. Դեմոկրատիան) փորձ էր արել զինւած ուժով տապալելու խորհրդային բեժմը իր երկրում և փորձը վերջացել էր անյաջողութեամբ՝ ծանր արեւահազոտութիւնների տեղիք տալով: Ի՞նչ պէտք է լինէր Միջազգայինի վերաբերմունքը արահանդէպ Ձանազան երկրների ընկերվարական կուսակցութիւններ իրենց համակարգին էին յայտնել այս առթիւ Վրաց Ս. Դեմոկրատիային նրա կրած ծանր կորուստների համար: Սրանով նրա ապստամբական ձեւերակը, այսինքն խորհրդային բեժմը բռնի ուժով տապալելու նրա փորձը, անուղղակի խրախուսի էր արժանանում: Այս փաստը ինքնին անհրաժեշտ էր զորձնում վրացական ղեւարի հանդէպ Միջազգայինի դիրքը ճշտել, անկախ այն հանգամանքից, որ հազարաւոր մարդկանց կտորոմծի քովից Միջազգայինը լուսութեամբ անցնել չէր կարող: Եւ ահա Գործադիր Կոմիտէի Լեոնտիի գումարումին (1924 թ. Հոկտոմբեր) վրացական ապստամբութեան հարցը քննութեան է դրւում: Այդ առթիւ Փրկիրիի Աղէբը, որ իբրեւ 2 ½ Միջազգայինի հիմնադիրներից մէկը մինչեւ վերջերս զոնէ բոլշեւիկների հանդէպ մեղմ վերաբերմունք ունենալու կողմնակից է եղել, առաջարկում է մի բանաձեւ, որի մէջ նա իր վրդավունքը յայտնելով հանդերձ բոլշեւիկների թափած արեւնի համար՝ անուղղակի դատապարտում է արդատութեան փորձերը նրանց դէմ, ինի այդ Վրաստանում թէ այլուրեք Ալլէրի այս արտամարտութիւնը արձադանք է գտնում մասնաւորապէս: անգլիական Ասիայի Աշխատաւորականների հուսակցութեան կողմից, որի օրգանը — New Leader — զեւ մինչեւ Գործադիր Կոմիտէի գումարումը վրացական արեւնի համար

պատասխանատու էր յայտարարել ոչ միայն խորհրդային իշխանութիւնը այլեւ Վրացիներին:

Ալլէրի բանաձեւի և ժողովականներից մի քանիսի արտայայտութիւնների մէջ միտումն նկատելով ուս ընկերվարականներին բաշխելիների հանդէպ խաղաղ պայքարի տակտիկ հարկադրելու՝ սոցիալիստ յեղափոխականների ներկայացուցիչը յայտարարում է այդ վերաբերմունքն անընդունելի իր կուսակցութեան համար: Ինչպէս որ Միջազգայինի մտքովն անգամ չի անցնում պարտաբերելու, օրինակի համար, զերմանական Սոցիալ-Դեմոկրատիային կամ անգլիական Լէյբլը Պարտիին իրենց երկրներում այս կամ այն տակտիկին հետեւելու, այնպէս էլ նա ուս ընկերվարականների պէտք է ձգէ խորհրդային բեժմի դէմ՝ պայքարի ձեւերը մշակելու գործը: Դրա հետ միասին նա հարկ է համարում ի լուր ամենից յայտարարելու, որ քանի բոլշեւիկները չեն հրաժարել բռնութեան քաղաքականութիւնից և խաղաղ, զազափարական պայքարի հնարաւորութիւնից զրկած կպահանջ իրենց հաւկանորդներին՝ վերջիններս ազատ պէտք է լինին նրանց դէմ կիրարկելու այն բ ո լ ո Ր միջոցները, ինչ որ իրենք անհրաժեշտ կնկատեն բռնաւորների իշխանութիւնը խորտակելու համար:

Սրա վրայ Գործադիր Կոմիտէն օրոշում է իր յաջորդ գումարմանը օրակարգի մէջ զնել խորհրդային բեժմի դէմ կիրարկելիք ընկերվարական տակտիկ խնդրը, իսկ Ալլէրի բանաձեւի փոխարէն ընդունում է մի նոր բանաձեւ (յանձնախմբի մշակած) որի միջոց զուրս են հանւած այս տակտիկին վերաբերել մտերը:

Գործադիր Կոմիտէի յաջորդ գումարումը տեղի ունեցաւ Բրլեսերում այս տարւա Յունւարի 2-6 ին: Օրակարգի մեկն էր կազմում այս ընկերվարական տակտիկ խնդրը: Սրա համար պատրաստւած էին մի քանի գեղուցումներ: Սպաւում էին բուռն վիճարանութիւններ, սակայն նրանց վախճանը կանխաւ որոշւած էր համարում, քանի որ բացի եւրոպական բոլոր խոշոր կուսակցութիւններից, որոնք խորհրդային բեժմը բռնի ուժով տապալելու դէմ էին, հակառակ էր դրան և ուսաց Սոցիալ-Դեմոկրատիան, որովհետեւ բռնի տապալման հետեւանքը պէտք է լինի, նրա կարծիքով, ապրտակ կամ սեւ հակաշեղափոխութեան յաղթանակը խորհրդային երկրներում:

Սակայն մի կտրեւոր հանգամանք եկաւ միանգամից խառնելու բոլոր հաշիւները: Ինչպիսի այն է, որ օրակարգի այս կէտի մասին զեկուցում էր ներկայացրել Կարլ Կաուցիին, և կարելի է ստել ճիշդ այն մտքով, ինչ մտքով ընկերվարական տակտիկը ըմբնում էին ուս սոցիալիստ յեղափոխականները: . .

Կաուցիու զեկուցումը կտրելի է ամփոփել հետեւեալ թեգրի մէջ:

ա. Պէտք է մէկտի նետել այն ըմբնումը, թէ որ եւ է զաղտփարական կապ կայ բոլշեւիկների և ընկերվարականների միջեւ, և այս տեսակետից նրազազայութիւնները բոլշեւիկների հանդէպ աւելորդ են:

բ. Այն երկրները, թէ բոլշեւիկներին բռնի ուժով տապալելուց յետոյ հակաշեղափոխութիւնը կանցնի իշխանութեան զուրկ:

անհիշէ. նախ՝ Հակոբեղափոխութեան համար հիմք չկայ խորհրդային երկրներում, և ապա՝ ոչ մի իշխանութիւն չի կարող աւելի՛ Հակոբեղափոխական լինել, քան ինքը խորհրդային իշխանութիւնը:

գ. Յանձնարարելի չէ, որ ուռու ընկերվարականները գէնքի դիմեն բաշխելիներին խորտակելու համար պարզ այն նկատմով, որ բաշխելիները իրենց զօրքով և ոտորկանութեամբ շատ աւելի զօրեղ լինելով՝ կ'շարժեն նրանց: Սակայն եթէ ունէ արտաքին պատերազմ լինի, կամ կարմիր բանակի մեջ ապստամբութիւն ծագի և կամ նման մի այլ բարեպատե՛հ Հանրամանք բաշխելիներին գէնքով տապալելու հնարաւորութիւն ստեղծի ընկերվարականների համար՝ նրանք ոչ միայն իրաւունք ունին, այլ և պարտաւոր են գէնքի դիմելու:

դ. Մինչ այս Հանրամանքների առաջանալը Միջազգայինի յարձակուողականութիւնները պարտաւոր են իրենց կուռավարութիւնների միջոցով՝ ձեռնամերձ գործադրել բաշխելիների վրայ՝ նրանց գոնէ մասնակի զինւթների բերելու նպատակով:

Եյս թեղեբը, իր անաւարկելի չհեղինակութեան հետ միասին միճաբանական նժարներից մէկի մեջ նետելով՝ Կառուցելին, ինչպէս սասցինք, շփոթ դրութիւն ստեղծեց Գործադիր Կոմիտէի մեջ: Վերջինս բարւոջ համարեց, ներքին մաքաւառութիւնը կանխելու համար, յետաձգել այդ խնդրի քննութիւնը: Թէ մինչև երբ—չգիտենք:

Ետտեմն սպատում են, թէ Միջազգայինի յառաջիկայ համագումարում՝ (1925 թ. Օգոստոս) առիթ կը լինի նրանով զբաղուելու: Մենք, ճիշտն ասած, դրա կարիքը չենք տեսնում: Ռոյզվեստը այն, ինչ որ ձեռնական տեսուկէտից դեռ իբրեւ «Հարց» է ներկայանում՝ միանգամայն լուծւած վիճակ ունի աշխատաւորական զանգուածների գիտակցութեան մեջ: Վերելու առաջ բերած էւօլուսիոնը, որ ընկերվարական միտքը 1918ից ի վեր կրել է այս խնդրում, պարզ արտացոլումն է Հանդիսանում՝ աշխատաւորական զանգուածների տրամադրութեան մեջ կատարուած փոփոխութիւններին 1918 թ.ին չէր կարելի որևէ բանաւորական ժողովում երկու խօսք սակ բաշխելիների կամ խորհրդային կարգերի դէմ, առանց սուղւելու: Այսօր նոյն ժողովներում չի կարելի խօսք բանալ յօգուտ բաշխելիների առանց agent provocateur նկատուելու...

Աշխատաւորական զանգուածների համար այլևս ինչպիսի չէ, թէ արեօք ընկերվարականները իրաւունք ունին ըռնի ուժով ապակուելու բաշխելիեան բէմիմը թէ ոչ: Այդ իրաւունքը վաղուց է նկրագործւած այն անհամար զոհերի արիւնով, որ թափել են բաշխելիները և այն անուր տանջանքներով, որ կրում են նրանց կրօնկի տակ ընկած ժողովուրդները: Աշխատաւորական գիտակցութեան մեջ հարցը ներկայումս այսպէս է ձեւակերպւում. ուժերը բաւարար և պայմանները նպատաւոր են, բունակալների լուծել թօթափելու համար: Իսկ այսպիսի Հարցերը պարզ է, որ համագումարների մեջ չէ, որ պիտի իրենց լուծուած ստանան...

Ա. ԶՄՄԱԿԵԱՆ

## ԹՐՐԱԿՆԸ ԶՐԹՈՒՄԸ

Թուրքիան այն երկրներէն է, ուր ազգամիջեան կռիւները անպակաս պիտի ըլլան: Անշուտով է այդ երկրին խաղաղ զարգացումը և անբնական ու խախտւած թուրք ազգին իշխանութիւնը այս կամ այն ժողովուրդի վրայ: Այս ճշմարտութիւնը անգամ մըն ալ հաստատուեցաւ վերջին անցուզարձեքով:

Շատ հին անցեալը քրքրելու պէտք չկայ: Մօտ հարիւր տարի առաջ Յունաստանի բաժանումը տեղի կ'ունենար մեծ կայսրութիւնէն: Անկէ յետոյ իրարու ետեւէ ազգեր ու ցեղեր արեան ձաճքով փրկուեցան թրքական ճիրաններէն: Գարսոսդն ու Սերպիան, Ռումանիան և Պուլկարիան, Եգիպտոսն ու Հիճազը, Օմանն և Նէջմը, Աբասիան, Իրաքն ու Անդր-Յորդանանը, Պաղեստինն ու Սուրիան որոնք Օսմանեան Կայսրութեան անբաժան մասերը կը կազմէին, այսօր առանձին, ինքնիշխան պետութիւններ կը ներկայացնեն: Հոկոյտական կայսրութեան կործանումով, ոչ միայն նոր ազգեր չարութիւն կ'առնէին մոխիրներու մէջէն, պատմութեան և քաղաքակրթութեան ճառագայելու համար, այլ և Թուրքիան կը նկատուէր գէշ մը, դիակ մը, որմէ իրենց բաժինը ստանելու կոչուցին աշխարհակալ պետութիւնները: Եսթոնի բաժինը կ'իյնար Ռուսիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիայի և ուրիշներու, որոնք Օսմանեան կայսրութիւնէն խնցիլն Իրիմն և Անգլիովկասը, Միջերկրականի և Արքիպելագոսի բոլոր կղզիները, Ափրիկեան գագութները, Եգիպտոսը, Տրիպոլիսն և Պենակոպին, և եւրպական Թուրքիան, սահմանը բերելով մինչև Էտիոպի: Թուրքիան որ ժժ՞րդ զարու սիղլեները ունէր մօտ 4 միլիոն բն. քիլոմիդը տարածութիւն և այսօրուայ հաշւով մօտ 85-90 միլիոն ազգաբնակչութիւն, կրճատուած էր քանի մը անգամ և նախքան Ընդհանուր Պատերազմը ունէր 2,300,000 ք. քիլոտարածութիւն 21 միլիոն ազգաբնակչութեամբ: Լօզանի ժողովէն իբրև «յաղթական» զուր բկած Թուրքիան կորսնցուցած էր մեծագոյն մասը իր հողերուն և ազգաբնակչութեան, ձեռքը պահելով միայն 750,000 քառ. քլ. տարածութիւն, առ առաւելն 10 միլիոն ազգաբնակչութեամբ: Լօզանի այդ գլաղթականիսն ալ, աւելի քան 60% կրճատելով երկրին այդ գլաղթականիսն ու ազգաբնակչութիւնը, եկաւ հաստատելու պատմութեան հին վճիռը.— իրերու բնական ընթացքով, մեռնելու դատապարտուած է այդ պետութիւնը: Լօզանը պարզապէս յետաձգեց վճիռը:

Այս վերլուծումները անհրաժեշտ են, հասկնալու համար ոչ միայն Թուրքիոյ անցեալը, այլ և սպագան: Այսօր Թուրքիոյ առջև սուր կերպով դրուած է քրդական հարցը: Թիւրք ժողովուրդը իր հո՛ծ զանգուածներով խորթ կը թուրք Թուրք արեւ. պետութիւնը: Ան երբեմն կրաւորական է, բայց յաճախ գէնի ձեռքին կ'ըմբոստանայ իշխանութեան դէմ և կը ջանայ այս կամ այն զբօշին տակ կազմաւուծել Թուրք պետութիւնը և իրեն համար սահեղծել ինքնուժար կամ անկախ վիճակ:

Անոնք որ մտակն չեն ձանչնար քիւրդ մտայնութիւնը և

Քուրբիոյ ձգումը, լաճակ կ'իյնան թիւր բացատրութեանց մէջ, քրդական վերջին ըմբոստութեանց պատճառներու մասին: Եստեղ կը կարծեն թէ Քիւրդերու ապստամբութիւնը և անոնց պահանջները արևատական հանգամանք ունին և չեն բխիր քիւրդ ժողովուրդին բնական իրաւունքներէն, թէ անոնք արդիւնք են այս կամ այն բէկին, այս կամ այն կիւրճաւորին քմահաճոյքին, և ոչ թէ բնական հետեւանք թուրք կառավարութեան յոռի վարչութեան: Ըստ իրենց այ կան թէ արտաքին թիւադրութեանց և մեքենայութեանց հետեւանք են և ոչ թէ բնական շարունակութիւնը: Քուրբիոյ կազմաւորման, որ անընդհատ կը տեւէ:

Ըստ անմիջապէս որ քրդական շարժումները մասնակի երեւոյթներ չեն և ոչ ալ նորութիւն: Անոնք յարեւմտան են մինչև հիմա եղած բազմապիսի ապստամբութեանց: Ինչ պատճառներ և որ Եստեղ առիթն 13 ժողովուրդներու ապստամբութեան և անոնց անջատման, նոյն պատճառները տեսելով յառաջ բերին քրդական հարցը և ապստամբութիւնը: Եթէ բազմատեղ քրդական պահանջները, ապստամբութեան շարժումները, բնական չեն, Արաբիոյ և նոյն իսկ հայ յեղափոխականներու պահանջներուն և շարժումներուն հետ, միայն մանրամասնութեանց մէջ տարբերութիւն պիտի տեսնուի: Գլխաւոր հիմքը յար և նման են: Ասոր պատճառը ոչ թէ այն է որ այլ այլպէս ժողովուրդները նոյն տեսակ կ'ընթացանք: Ք ճրագրով առաջնորդուած են, այլ որովհետև միեւնոյն հայրամանքները կրողով Քուրբիոյ կողմէ, նման հակադրեցութեանց, ինքնապաշտպանութեան մղուած են: Ինչպէս բնութեան մէջ ծանրութիւնը, ճնշումը դիմադրութիւն յառաջ կը բերին, այնպէս ալ թրքական հայրամանքներէն և ճնշումներէն կը ծագին ինքնապաշտպանութեան և դիմադրութեան նոյնա: նման փորձեր, որիչ խօսքով ըմբոստութիւն, ապստամբութիւն:

\* \*

Մասնաւորելով մեր խօսքը Քիւրդիստանի վրայ, տեսնենք թէ ինչ հիմնական քաղաքականութիւն է ունեցիր և աւել թուրք պետութիւնը այդ կիսակիրթ ժողովուրդին հանդէպ:

Քուրբի պետութեան հիմնական սկզբունքն է եղած, բոլոր ազգերն ու ժողովուրդները ստրկացնել և վարել Քուրբ քաղաքի և դիւրուր և փոյնի գործած ժողովուրդին ձեռքով, Քուրբերը իրենց սուլթաններով, իբրև ժողովուրդի Եստեղի, և պաշտպանը սիւննի աղանդին, ուզեր են որ բոլոր կրօնքներն ու դատականքները չքանան և տեղի տան իրենց առջեւ. յետոյ, յայտարարելով թէ Քուրբիոյ տէրն է թուրք ժողովուրդը, փորձեր են բոլոր ազգերն ու ցեղերը զրկել իրենց ազգային իրաւունքներէն և թրքացնել կամ չքացնել: Քուրբ ժողովուրդը Քուրբիոյ սահմաններուն մէջ, կարծած իր բուն հայրենիքէն՝ Միջին Ասիայէն և Կասպից ձորի առաջաճէն, ուրիշ եկած է Քուրբիա և ուր դեռ կան իր ցեղակիցները, 20 միլիոնէն աւելի, կը պահանջէ որ զիրենք անջատող ոչ-թուրքական ցեղերն ու ազգերը—Պարսիկ կամ Քիւրտ— իրեն ձմաբայ տան. կամ ձուլուին իր մէջ և կամ մեռնին, որպէսզի իրականանան իր համաթուրանական. մեծ երազները և 6—7 միլիոն Քուրբերու փոխարէն տեսնուի մեծ ընտանիքը թուրքական 30—40 միլիոնի, Միջին Ասիայէն մինչև Կասպիոյ ափերը:

Այս այս հիմնական ձգտումներն են պատճառը քրդական ապստամբութեան ինչպէս անցալին, նորիպէս և ներկայիս. ասոնք են որ շարունակ արիւնահեղութիւն և անվերջ կռիւներ կը լարուանեն Առաջաւոր Ասիոյ մէջ:

Քուրբիոյ այս հիմնական քաղաքականութիւնը դրժագրուած է Քիւրդիստանի հանդէպ ինչ օրերէն մինչև այսօր, երբեմն խիտ և արագ, երբեմն ջողարկուած և դանդաղ, նայելով ներքին և արտաքին կացութեան: Ներքին կացութեան մէջ մեծ դեր է կատարած հայկական խնդիրը: Քուրբիոյ համար հայկական խնդիրը նոյնքան և աւելի վտանգաւոր կը համարուէր քան քրդականը: Հայ ժողովրդի ազգային գիտակցութիւնը, բարձր մշակութիւնը, հայկական Դատին միջազգային բնոյթը աւելի հաւանական կը դարձնէին Հայաստանի քան Քիւրդիստանի ստեղծուիլը, և քանի որ դժուար է ձգել այդ երկու երկիրներու սահմանները և երկու ժողովուրդները կ'ազդէին կողք կողք կամ իրարու մէջ խառնուած, թուրք կառավարութիւնը փոխանակ երկուքը մէկէն հարուածելու, հետագիւրած էր «բաժանեա զի՛ տիրեսցես»ի քաղաքականութիւնը: Նայած հանգամանքներուն, թուրք կառավարութիւնը երբեմն կը թուցնէր իր հակահայ քաղաքականութիւնը և կը հետագիւրէր քրդական ձգտումները, իսկ երբեմն ալ, ընդհակառակն կը զարեցնէր քրդական հայրամանքները և Քիւրդերուն միջոցաւ կ'ոչնչացնէր հայ ժողովուրդը:

Որպէսզի պարզ ըլլայ թուրք կառավարութեան գործունէութեան ձեւը և անոր հետեւողական քաղաքականութիւնը— ոչնչացնել ինչպէս Հայերը նոյնպէս և Քիւրդերը — ակնարկ մը նետենք վերջին ժամանակներու խոշոր աղէտներուն և արիւնալի պայքարներուն վրայ:

Քիւրդ ժողովուրդի խոշոր մէկ մասը սիւննի դաւանանքը չունի: Փոքր Ասիոյ, Խարբերի Քիւրդերու մէկ մեծ մասը Նազըպանդի, Գլուպանդի, և Եզլիտիներ են, տարբեր սիւննի աղանդէն և խալճութիւնէն: Այս պարագան կը հակասէր հիմնական քաղաքականութեան, համալրամութեան և խալճութեան գործութեանը. ուստի դեռ հին ժամանակներէ մասնաւոր հայրամանք սկսաւ քրդական այդ աղանդներուն դէմ, մասնաւոր որ սիւննի. Քիւրդերը անտարբեր պիտի մնային իրենց ցեղակից եղբայրներուն ոչնչացմանը: Դեռ տասնըփոյնցերու դարէն կը սկսին Գլուպանդի և Երանիւրու կտորածները, որոնք կը շարունակուին մինչև 19րդ դարու վերջերը. մեծ մասը կը փճանայ և Տէրսիմի լեռներուն շնորհիւ մասամբ կը փրկուի ազանդ իր հաւատացեալներով: Աւելի խիտ հարուած կը ստանան Եզլիտիները, որոնք համարեա կը բնաջնջուին 1830 թուականներուն և ցրուած փոքրիկ բեկորներ կ'ազատին շնորհիւ առևտրական արշաւանքներու և Սինջարի լեռներուն և անապատներուն: Այդ վերելալարումներու ժամանակ, համեմատաբար լաւ էր Հայոց վիճակը, որ ծանրացաւ 1825ին և վերջացաւ հո՞ծ բազմութեան մը զարթոյցէպի Անդրկովկաս, 1828ին, Պասկէվիչի արշաւանքներու միջոցին. 1835ին, Հայերը բաւական տկարացած էին իրենց արտազգայնութիւն մասնաւորապէս էրզրումի վրայէթէն, Եզլիտիները ուժաւորուած եղած, իսկ Գլուպանդի լեռներուն մէջ աճ փոփոխուած: Այդ ժամանակներն աւելի շուրջափնի ուժ կը ներկայացնէին կ'ուժաւոր Քիւրդերը, որոնք կիսականա վիճակ

մը ստեղծեր էին այստեղ և այնտեղ. մանաւանդ Բոհոմսկի մէջ իշխող Պետերբանինքրու տունը ուժ և հերիակութիւն կը ներկայացներ Քիւրդերու աչքին և անհաւանական շէր որ այդ տունը քրդական հարցը դարձնէր յունական հարց: Ուստի կարգը եկած էր բուն Քիւրդերուն վրայ ուշադրութիւն դարձնելու: 1835—1865 թուականներուն կը սկսի Հայածանը Քիւրդերու դէմ, բոլոր աչքի զարնող ընտանիքներու ցրուածով և ոչնչացումով: Ասոնց մէկ խոշոր մասը տարագրուեցաւ. նախատան ուր անոնք պիտի հակակշռէին Հայերը, իսկ իրենք կտրուած ըլլալով հայրենիքէն, պիտի շիրնային իրագործել ազատաստեղ ձգտումները: Պետութեան այդ քայլերը Քիւրդերու դէմ՝ բարենորոգում կը նկատուէին Եւրոպայի կողմէ, քանի որ Քուրքիա ջարդերը, աքսորները, տեղահանութիւնները կը կտարերը Ասորիները և Հայերը Քիւրդերէն ազատելու պատրուակով:

1870ական թուականներուն զրեթէ կտրուած էր Քիւրդերու զուլայը: Ազնուականութիւնն ուժասպառ եղած և տեղի տուած էր թիւրտ շէյխութեան. բայց այդ ժամանակամիջոցին Հայերը բաւական կազդուրուած և յառաջդիմած էին և նշաններ ցոյց կուտային ազատագրութիւն: Կարգը Հայերուն եկած էր նորէն տուժելու, և մասամբ ալ Գզլպազներուն: Ուրեմն, նորէն կը հովանաւորուէին երէկուայ հալածական կոմմանջի Քիւրդերը: Այս անգամ յառաջ կը նետուին շէյխերը, զիստաւորպէս Խիզանի շէյխ Ջալալզդիին առաջնորդութեամբ, և աւերներ կը գործեն Հայաստանի մէջ: Այդ աւերը իր գազաթնակէտին կը հասնի մինչև ութսունական թուականները, ուսուսթուրք պատերազմի վերջնաճալը՝ Քիւրդերը իրենց վրէժը փոխանակ Քուրքիան՝ Հայերէն կ'առնէին, լծափազանցութիւն չէ այդ բարբարոսութեանց նկարագրութիւնը Բաֆֆիի վեպերուն մէջ:

Այդ վայրագութիւնները յանգեցան Պերիլին 61-րդ յօդուածին, որով և Արևելեան Նահանգներու անիշխանութեան պատասխանատու կը հռչակուէին Քիւրդերը, փոխանակ Քուրքիանութեան: 61րդ յօդուածը, երբ մէկ կողմէ Հայկական Խնդիրը կը դարձնէր միջազգային, բայց միաժամանակ միջազգայնորէն Քիւրդերը յանցաւոր հռչակելով՝ Քուրքերուն ձեռքը ազատ կը ձգէր Քիւրդերու հանդէպ: Ըստ իրօք, 1880 թուականներուն երբ Հայերը տկարացած էին, և Եգիպտիները զանցաւելի դարձնէր էին, իսկ Գզլպազները կղկղացած՝ լեռներու մէջ, Քուրքիա նորէն ուշադրութիւնը ուղղել Քիւրդերուն վրայ և ուժեղ հարուած մը տուաւ: Ենչև իսկ Իսթուլլահին որ Հնդկահովիտէն ձեռք բերած էր պարսիկ և թուրք Քիւրդերու վրայ և Քիւրդիստան ստեղծելու ձգտումներ կը ցուցնէր: Իր հետեւորդները արեան մէջ խեղդուեցան և ինչև ու ժառանգները ազատուեցան աքսորով: Մինչ իննսունական թուականներուն Քիւրդերը տկարացնելու քաղաքականութիւնը առաջ կը մղուէր, Հայերը նորէն կենդանութեան նշաններ ցոյց կուտային: Այս անգամ յեղափոխական կազմակերպութիւններն էին որ առպարէզ կը նետուէին: Այդ շրջանին Քուրքիոյ քաղաքականութիւնը դարձնող կը փոխէ ձախման, որպէսզի հայկական խնդիրը թաղէ, առայժմ հանգիստ ձգելով Քիւրդերը: Այս վերջիններէն Համբարէզ դուռեր կը կազմուին: Անոնց ազգային ինքնամանազման, միութեան փորձերը կը խեղդուին, բայց

ստոր ընազները, թայսի և սպանութեանց ախորժակները կը լարուին և առանձնապէս կը խրախուսուի Հայ-քրդական հակամարտութիւնը:

Այս քաղաքականութիւնը կը յանդի Հայ-քրդական բազմաթիւ կռիւներու և Հայկական ազատամարտութեանց, որոնք կը տեսնուին մինչև 1908: Այդ թուականին Հայերը բաւական ուժասպառ եղած էին: Օսմ. սահմանադրութեան վերահաստատումը, Իթթիհատի գալուստը պարզապէս դարձրին շրջան մը եղաւ Քիւրդերը բաւական կազդուրուած և զօրացած էին: Իթթիհատական իշխանութիւնը հետեւողական կերպով շարունակեց պայքերու քաղաքականութիւնը: Ու փորձեց խեղդել ինչպէս Ալեքանդրիներու, նոյնպէս և Քիւրդերու ազգային ձգտումները: Առաջին հարուածը ստացաւ Միլի մեծ աշիւթը և Իբրահիմ փաշան ինչպէս շատ մը քիւրդ առաջնորդներուն հետ: Մինչև 1912 թուականը առիթ Քիւրդերու էին որ կը հայտնուէին. անոնց առջև փակ էին յաւաշղիմութեան ապարեզները: Այդ թուականներուն հայ և քիւրդ տարրերը մօտիկնալու նշաններ ցոյց կուտային: 1912.1913ին շրջանին երկուքն ալ կը հայտնուին: Մեծ Պատերազմին կ'որոշեն նախ բնաջնջել Հայերը, բայց և շին մուսուր Քիւրդերը: Այս վերջինները կը ջարդուին այն վայրերուն մէջ ուր ուժ կը ներկայացնէին: Այդ է պատճառը որ, Վասպուրականի Հայերուն Ֆլասիէ լեռնայ, Ճէվուէթ և Խալիլ փաշաները անհամար կախաղաններ կանգնեցին Ենկիլիւրէն Պիլիլը:

1918-ին պատերազմը վերջացաւ, խաղաղութիւն եղաւ Արևելեան Նահանգներուն մէջ. և իսկական խաղաղութիւն էր, քանի որ Հայերուն ոսկորներն էին մնացել, իսկ Քիւրդերէն շատ քիչ բան: Ամբողջ երկիրը աւեր ու դատարկ: Տեղ տեղ Քիւրդերը կը խանդարէին խաղաղութիւնը: Կնքուեցաւ Սէվրի դաշնագիրը: Այդ անապատ երկիրները խոստացուեցան Հայերուն և Քիւրդերուն: Ինչպէս 1878 ին Հայերուն արուեստը 61րդ յօդուածը, Սէվրի մէջ ևս Քիւրդերուն խոստացան ինքնօրինութիւն:

Այս կերպով քրդական հարցն ալ դարձաւ միջազգային:

\* \*

Ի՛նչ է հանրապետական Քուրքիոյ տեսակետը քրդական հարցի և առհասարակ քիւրդ ժողովրդի մասին:

Քեմալական Քուրքիան առիթ անկեղծ և պարզ է իր քաղաքականութեան մէջ քան իր նախորդ կառավարութիւնները: Ան որդեգրած է իր նախորդներուն ամբողջ քաղաքականութիւնը փոքր ազգերու հանդէպ. միայն սա տարբերութեամբ, որ նախորդներու նման պարտուակներու և բացառութիւններու պէտք չզգար. այլ բացարձակ կը յայտարարէ ի իւր աշխարհի թէ թուրքիոյ ասնամաններուն մէջ միայն թուրքը մեծանաւանութիւն պիտի ունենայ: Ան իսպառ կը ծիտէ քիւրդ ազգութեան գոյութիւնն իսկ, և կը հրաւիրէ զայն թրքանալու, եթէ չուզէր Հայոց վիճակին հասնել: Այս խօսքերը մերը չեն, այլ Ազգային Մեծ Ժողովինը, անոր պաշտօնաթերթին՝ Միջինիթը Միլիթիլը. և այս քաղաքականութիւնը կը գործարարուի յառուի օրէնքներով: Քեմալականներու այս վճռական քաղաքականութիւնը արդիւնք է նաև այդ հանգամանքին, որ ներկայիս Արևելեան Նահանգ-

ներու Հայերը բնաջնջուած ըլլալով, Քուրբիա այլևս պէտք չզգար հաշիւով, խոհմութեամբ շարժելու: Համաժողովականա- նութեան զիւստօր խնդիրաբար, մնացորդ հայ ժողովուրդը գորուած է դէպի հեռուստր երկիրներ և Անգլիոյ կաս, և այժմ մնացած են միայն . Բելաբերը սոսոքական, անգոր և անկիրթ: Ինք լաւ կազմակերպուած ըլլալով, օգտուի կ'ուզէ պատեհ առիթէն, այդ ժողովուրդն ալ սեղանահանելու և կամ ոչնչացնելու համար Այդ պարագային, իր և Քուրբանի միջև կը մնայ միայն պարտիկ ժողովուրդը, թաթարական ծովին մէջ ընկնամ:

Երբ թուրք կառավարութիւնը այդպիսի հետեւողական ծրագիրներ ունի Բելաբերու մասին, ինչ կը մտածեն Բելաբերը: Արդեօք անոք պարզ գիտակցութիւնը ունին այն վը- տանգին որ կը ծրարորի, կ'արծարծուի, և իրենց իսկ մարմ- նին վրայ կը գործադրուի: Կարծենք՝ ոչ չափ ժողովուրդը, որ մշակութիւնով տեղամաստ բարձր է Բելաբերէն, դեռ այսօր իսկ լաւ չի հասկար թրքական ծրագիրներու հիմնական գիճը- ալ ուր կը մնան վաշկատուն Բելաբերը: Այստեղ է Քուրբին յաջողութեան գաղտնիքը: Միշտ եղած են և այսօր ալ կան Բելաբեր վարիւններ, որոնք հասկնալով իրենց ցեղին սպառ- նացող վտանգները, ջանացած են դիմադրուել թուրք մեքե- նայութեանց: Բայց Բելաբերին մէջ աւելի ցեղային բնագոյն է որ կը խօսի: Այդ բնագոյնը շնորհիւ, ան կը բարոյական և Ֆիզի- քական ուժերը հակադրած է թուրք բնաջնջման քաղաքակա- նութեան:

Այս տարի Փետր. 13ին պայթեցաւ քրդական ապը- տամբութիւնը, որ թէև զսպուած, բայց կը շարունակուի փոքր խումբերով և ապստամակային կռիւներով, երկրի այս կամ այն անկիւնը:

Թէ ի՛նչ ծաւալ ունէին շարժումները և թէ այսօր իսկ ի՛նչ կը կատարուի Արեւելեան նահանգներու մէջ, դժուար է ճշդիւ . Բելաբերը լուռ են իրենց ըրածի և քաշածի մա- սին. անոնք օրվաններ շունկն, ոչ ալ կարծես պէտք կը զգան արտաքին աշխարհին հարգողու տնցուգործը: Ապը- տամբութեան վարքերն մէջ չկան օտար թղթակիցներ: Միակ ազգերը՝ Էնկիւրին է, որ բնակոծորէն ինգիրները այնքան պիտի պարզէ, որքան անհրաժեշտ է իր շահուն համար: Բայց այդ տեղեկութիւններն իսկ, Ազգային Մեծ Ժողովի ձաւերը, վարչապետներ Ֆէթիլի և Էսմէթի բացատրութիւնները, պատե- րագմական տանաններու որոշումներն ալ արձանագրութիւն ենրը: ցոյց կուտան որ քրդական շարժումը շատ վրդապիչ հանգամանք ունի Քուրբիոյ համար: Այդ տեղեկութիւններէն կը հասկնար որ ապստամբութիւնը սկսած է Շէյխ Սալիա, Կիւնդի գուտուէն: Երբժամը արաբօրէն կը արածուի դէպի հարաւ-արեւմուտք և դէպի հիւսիս և շարունակ իրարու ետեւէ ապստամբներուն ձեռքը կ'իջնան Ճապաղչուր, Բալու, Լըմէ, Հայի, Հաբու, Արզընի-Մատեն, Ջիւմուկ, Խարբերդ, Վարդո, Խուս, Պալուքը, Մանակգիւրտ, Մուշ, Սաուս, Ալիվան, Բըշերիկ, Յարպին, Մալաթիա և նայիսի մինչև Անեթի գաւառներն ալ նահանգները: Տիրապէքիք քաղաքի գրաւումը քանի մը ժամ կը տէր և շարժումը կ'երկարի մինչև Մարտին և Միտիթի, իսկ հիւսիսէն՝ մինչև Զարբանձաք, սրևմուտքէն՝ մինչև Ակն: Արեւելեան նահանգներէն Վան,

Պիթիա, Սղերդ, Բոհուան, Հէքքեարի և աւելի դէպի արևելք քրդական շարժումներու մասին խօսք չկայ պաշտօնական տեղեկութեանց մէջ. միայն թէ պատերազմական ստեանը այդ շրջաններու վարիչները կը մեզարէ իբրև մասնակից դաւադրութեան և անկախ Բելաբերստան տեղեկու ծրագրին Շէյխ Սալիան առաջ, իր գաւիկն և ուրիշներու հետ մահ- ուան դատապարտուեցաւ Սէյիտ Ապիւլ Գատէրը, որ թուս ըլլալով Շէյխ Իբրաղիմի, մեծ ազդեցութիւն ունի Արե- վելեան նահանգներու, Վանի և Պարտիք Բելաբերու վրայ: Ի բացակայութեան մահուան դատապարտուեցաւ Պէտէր- խանիներու թուսներէն Թալիտ Բամին, որ ազդեցիկ է Բոհուանի և Հէքքեարիի մէջ, և դեռ շատերը ըմբոստութեան ջմանակցող ազդեցիկներէն. դեկալարներէն և մտաւորականներէն:

Այս բոլոր տեղեկութիւնները կ'ապացուցանեն որ ապը- տամբական շարժումը կարծուածէն աւելի մեծ ծաւալ ունէր և կը բուճէր գրեթէ ամբողջ Թարքերի, Տիրապէքիի և նահանգները և Էրզրումի, Իփթիւի մէկ խոշոր մասը, այսինքն այն երկրամասերը ուր կը գտնուին զիւստօրապէս զգա- ցիզուն գործածող և ոչ-սինկ նազդանտի արանդուոր- ները, որոնց ընդհանուր անունն է Զազա-Գըմիկ: Ապը- տամբական շրջանակները կը զիջացած ըլլալով արտաքին աշխարհէն և կապ չունենալով ոչ Իրաքի, ոչ Սուրիոյ, ոչ ալ առուական երկրամասերու հետ, Ֆիզիքապէս անհնար էր որ օժանդակութիւն ոտանային արտաքին աշխարհէն: Միւս կողմ էն, Իրաքի, Պարսկաստանի և Ռուսաստանի անմիջապէս սահ- մանակից որևէն Բելաբերու մտակրտա մալը, կ'ապացուցանէ թէ ոչ խալիֆայութիւնը և ոչ ալ արտաքին թելադրութիւն- ներն են իսկական պատճառները վերջին ապստամբութեանց:

Հասկնալու համար թէ արտաքին յայտը չկային, կը բա- ւէ յիշիլ որ Փրանսական կառավարութիւնը փոխանակ Սու- րիայէն օգնելու այդ փոքրիկ ժողովուրդին, ձամբայ և միջոցներ առաւ Քուրբիոյ: Եւ թուրք զինուորները ցոյցերով անցան Փրանսական հողէն, և Հալէպի վրայով զացին Տիրա- պէքիի և Մարաշին, — շարխայեցու Զազա ըմբոստները: Իսկ Անգլիացիներուն ձեռնպահութիւնը կը հաստատուի սովով որ, ապստամբութիւն շճապատեալ Վանի, Իփթիւի և Հէքքեարիի շրջաններուն մէջ, ուր կեղրոնացած են քրդական համ գան- զուածներ և որոնք Անգլիոյ անմիջական ազդեցութեան տակ են Բուրուլիս աւելորդ է խօսիլ պոլիտիկներու աջակցու- թեան մասին, քանի որ անոնք առաջին օրէն ցանկացող էին Հանրապետական Քուրբիոյ յաղթանակին: Քուրբիը առանց վարանելու գործածեցին Կարսի ձակաւոր զօրքերը, Զազաները հիւսիսէն գարնելու Չիչերիէն, Ռակովզի և միւսները իրենց ձաւելով և յայտարարութիւններով հակադրափոխական օրա- կեցին քերդ շարժումը և յաջողութիւն մաղթեցին: Բէմալի տարին, որպէսզի ան շուտով կտրէ իրենց ինքնութիւնը պաշտպանող այդ լուսնականներուն գլուխները: Երեւի քրդա- կան շարժման դեկալարները բնաւ չէին նայտատեած, որ յանուն ազգերու ինքնորոշման դրօշակ բարձրացնող կարմը- ները, կրնան մէկ կողմէ ձեռք երկարել Ապիւլ-Գէրիթներուն, զանոնք խալիֆայութեան, սուլթանութեան հասցնելու, իսկ միւս կողմէ օգնել և ոչ մայ էնվէրներուն և Բէմալիներուն, ազգերու գոյութիւնն իսկ ոչնչացնելու համար:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ինչ ալ ըլլայ, փաստն այն է, որ Քիւրդերը իրենց շարժման համար ընտրեցին չափազանց անկաստ վայրիկան մը: Երբ քաղաքական այդպիսի անկաստ պայմաններ կային, ինչու պայթեցաւ ապստամբութիւնը. արդօք քիւրդ զեկաժարներ եւ առաջնորդներ այդքան անտեղեկ էին աշխարհէն:

Իրողութիւնը այն է որ, ժողովրդական պոռթկումները կը պայթին յաճախ անհաստեղ կամբէն անկախ, մտնաւանդ երբ զանազը ոսկորին կը հասնի. և այլեւս անկտրելի կ'ըլլայ սպասել յարմար վայրիկանին: Եւ այն ատեն, առաջնորդ կ'ըլլան անոնք որ ամենէն աւելի կը խօսին ամբողջի արտին: Այդ է պատճառը որ շէյխ Սալիս մը յառեկարծ հեղինակութիւն կը դառնայ և ապստամբութիւն կը վարէ, տաք ընդունելութիւն գտնելով ամեն ուղղութեամբ, առանց նոյն իսկ գործնական ծրագիր մը ունենալու:

Բայց ո՞վ փութացուց պոռթկումը Այդ գտտիւր չի պատկանիր քիւրդ յեղափոխական կազմակերպութեանց և անոնց քարոզութեան. որովհետեւ եթէ քիւրդ յեղափոխական կազմակերպութիւններ կան, սաղմային վիճակի մէջ են. ասիկէ զատ, ինչպէս կորելի է փրփակեանով շարքին Քիւրդը, որ կարող չի գտնուի և դուռը կը հասկնայ բարձր սկզբունքները: Այդ պատիւը պէտք չէ տալ հեղինակաւոր բեկերուն և շէյխերուն: Ասոնց կերտնական անձնաւորութիւն դառնալը աւելի պատահականութեան արդիւնք է, և ոչ թէ նախնական կազմակերպութեան: Քոչմայիկ շարժման պատճառութեան եւ բարեխախտ պայթումի թուն մոյլին և թուր կառավարութիւնը, իր նախորդ և ներկայ դասիցներու եւ Ազգային Մեծ Ժողովի թուած ֆաղստակաւորութեամբ:

Այսօր Եւելի Սալիսները կը բռնուին և կախաղան կը հանուին. քիւրդ մտաւորականները կը հաւաքուին և բանտերը կը լեցուին, կախուցու և համար: Այսօր ապստամբութեան թափը կորած է, և միայն փոքրիկ հրոսակաւորներ կ'ապրին լեռներու և ձորերու մէջ, ինչպէս հայկական շարժումներէն յետոյ մեր Արարները, Գէորդ Չափուները: Հարց է այժմ: Այդ շարժումները պիտի կրկնուին, թէ Զափաներու, Քիւրդերու զիտուն եկած հարուածն այնքան շշմեցուցած է, որ այլեւս անհնար է ո՞ր և է եւր շարժում:

Երբ մեկ կողմէ աջի առջեւ բերեց Քուրդերոյ անխելք և բարբարոս ընթացքը, և միւս կողմէ Քիւմանդալէն մինչեւ Արարատ և Ուրմիոյ լիճէն մինչեւ Սեբաստիոյ զոհները բռնած միապագայ զագա քիւրդ ազգաբնակչութիւնը, և նկատեց որ Պարսկաստանէն, Սուրիայէն, Իրաքէն և Ռուսաստանէն քաղաքակրթութիւնը այսպէս կամ այնպէս մուտք պիտի գործէ անմիջական հարեան քրդական շրջաններուն մէջ, պէտք է հետեւցնել թէ իրքական եւր յաղթանակը անպիտակ պարտութեան պիտի վերածուի: Կասաղանները պիտի փրկեն Քիւրդերու դաւանական հակամարտութիւնը, որ կը խանգարէր միացումը իսկ համատարած հայաձանցները պիտի խթան դառնան քիւրդ ժողովուրդի միացման: Աւ այս ճիւղումներով և հայաձանցներով է որ պիտի զարգանայ իսկական քիւրդ յեղափոխութիւնը և ազատագրական պայքարը, չիմուած ոչ միայն բնագոյն, այլ և առողջ գիտակցութեան վրայ: Այդ օրերը արդէն սկսած են, և պիտի շարունակուին:

ՌՈՒԲԻՆԸ

Հայաստանի իշխանութեան հասնելու հէնց առաջին օրից սկսած, Հայ կոմունիստները ամբողջ ուժով նետուցին Դաշնակցութեան վրայ՝ նպատակ գնելով իսպառ ջնջել նրան Հայ իրականութիւնից: «Ֆիզիքական մահ Դաշնակցութեան» նշանախօսը դարձաւ նրանց գործնական քաղաքականութեան ուղեցոյցը: Հայաստանի ու Քապի բանները լեցնեցին Դաշնակցականներով, որոնցից շատերը գոհ գնացին կարծիք տեւօրի: շատերն էլ քշեցին հիւսիսային աքորտավայրեր Դաշնակցութիւնը յայտարարեց օրէնքից դուրս Դաշնակցութեան պատկանելը կամ նոյն իսկ պարզ համակրանք արտայայտելը դուռեց քաղաքական մահացու յանձնարքերի շարքը: Եւ հինգ տարի շարունակ Հայ կոմունիստները քրոնիք թափեցին Դաշնակցութեան գոյութիւնը վերացնելու համար, բայց թէ որքան են յաղողել, ցոյց են տալիս հէնց հակադաշնակցական պայքարի ելինէնքները:

Հայաստանի խոհրդային իշխանութեան մեղաբանները մտածած քիւրդ-շատ ծանօթ բոլոր դաշնակցականները հսկողութեան տակ աւելեցին և բանտարկեցին: Բոլշեւիկները յայտարարեցին, թէ այլեւս Դաշնակցութիւնը գոյութիւն չունի: Փետրուարեան օրերը եկան հաստատելու, թէ, ընդհակառակը, Հայ կոմունիստական կուսակցութիւնն է, որ գոյութիւն չունի, իսկ Դաշնակցութիւնը շարունակում է մնալ Հայ աշխատաւորութեան զանգուածային կազմակերպութիւնը: Փետրուարեան դասից յետոյ բոլշեւիկները դարձան աւելի պզոյշ և հակադաշնակցական պայքարին տւին «դիւստագիտական» բնաւորութիւն: «Ֆիզիքական մահացում» փոխարէն սկսեցին սպառնալ «գաղափարական մահացում»: Եւ որպէսզի հաստատեն, որ Դաշնակցութիւնը սնանկացել է գաղափարապէս, Չէկայի միջոցով սկսեցին «գեկկարացիներ» ստորագրել տալ դաշնակցականներին և այդ գեկկարացիներն էր ծափ և ցնծութեամբ հրատարակել իրենց թերթերում:

Սակայն, այս խաղն էլ դուրս եկաւ շատ վրան բաց. «գեկկարացիները կազմուած էին այնպէս անշնորհք կերպով, որ ամենամիտմիտ մարդիկ անգամ հասկացան կատարած կեղծիքը: Փոխանակ Դաշնակցութիւնը քայքայուցւում էր: «գեկկարացիները ծառայեցին բոլշեւիկներին խայտառակելու: Եւ որպէսզի Դաշնակցութեան հաշիւը մեկ անգամ ընդ միշտ մաքրէի, Հայաստանի Չէկան յղացաւ: «Նախկին Դաշնակցականներին համագումարը», որից յետոյ, Հայ կոմունիստներին համոզումով, այլեւս Դաշնակցութեան հեքքն անգամ չպիտի մնար խորհրդային Հայաստանում:

Բայց այս միջոցն էլ չօգնեց: Ցափաւոր նոր էր լուծւում «նախկիններին» համագումարի ազմուկ-ժողորը, երբ Ա-

Միանիկեանը յայտարարեց, թէ «Դաշնակցական մտայնութիւնը» շարունակում է ապրել Հայ ժողովրդի մէջ երբ կայ մի տեղ «մտայնութիւն», անհուսափելի կերպով գոյութիւն կունենայ և այդ մտայնութիւնը արտասայտող որևէ կազմակերպութիւն։ Սա աշխարհի օրէնքն է, և Բոլշեւիկներն, ի հարկէ, լաւ են հասկանում այդ։ Եթէ կենդանի է «Դաշնակցական մտայնութիւնը», նշանակում է կենդանի է և ինքը՝ Դաշնակցութիւնը։ այս էլ իր հերթին նշանակում է, թէ բոլշեւիկների աղմուկը Դաշնակցութեանմասհան մասին առնւազն անհետեւի է։ Որքան հայ կոմունիստները աշխատում են թաղել Դաշնակցութիւնը, այնքան այս վերջինը դաւնում է աւելի կենսունակ ու ժողովրդական։ Այստեղ պէտք է փնտռել գաղտնիքը բոլշեւիկեան աղմուկի։ Սրանով է բացատրւում և այն, որ նմայած վաղուց մեռած յայտարարելուն՝ բոլշեւիկները անվերջ գրադուում են Դաշնակցութեանը և իրենց գրամի, ժամանակի ու եռանդի շահագին մասը վատնում հակադաշնակցական պայքարի վրա։

Կենդանի է Դաշնակցութիւնը երկրում թէ մեռած, թողնենք և անցնենք արտասահման։ Այստեղ «բանտարարութեան» իշխանութիւն գոյութիւն չունի, ո՛չ էլ կարող են հասնել 2էկայի ժամիքները։ Այստեղ՝ դեմոկրատական արտասահմանում մենք ունենք և՛ ազատ մամուլ, և՛ կազմակերպելու և հաւաքելու հնարաւորութիւն։ Այստեղ մեզ համար մտքի դահիճներ չկան, և, ուրիշ, մենք կարող ենք անարգել արտասայտել մեր էութիւնը։ Այստեղ Դաշնակցութեան մասին գաղափար կը տան ո՛չ թէ շինծու «դէպարտցիաններ» ու սեփնների ուժով կազմած համապատմարները, այլ ինքը կենալը՝ իր բազմազան արտասայտութիւններով։ Ի՛նչ է ատում այդ կենանքը։ Ի՛նչ է ներկայացնում իրենից Դաշնակցութիւնը արտասահմանում։

•••

Սկսենք հեռուէն։ Պարսկաստանում շուրջ Տարիս հազար Հայ է ապրում։ Այդ երկիրը անմիջապէս ենթակայ է խորհրդային Ռուսաստանի ազդեցութեան, որից մեծ չափով կախւած է և՛ անտեսապէս։ Բոլշեւիկները ռոզդել են իրենց գործակալներով ու սովով Թէհրանը, Թուրքիը, Ղազինը և Կասպից ծովափերը։ Պէտք էր, ուրիշ, ենթագրել, որ Պարսկահայ գաղութի մէջ շատ ուժեղ պիտի լինի և Հայ՝ կոմունիստների հմայքը, բայց... Պարսկահայութիւնը պարլամենտի անդամ ընտրեց Դաշնակցականի։ Թաւրիդից սկսած մինչեւ Սուլթանապատ համարեա բոլոր գոյոցական և մշակութային հաստատութիւնները գտնուում են Դաշնակցութեան ղեկավարութեան տակ։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Պարսկահայ ազգային-հասարակական կենալքին գոյն ու բովանդակութիւն առողջ Դաշնակցութիւնն է։ Կոր սերունդը սնուում ու զարդանում է դաշնակցական գաղափարներով։

Անցնենք դէպի արեւմուտք — Սիրիա, ուր 120 հազարանոց նոր պարլամէ ստեղծւած է Ռ՛րն է այդ գաղութի գաղափարական մղիչ ուժը — անկասկած, Դաշ-

259-2600

նակցութիւնը։ Սիրիայի պարլամենտի միակ Հայ անդամը, ընտրւած է Դաշնակցական։ Ազգային-հասարակական ու կրթական գործի մէջ ամենաբազումը գեր կատարողը Դաշնակցականներն են։ Երիտասարդութիւնը, աճող սերունդը համախմբւած է Դաշնակցութեան շուրջ։ Ընթանի ամենալուրջ ու ամենից աւելի ազդեցիկ թերթը Դաշնակցութեան կենտր. կոմիտեի օրգան «Նոր-Փիւնիկ»ն է։ Գաղութի կենալքի ջիղն ու զարկերակը հանդիսանում է դաշնակցական երիտասարդութիւնը։

Նոյնն է պատկերը և աղայական Եգիպտոսում։ Մեր կուսակցութիւնը խորը արմատներ է ձգել այստեղ և իր դրօշի տակ հաւաքել գաղութի երիտասարդ ու կենդանի տարրերը։ Ալեքսանդրիայում ամբողջ ազգային ու կրթութեան գործը գտնուում է Դաշնակցութեան գաղափարական հակադէպի ներքեւ։ «Յուսարբեր» երկօրեայ թերթը գաղութահայ լաւագոյն օրգաններից մէկն է։ «Յուսարբեր»ին կից ստեղծւած է լուրջ հրատարակչական գործ, որ իրար յետեւից նոր հատորներ է հրատարակ հանում։

Ահա և Յունաստանը. նոյն երեւոյթի ենք հանդէպում և այստեղ։ Աթէնք ու Սէլանիկ դարձել են մեր պրօպագանդի ու գործունէութեան հնոցներ։ Երիտասարդութիւնը հաւաքւում է մեր կուսակցութեան մէջ։ Հակառակ բոլշեւիկ-ուսովափարական սրտառուէ միութեան թափած ջանքերի, ազգային-կրթական գործը զարգանում է դաշնակցական մթնոլորտում։

Համեմատաբար թոյլ է դաշնակցական կենալքը Բալկանեան երկրներում, որոնք շարունակում են մնալ թատերաբեմը քաղաքական կուիւնների։ Բոլշեւիկեան ըմբոստութիւնները Բուլգարիայում խռոված վիճակի մէջ են պահում նաեւ ամբողջ Հայ գաղութի կենալքը։ Զինուորական վիճակը, յաճախակի խռովութիւններն ու սպանութիւնները դժտարացնում են կազմակերպական աշխատանքը, բայց գաղութահայ աշխատաւորութեան բովանդակ համակարանը Դաշնակցութեան հետ է։ Բուլգարահայ իրականութեան մէջ միակ հայերէն թերթը Դաշնակցութեան օրգան «Հայաստան»ն է։

Դանք Ֆրանսիա, որը իր աւելի քան 40 հազար Հայ ազգաբնակչութեամբ արդէն դարձել է Հայաշատ մի վայր։ Կազմակերպական լայն աշխատանքը նոր է սկսւած այստեղ, բայց արդէն մտա տարք քաղաքներում կան դաշնակցական խմբեր ու մարմիններ։ Հիմնուում են ակումբներ, գրադարան-ընթերցարաններ, կազմակերպւում են գասախօսութիւններ, հանդէսներ, հրատարակային ժողովներ։ Երիտասարդութիւնն է, գործարանային բանուորութիւնը, որ խմբւում է մեր կուսակցութեան մէջ, կազմակերպւում, քաղաքական գաստիարակութիւն ստանում և ոգեւորութեան նոր թափ ու կենդանութիւն տալիս գործին։ Հետո ոչ է այն օրը, երբ Ֆրանսահայ գաղութը պատկառելի յէ կառնայ արտասահմանում, և մեր կուսակցութիւնը այստեղ կունենայ իր ամենագործունէայ շրջաններից մէկը։

Աւելացնենք սրա վրա և Եւրոպայի մեր ուսանողութիւնը. Պարս, Աիւննա, Փարիզ — կազմակերպւած

են Դաշնակցական խմբեր . պատրաստուած է Դաշն-  
 ականողութեան համազումար՝ միացնելու համար  
 Եւրոպայի բոլոր գաշն . ուսանողական խմբերն ու ան-  
 հատ ընկերները : Եւրոպայի մեր ուսանողութեան մեծ  
 գեր է վերապահուած կազմակերպական կեանքով , և  
 առանց ուրախութեան չէ , որ մենք գիտուծ ենք նոր  
 սերնդի գաղափարական մերձեցումը մեր կուսակցու-  
 թեան :

Անցնենք ովկիանոսի միւս կողմը—Մտերիկա : Միաց-  
 րահանգներով , ովկիանոսի ջրերի պէս խորունկ ու ծա-  
 ւալուն՝ զարգանում է Դաշնակցութեան կեանքը : Անվերջ  
 ժողովներ , հանդէսներ , դաստիասութիւններ և այլ  
 կարգի հաւաքոյթներ , ուր հնչում է գաշնակցական  
 խօսքը : Մեր գործիչ ընկերները չափում են Մտերիկայի  
 մեծ հանրապետութիւնը մի ծայրից միւսը և հայ աշ-  
 խատաւորութիւնը ապրիցնում մեր կուսակցութեան գա-  
 ղափարներով : Ահագին գործ են կատարում «Հայրենիք»  
 մեծ օրաթերթը իր հրատարակութիւններով և , մանա-  
 ւանդ , ամսագիրը իր ճոխ ու արժէքաւոր նիւթերով :  
 Առանց չափազանցութեան կարելի է սասել , որ «Հայրե-  
 նիք»ը միակ լուրջ ու տարածուած ամսագիրն է հայ իրա-  
 կանութեան մէջ : Քալիֆօրնիայի մեր մարմինների բե-  
 րանն է «Ասպարէզը» , որ իր առանձնայատուկ գերն ունի  
 հեռաւոր հայ գաղութներում :

Այժմ կարելի է խօսել արդէն և Հարաւային Ամե-  
 րիկայի Դաշնակցական կազմակերպութիւնների մասին :  
 Այնտեղի մեր ընկերների թիւը հասել է այնպիսի  
 քանակութեան , որ սկսել է զգացել առանձին գործչի  
 և կուսակցական թերթի պահանջը :

Աւելցրեք այս բոլորի վրա և ուրիշ հեռա-  
 ւոր երկրներում ցար ու ցրիւ եղած մեր խմբերը —  
 Խարբին , Հարէշտան , Քուրա , Բաղդադ , Պաղեստին ,  
 Քանադա , Հնդկաստան— և պարզ կը լինի թէ գաղութնե-  
 րում , ի՛նչ պակասեւի ոյժ է ներկայացնում Դաշնակցու-  
 թիւնը :

Մենք տեղեկութիւն ունենք , որ հայ կոմունիստները  
 Դաշնակցութիւնը Հայաստանում «իլիւհրացիա»ի ենթար-  
 կելուց յետոյ , հիմա էլ ձեւարկել են նոյն աշխատանքին  
 արտասահմանում Այդ նպատակով նրանք վերջերս սկսել  
 են առանձնապէս զբաղել գաղութներով , և իրար ետե-  
 ւից արտասահման են ուղարկում «բարդիչներ» : Դժոյժ  
 դիտաւորութեամբ ահագին գումարներ են յառ-  
 կացած կաշառքի , պրօպագանդի ու հրատարակութիւն-  
 ների համար : Որոշած է «հարաւային կարգով» սպանել  
 Դաշնակցութիւնը գաղութներում , ուր նոյնպէս , ըստ  
 Միասնիկեանի , շատ ուժեղ է «գաշնակցական մտայնու-  
 թիւնը» :

Հետեւանք , ի հարկէ , կարելի է հէնց այժմեանից  
 գուշակել : Ազմունկ շատ կը լինի , անկակած , բայց ար-  
 դիւնքը կը ստացի նոյնքան փայլուն , որքան Հայաստանում  
 Այն միակ սարքերութեամբ , որ Հայաստանում Դաշ-  
 նակցութիւնը «օրէնքից գուրս է» և պարտաւորուած է  
 համակերպել այդ գրութեան , իսկ արտասահմանում  
 այգպիսի զգուշութիւնների պէտք չի ունենայ Դաշնակ-

ցութիւնը՝ ապրի ու կը զարգանայ , որովհետեւ նրան կեանք  
 տուողը ո՛չ թէ անհատների կամքն է , այլ կեանքի առար-  
 կայական թեւազարմանքը և զրանք բոլոր գաղափար-  
 ները : Հայածելով անհնար է սպանել մի գաղափար ,  
 առանձն է՝ հայածել—տարածել : Արքան բոլորիկները  
 շա՛տ հալածեն մեզ , ա՛յնքան կը տարածեն մեր գաղա-  
 փարները , այնքա՛ն կ'ուժեղացնեն մեզ ,

Դաշնակցութիւնը սպանելու մէջ միջոց միայն կայ—  
 իրագործել նրա պահանջները , որ սասել է՝ բովանդակ  
 հայ աշխատաւորութեան պահանջները : Այս է ահա , որ  
 հայ կոմունիստները անգոր են անելու և Նրանք զգու՛մ  
 են , թէ անընգունակ են արդարացնելու հայ ժողովրդի  
 ակնկալութիւնները , և իրենց անկարողութեան վրէժը  
 փորձում են լուծել Դաշնակցութիւնից : Բոլոր տկարների  
 և թուլամարմինների ձակատագիրն է այդ :

## ԹՈՒՐԻՔԻՈՅ ԸՈՒՐՋԸ

Դեպքերը թուալիւր , խանկիտուն կ'ընթանան Քուր-  
 քիոյ մէջ , այժմ «Քիւրքուլու թիւրք» , ինչպէս կը կոչեն  
 իրենք :

Քրդական պատմութեան պայթումը պայծացուց և՛  
 ուրիշ պալարներ : Քէմալական իշխանութիւնը այսօր կոխ  
 ունէ երեք ենթաբն ձակատի վրայ : Մէկը՝ քրդական շարժումն  
 էր , որ խորտակուած է առ այժմ , անհամար որսեր ձգելով  
 Էնկիլիսի ձեռքը , կախաղանի համար : Մահաճիւնները իրարու  
 կը յաջորդեն , առանց դասակարգի խտրութեան և առանց  
 համարելի : Միայն Տիգրանակերտի Անկախութեան Առեւտը  
 389 հոդի Որոտած էր միջու Յունիս 1 , անմիջապէս կախե-  
 լով 28 հոդի , ի բացակայութեան մահուան գտտապարտելով  
 21 հոդի , և միայն 47 հոդի անպարտ հուշակելով : Գուրը ծա-  
 դեցաւ Փետր . 13ին , բայց միջու այսօր ստոյգ թիւեր չկան  
 ընդհանուր կորուստներու մասին , որոնք խոշոր համեմատու-  
 թիւն մը կը կազմեն երկու կողմից համար ալ ճակատին չենք  
 յիշել ամբողջ շրջաններու աւերումը , և առանձնապէս Տիգ-  
 րանակերտի կործանումը :

Միւս ձեւերը , և համայնալարական վտանգը , որ սուր  
 հանգամանք չունի , և ասելի շատ մտալիտութեան արդիւնք  
 է , բայց և այնպէս կը նպաստէ սաստկացնելու ջղաքրդու-  
 թիւնը : Էնկիլիսի լուրջ պատճառներ ունի կասկածելու իր  
 անմիջական հարեւանէն և սիրակցորդ զինակցէն , խորհրդա-  
 յին-յնդափոխական Ռուսաստանէն , որ կնքահայրն է բոլոր  
 այս կարգի շարժումներուն :

Իսկ երրորդը , իթիւհատական-միապետական հոսանքն է  
 որ կը ծաւալի մէկ տարիէ ի վեր , յարածուս ուժգնութեամբ  
 ճակատին փոթորիկի մը ձևը չունի այս ստորերկրեայ իլլրտումը ,  
 բայց այդպէս ասրափի մասնած է օրուան իշխանութիւնը ,  
 որովհետեւ անոր զպատեանիները կը հասնին միջու երէկուան  
 ընկերներուն , գաղափարի և դէմքի երբայրներուն : Այսօր  
 լուրջ կասկածի և հակողութեան սակ են Բեւուժ պէյ , հին

կուռք մը, որ վարչապետ էր Լօզանի ժողովին ատեն և Հինա կը ծաղրուի ու կ'անաբարէի, Բէֆթէֆ փաշա, որ անաշին ան ճամ Պոլիս մտաւ իբրեւ լրագոր և միլի վարչութիւնը հաստատեց Գաշակիցիներու աշքին առջեւ. Գարապէճքի քեանգլմ փաշա, որ մինչև անցեալ տարի կը փոստակտուէր իբրև անաշատանի լագրականը)։ Այի Յուսաւս փաշա, որ մեծ դեր կատարեց անկախութեան պատերազմին մէջ և և։

Միլիէն Իթթիհատի Հարապատ ծնունդն էր և անոր իրական ծառանդորը, բայց ուրացաւ իր հայրը, աւելի առաջ նետուած ըլլալով, և լարած է իր ուժերը, զայն անգործութեան մատնելու համար։ Այն ինչ որ «խառնարաններու գործունէութիւն» կը կոչեն այսօր և կը հետապնեն Անկախութեան Գառարաններով, մեծ մասով Իթթիհատի վերածնութեան ճիգն է։ Եւ էնկիւրի դիտելը թէ նր կ'ուզէր հարուածը, երբ իրարու հասել փակեց Պոլսոյ ընդլիմադիր թերթերը, սկսելով հրահրուող Քամիներէ, լուծեց «Յասալըմասէր»ներու կուսակցութիւնը, և կը շարունակէ սպառնալ հրապարակաւ։

Պայքարը կը զարգանայ արագորէն, երկու հակամարտ ուժերու միջեւ, որոնց մէկը իշխանութեան ատէր ըլլալով, կ'օգտուի անթիւն, մահաշուք հարուածը տալու համար, իսկ միւսը կը սպասէ յարմար բազմէն՝ կրթեալ Պոլսոյ, Տրապիզոնի, Իզմիրի, Գոհիայի, Ատանայի և «Արեւելեան նահանգներուն», որոնք սկիզբէն ի վեր դժգոհ են էնկիւրիէն, և իր գիտարական-մտաւորական լեզուներէն, որ դիտէ խուճանը շարժման մէջ դնելու գաղտնիքը։

Այս ձևովին վրայ է որ կը խլրտի նաև նախկին Իթիլաֆը, միշտ խայտարարէա և աւելի պահպանողական։ Իսկ երկուքին նուազ ապատանաւած է Ալ-Օմանի զահրնկեց գերդատանը, սուլթանով, խալիֆայով և պալատականներով։

\*\*\*

Շատ բան փոխուած է այն օրէն ի վեր երբ Հիմնուեցաւ այս թերթը, իբրեւ ահազանգ մը մասնաւորապէս թրքական բարբարոսութեանց դէմ, որոնք ինքնապաշտպանութեան կոչուր կը պարտադրէին մեզ։ Փոխուած է երկիրը, — արևելագահը, յօշոտուած և կիսաւեր, Փոխուած են մարդիկն ալ։ Փօստի շահերու, փաշաներու և սօֆիաներու շքախոմբին յարգում է նոր սերունդ մը, — երրորդ ժէճն թիւրքերէն ի վեր։ Փոտիշահին տեղ կ'իշխէ նոսրագոյժ մը, — չէ որ Թուրքիան հանրապետական է։ Նորիակ պէշեր իրենց աթուռներէ կը հեղեն զառամած փաշաներու փաղանգը։ Սօֆիաներն ալ կ'ծկուած են իրենց փաթթոցին մէջ — աշխարհական է երկայ Թուրքիան։

Եւ սակայն... Երեսուներկինց տարի յետոյ, մեք զարձեալ նոյն աճապատանադիր անկից այդ պետութեան դէմ, և սակայն Դաս մը Ու բողոքող ենք ոչ միայն մեք, այլ և ուրիշները, բոլոր հայաձականները, նոյն ինքն թուրք ժողովուրդը, իրենց յատուկ պատճառներով։

Թուրքիան կը մայ նոյն «Լիւանդ Մարդը» անոպայ և անբուժելի։

Պոլիս յեղաշրջում էր որ կատարուեցաւ 1923—1924, սուլթանութեան և խալիֆայութեան ջնջումով։ Բայց ինչ իբրական փոփոխութիւն յառաջ բերաւ հանրապետութեան հրահրումը։

Նոր ծիւրը ծնած են պալատական բորբոսներուն տեղ, յուլի թունաւորելու համար մթնոլորտը։ Նոյն մակարոյժ քոյս սերն են ատնք ալ, և շատ աւելի զտանգաւոր, քանի որ քմբորք քամած են ազգայնական թթուի Թուրքիոյ ամբողջ պատմութեան մէջ, չէ տեսնուած սերունդ մը որ այնքան արիւն լուրկած ըլլայ, որքան Իթթիհատ-միլի գերապատանը։ Փատիշահ-ները ջարդ կը հրամայէին մասնաւոր հրովարտակիցի, անգրաւեղանի մը վրայ, և որոջ պաշտնաժամով։ Թուռները գերազանցեցին պապերը։ Անոք այլևս պատրուակներ չեն փնտերու Ջարդը՝ նշանախօսք մին է անոնց համար, պետական իմաստութեան այգիան և օւնեղան Եւ իբր այդ՝ կատարելութեան հասցուցին զայն, զիրաճելով ազգային անարարութեանց մի, աննախընթաց և անմտցեղի։ Այսպէս կը բացատրուին 1915-1918 սարսափները, որոնց տասնամեակը լրացաւ այս տարի, և որոնց աւանդութիւնները կը տեսնէ մինչև այսօր, 6 Ազգ. Մեծ Փողովին մէջ, զիս անցեալ տարի, հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնուէր Իթթիհատին, «որ մաքրեց-փրկեց Արեւելեան Նահանգները»։

Մինչև այսօր ալ, յարտաւելութեամբ կը շարունակուի «մաքրել-փրկելու» այդ քաղաքականութիւնը։

Չիղ է, շորդ չկայ առ այժմ, քանի որ համարնքով ժողովուրդ մնացել է իրենց թաթին տակ։ Մաքրուեցան Լասիներ — հաղի երկու տասնեակ հազար հոգի կը շինեն Անաստուի խորերը, իբրև հասարակ բայաներ։ Մաքրուեցան Յոյները, շարդով, աքարով և փոխանակութեամբ։ Մնացորդը, եղած չեղածը ամբոփուր է Պոլսոյ մէջ։ Եւ սակայն, զոչ չեն Թուրքիոյ փրկիչները, և առտու իրիկուն ճարգիները կ'որտան, այդ բեռէն ալ ազատուելու համար։ Այդ նպատակին կը ձգտին այն բոլոր կանոնագիրներն ու օրէնքները որ կը հրատարակուին շոգեպիկ սրապութեամբ, անտանելի, անկարելի դարձնելու համար ոչ-խլամ փորքամասնութեանց անշատ գոյթիները։ Երկուտ ջարդին յարգած է սպիտակը, տեսնական փճացումը, որ կատարուէր շատու կը տարուի ոչ-խլամ պաշտօնեաներու արձակումով, կայուններու գրաւումով, լրեալ գոյքերու աւարակութեամբ (այս բոլորը տեղի կ'ունենան միշտ օրէնով)։ Այդ ծրագրին մաս կը կազմէ թուրք ուսուցիչներու, ցնիչներու և լրտեսներու ցանցը ոչ-խլամ հասարակութեանց զարոցներուն շարքը։ Հանրապետական Թուրքիոյ մէջ, թողի մը յետին ոստիկանը ուզած ժամուն կրնայ դպրոց կամ եկեղեցի մտնել, և փակել դանոնը։ Մ'նայ որ, էնկիւրիի վարիչները երբեք չեն ծածկել իրենց դիտուները, և անդարդ կը հնչեցնեն օրուան նշանախօսքը, — թր'ացուելու։ Եւսնայ պաճաճաֆ չէ որ, երեք տարիէ ի վեր, թուրք մամուլը կ'ոճանայ միաձայն։

— « Կամ թուր կ'ըլլա՞մ, կը ձուլուի՞մ, կամ կ'եղի՞մ կ'երթա՞մ »։

Երկու պարագային ալ, իրենց համար շահաւոր է այս ելքը։ Թրքանալու պայմանաւ Թուրքիա մնալով, ոչ-խլամները կը կարենցնին իրենց ազգային, նոյնիսկ անհատական—ժառանգական իրաւունքները. հետանալով — վրայ կուտան իրենց կալուածները, իբրև լրեալ գոյք, կամ իբրև բաւարարուելու հարուստարգաւ։

Պաշտօնական բերաններ ալ անկերջ կը հոլովին «Թրքանալու» բանաձեւը. վարչապետ Ըամէթ փաշան տիտղոսաւոր

ազգարարն է այդ պատգամին, իր անհատական գրոյցներով և ճառերով՝ Երևութապէս այս բանաձևին իմաստն է ոչ թէ ժանկնայ ցեղով և կրօնով, այլ խորհիլ և զործիլ իրբնութով ֆաղաֆացի, իբրև Հաւատարմի գաւազն Հայրենիքին: Բայց, իրականին մէջ, բոլոր ձիգերը կը ձգտին մէկ նպատակի, իսկապէս թրջանցնելու, — ի Հարկէ միշտ տրինական ճամբաներով: 1924ի ընթացքին և մինչև զբրդական ապստամբութիւնը, թուրք մամուլը յատկապէս արծարծեց քանի մը խնդիրներ, որոնք մարդը ծրագրի մը կը ինկազմեն — Ջնջիլ Պատրիարքարանները և փոքրամասնութեանց կազմակերպութիւնները, կառավարութեան յանձնելով բոլոր կալուածները և եկամտօր աղբիւրները և անոնց մատակարարութիւնը: Եկեղեցիները կրնան մնալ, իսկ քահանաները միայն աղօթելու և մուկ թաղելու իրաւունք ունին: 2. Փակել ոչ-իսլամներու միջնակարգ վարժարանները, կամ արտօնել անոնց շարունակութիւնը, բոլոր աւարկաները թուրքերէն ուսուցանելու պայմանով: 3. Ամբողջովին թուրքերէն աւանդիլ բոլոր աւարկաները, ոչ-իսլամ դպրոցներու մէջ, առանց աստիճանի խտրութեան: 4. Պակեցնել ոչ-թուրք թերթերը, ևն:

Միլի վարչութեան ամբապնդումէն ի վեր, անընդհատ կը կրկնուի «ամէն ինչ թուրքերէն» չբաման, որ վաճառատուններու նշանատխտակներէն Հասու մինչև մահազոյներն ու պարոցական յայտադրիւններ: Էնկերիլ շարտօնող ևոյն իսկ տէրտէրի մը առաջումը Անաստուլի այս կամ այն անկէնը: Եթէ պատահաբար եկեղեցական մը գտնուել է քաղաքի մը մէջ, միլի պալատին ատեն, կը Հանդուրժեն որ մնայ: Իսկ եթէ Հեռացաւ, այլևս չի կրնար վերադառնալ, ինչպէս եղաւ Սեբաստիոյ աստուածավախ աւաջնորդին Համար: Հին-օրէնքը հոգևորական մը, և անվիճելի կերպով Հաւատարմի, Մարդիս Վրո. Էշմիճնիլի գնաց անցեալ տարի, կարիսպոսանալու և դառնալու Համար, մնանալոր առտօնութեամբ: Վերադարձին, անկարելի եղաւ Հրաման ստանալ և ձերուսին գաղթեց Մար-պիլիա...



Էնկերիլ ոչ թէ բարեփոխեց, այլ չարափոխեց, աւելի գունատրեց ու սաստկացուց փոքրամասնութեանց Հանդէպ տիրող քաղաքականութիւնը: Եւ դեռ վերջին խօսքը արտասանուած չէ:

Բայց փոփոխութիւն կ'սյ ուրիշ տեսակէտով:

— Կան աշխարհականացման, արդիացման լուրջ փորձեր. կան բարեփոխման երեւոյթներ, առաւելապէս՝ ձեւական, կիներու քօղերէն մինչև ծովաւոր ֆիսքը, որ ազգային տարազ և Հաւատարմութեան նշան կը Համարուէր մինչև երէկ. և որուն դէմ խուլ պալատը մը սկսեր է այսօր, ի նպատակ եւրոպական գլխարկին: Երէկ մարդիկ ծծծ կ'ուտէին, կը բաժնորկուէին, եթէ զիտարկ զնէին. այսօր Մուհամմէտը վկայութեան կը կանուխի, պապուցանելու Համար թէ Ֆէտը թրքական չէ և թէ ամէն մարդ ազատ է իր ուզած գլխարկը դնելու:

Մական, վարչական վերիվայրութիւններու, սկզբունքի յայտարարութիւններու, «յեղափոխական» եղութիւններու ժխտրին մէջ, անխախտ կը մնայ հիմնական ոգին:

Ելապէս է որ, այսօր սուլթանին տեղ կ'իշխէ ոչ-տոհմիկ

զինուորական մը, իբրև Հանրապետութեան նախագահ, բայց նոյնքան բուռն և միահեծան: Նախագահը շրջապատուած է «քլիք»ով մը, — զործավարներու խորհուրդ — որ աւելի կարճատես է և ապերասան քան երբեմնի Պապը Ալին թուրք ազգայնական պետութիւն մը ստեղծելու մարմաջին մէջ, այդ իշխանութիւնը ստեղծած է քառս մը որ քարերն անգամ լեզու Հանեց: Ինչ որ կը մտտանեղէր Հայ ժողովուրդը, իր բազմազան ներկայացուցիչներով և յեղափոխականներով, իր մամուլով և կրօնիներով, բառատուն տարիէ ի վեր, թրքական վարչութեան դէմ, թուրքուն կրծող, կործանող չարիքներուն դէմ, նոյնութեամբ կը կրկնուի այսօր իրենց, թուրքերուն կողմէ: Հիւսէին Ճահանները, որոնք միլիթրէ հախիսի (տիրապետող ազգ) փառքը կ'երգէին երէկ, շարժարարներու սեբուռն մը պատրաստելով, առտու մը տեսան որ նոյն չարիքներէն կը գանգատի, կը ձրուի թուրք ժողովուրդը ինք. բայց արդէն ուշ էր: Ուշ մտային Թեվհիսները և Իգասանները, երբ ի ուշ աշխարհի կ'աղաղակէին թէ «մենք երկիր կառավարել չենք գիտեր», «մենք մարդ ըլլալիք չունինք», «մենք քանդելու Համար ստեղծուած ենք»:

Ուշ է նաև Հիմա, երբ միլի փաշաներ, զրդական շարժումը արեան մէջ խղզիլէ յետոյ, կը յայտարարեն թէ այս բոլորին պատճառը այն է որ, ժողովուրդը, խեղճ զիւղացին կը Հարստահարուի շէյխներու, պէյերու, միւթեկալիպիներու կողմէ, թէ պէտք է շնջիլ աւատականութիւնը...

Չարքը Հասած է արդէն իր տրամաբանական վախճանին, մէջտեղ ձգելով երեսութապէս անկախ, միատարր, այլ Հիւճախատար, կազմալոյճ թուրքիս մը, որ կը զարարուի անհնարին տապնապններու մէջ, քաղաքական, ֆիզիքական և տնտեսական:

Արդապէս, ինչ կ'պացուցանեն Անդորրութեան Ամբապնդումն Օրէնքը, անկախութեան ատեններու Հաստատումը երկու տարուան Համար, անվերջ կախադանները, բանտարկութիւններն ու արցունքները, անխնայ Հալածանքը մամուլին, ընդդիմադիրներուն, բոլոր զժողովներուն դէմ:

Քրքեցեք վերջին երկու տարուան թուրք մամուլը — որ խոչնդ լուութեան մը դատապարտուած է այսօր, — և դուք պիտի տեսնէք ճգնաժամին միւս երեսը, ֆիզիքական և տնտեսական քայքայումը:

Եմպացուցը 45 — 60 միլիոն ոսկի բաց ունի միշտ 70,000 թուրքաւոր, որք և այլի իրենց անօթի աչքերը յառած են պետական մետուլին. ներածուծները արտածուծներէն վաթսուն միլիոն ոսկի աւելի են. գիւղացին և քաղաքացին կըսած են արքերբու ճանրութեան տակտրուն եկամուտը մեծ մասով կը կանեն բանակի ու պաշտօնէութիւնը, ինչպէս առաջ. մեռելութիւնը կը թաղաւորէ Իգմիրի, կիլիկիոյ, Սև Մովու կամուրան, նոյն իսկ Պոլսոյ մէջ: Եւ այս բոլորը՝ շարքուած կամ չեռացած ոչ-իսլամներու Հարստութիւնները աւարտելու տակ յետոյ: Ծակալին չէ վերջացած լքեալ գոյցերու թալանը (եւկալըր մեքրուի հաղնաւոր, իրենց բառով): Ֆիզիքական տեսակէտով «թուրք ցեղը մոմի պէս կը Հալի», ինչպէս կը գրէ Մանուկներու պաշտպան Մուրթեան ընկ՛ քարտուղար Տոքթ. Փուսու: Եիւրիւրոյիթ, Թուրք միլի օրկան, իր ճանօթութիւններն ալ կ'ընելով այս քննութեան, կը Հաս-

տասն թէ մանուկներու մահը հարիւրին եօթանասունէն պահաս չէ, (ուրիշներ կը հաշուեն 55%) , ու կ'ազգապէ.

— Ա Սյուլիսի ազգի մը կեանքը յառանգի ենթարկուած է»:

Նոյն աղբիւրներուն համաձայն, Տոքթ. Երէնֆէտատին հաշուած է թէ Թուրք ժողովուրդին 28%ժը ծագածանդէ կը ստառապի: «Եթէ 13 միլիոն ենք, ուրեմն 3,250,000 հոգի հիւանդ են, ասոնց ալ 1,650,000ը աշխատող ձեռքեր»:

Իսկ մենք գիտենք որ այսօր Թուրք ժողովուրդին թիւը 13 միլիոնէն շատ վար է. Եւստորդ վարչապետ Ֆէրիտ պէյ մինչեւ 12,000,000 կը հաշուէր ամբողջ բնակչութիւնը. միլիթթերը մը, Ազգաւ,— գրեց վեց միլիոն:

Բայց ճահճատեղը (մալարիա) միակ հիւանդութիւնը չէ: Անոր հետ զուգընթաց կ'արշաւեն թոքայտն ու սիֆիլիսը:

1924 Նոյեմբեր 5ին, բուռն վիճաբանութիւն մը ծագեցաւ Ազգ. Մեծ Ժողովին մէջ, Յունաստանի Թուրքերուն փոխաւակութեան առթիւ: Արաստանեալ գործավարը, Բէֆէթ պէյ, ինքզինքը պաշտպանելու համար բըւա կարգ մը մեկպնոյսներ որոնք շատ բնորոշ են: Իր իսկ խոտոտանութեամբ, մեկուկեւ միշտ հոգի բնակարանի պէտք ունին: «Միամտութիւն է կարծիք թէ է—5 միլիոն սովիով կը փրկուին այս գաղթականները. հարիւր միլիոն սովին ալ թէ՛ է: Է00,000 գաղթականներ Եւրոպայէն Ասիա եկան նիւթապէս և բարոյապէս փճացած. մեր ընելիքն է անօթի չթողուլ զանոնք: Ունիք 40—50 հազար հողագործ ընտանիքներ որոնք մէկ երրորդը բացարձակ օգնութեան կարօտ է. պէտք է որ արօր, սերմացու են. հասցնել, մարդ զուր 700 սովի յատկացնելով, մինչդեռ միայն 730,000 սովի ունինք, այսինքն 5% »:

Գործավարին աւետեր են թէ Մամսոնի շրջանին մէջ հինգ հարիւրէ աւելի յունական գիւղեր կան. «Իսկ մենք հինգ տուն անգամ չգտանք», կ'ափսոսայ Բէֆէթ պէյ...

\* \*

Համար ահ ու սարսափով և խաճիկներու բռնակով մը կառավարեց երկիրը, ամբողջ երեսուն տարի, և ինկաւ զլիւվայր Իթթիհատը շարժման մէջ դրա պատերազմական աստեանները, իր իշխանութեան առաջին օրէն իսկ, և, փառքի գողաթնակէտը հասնելէ յետոյ, կեցցաւ իր մեղքերուն ճանբութեան տակ, կայսրութեան կէտը վրայ տալով: Մուսթաֆա Բէմալը կ'իշխէ այսօր նոյն ահ ու սարսափի տպաւորութեան տակ, երեք ցրպցիկ հայելի և երկու լեցուն ատրճանակ պահելով սենեակին մէջ, միշտ շողիկ վրայ, և միշտ հեռու կեղորներէն, մանաւանդ Պոլսէն:

Նոյն ուղի գիծը՝ պապերէն թուները:  
Վախճանը — Նոյնքան ճակատագրական:

### ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Տարը տարին պղտիկ շրջուն մըն է ժողովուրդներու կեանքին մէջ. բայց ի՞նչքան խոր հետքեր ձգեց մեր պատմութեան վրայ...

Կը թուի թէ երբեք աւելի արձակուանակ եղած չէր երբ-տասարդութիւնը, որքան այսօր: Անգուշտ մայ ալ մէկ հետեւանքն է մեր կրած սարսափներուն և անակնկալներուն, և սերտ կապ ունի բարոյական այն ընդհանուր տագնապին հետ, որ յաջորդեց Մեծ Պատերազմին: Մարդիկ այլևս այն չեն ինչ որ էին իսրջ աշուիկ սպանդէն առաջ: Ե աշխարհը այն չէ ինչ որ կ'երազէին փրկսոփանները: Այսօր աւելի շատ են և աւելի ահաւոր՝ բարոյական քայքայման ազդակները: Եւ այս՝ ոչ միայն Թրուառ և աստանդական ժողովուրդներու, այլև այն երկիրներուն մէջ, որոնք ուղղակի կ'ազդեն մարդկութեան ճակատագրին վրայ:

Եւ սակայն, ինչո՞ւ մենք աւելի պիտի մանրանայինք, և ինչո՞ւ նուազ թուիք պիտի ունենար այն սերունդը որ կը շնչէ այսօր, հայրենիքին մէջ թէ անիէ դուրս:

Աւելի երջանիկ էին անոնք որ խորհչեցան ու գործեցին ութսուն-հարիւր տարի առաջ, Թուրքիոյ և Ռուսիոյ մէջ: Այն ատեն ալ չկային կապանքներ և զրկանքներ, որոնք զարհուրելի կը համարուէին այդ շրջանին համար: Գիտատար մշակովի մը, կաթողիկոսներ և պատրիարքներ, փերեզակներ և դպիրներ, յետոյ օտար միահեծան, աստուածապետական բըռնակալութիւն մը որուն շուքն իսկ սարսափ կ'ազդէր. և ըստարուկ թաղմութիւններ որոնք միայն իրենց հայրենի հողին կապուած ըլլալու երջանկութիւնն ունէին: Այդ օրերուն, պապերուն հաւատքը չէր միակ սփոփանքը որ անթիւ ժամեր ու վանքեր շինել կուտար, որպէսզի աւելի շատ և աւելի հանդիսարարապէս փառաբանուին ամենակալ Եզովան և անոր աշխարհական կոմիսարները, ծարերն ու Սուլթանները:

Այդ համատարած խաւարին մէջ, ստրկութիւն և շղթաներուն մէջ, նուազ կը տառապէին անոնք որ երիտասարդ էին, կարօտ՝ նոր խաղի, պատմութեան և լոյսի:

\* \*

Չպրօպտեք աւելի հեռուաւոր շրջաններ և Հարևանիցի ակնարկ մը՝ բանի մը թուականներու վրայ՝ պիտի ցուցնէ թէ ուրիշ գիծ մը կար այն ատեն:

1860 — Ինչ շրջան էր այդ: Ափ մը Վուսուճիականները — այն ատեն չէր ծնած «Ռուսարական»ը — Եւրոպա կ'անցնին, կը կլթուին, ու կը դառնան Պոլիս, իրենց գարգացումէն բաժին հանելու ժողովուրդին: Անոնք սապարէզ կը ետուտին որևորութեամբ և համարձակութեամբ, նորոգելու համար իրքահայ պատմութիւնը, որ մագաղաթի չափ կարծրացած էր գարաւոր անշարժութենէն: Ու հիմը կը գնեն նոր կարգ ու սարքի մը — յեղափոխական քայլ մը՝ իր ժամանակին համար: Ամիրաներու ոգին էր որ կ'իշխէր, այդ օրերուն, բայց վերահորդիչները չվարանեցան խորացնելու ձեռքը, և փորելու կղերպետական իշխանութեան հիմքերը: Անոնք ցանցիցին հուռա մը, որ սահմանուած էր արմատ բռնելու և զարգանալու: Ասոնց առաջապրութիւններն ու արձութիւններն էին որ դուռ

ները բացին ժողովորդի զաւակներուն՝ առջև և արթնցուցին աշխարհական դիտակցութիւնը... Առաջին փորձը չէր այս, թօնուելու համար հոլուսպետներու և «երեւելի»ներու թաթը. բայց ամենէն ազոտ հարուածն էր, և իբր այդ, մեծապէս զիրացուց յաշորդ սերունդներու գործը: Փարմութիւն մը հասուցցուց անոնց կատարած աշխատանքը և ներշնչումի աղբիւր մը դարձաւ երկար տարիներ, հանրային գործունէութեան համար: Մինչև այսօր ալ, մենք շատ բան կը պարտինք այդ «ուսումնական» սերունդին, որ սորվեցաւ և իր սորվածէն բաժին հանեց հանրութեան, երբ տասն արդացեալ ով Հայկական կեանքը:

Այդ շունչին շնորհիւ էր որ, հաստեք վերածնութեան երկրորդ կարեւոր հանգրուանի մը, ութնուհինգական թուականներու գործունէութեան:

Այս անգամ, աւելի շատցել էին «ուսումնականները», և որոշ ձեւ առած էր մեր կեանքը: Քոյր-եղբայր Միութիւններ ապարէզ կ'իջնէին, գիտութեան ճրագներ վառելու համար ամենէն խուլ անկէներուն մէջ: Ամբողջ երիտասարդութիւն մը կը խրատէր դրէք, դպրոցի, թատրոնի համար: Բողոքի ալ կը հաստատային թէ իրական գործ մը կը կատարեն, ուսուցիչներ զրկելով գաւառները և դասաղիբքեր տպելով մատակներուն համար: Այսօր մենք վերէն կը նայինք այս գործերուն վրայ, որովհետեւ աւելի բարձր և աւելի բարդ առաջադրութիւններ ենք ունեցել: Բայց իրողութիւնը այն է որ, Հիմա նոյնքան պէտք ունիք այդ օգերու միասնութեան և ռեւոլուցիան, հակադիտու համար մեր հաւաքական կորուստի: Առանց նման խանդաղատանքի, մենք դժուար թէ կարենանք պակշի մեր դիմախիճը, հետեւաբար և իրագործել աւելի բարձր հեռանկարներ:

Իսկպէս «լուսաւորչական» գործ, այդ շարժումը լուսաւորեց նաև մեր քաղաքական հորիզոնը, որ անուսածաղնչական գոյներով կ'երեսար, մինչև այն ատեն:

Այդ ջրհասէն առիւն, ուժգին թափ կ'առնէ, աւելի կ'երիտասարդանայ մեր կեանքը, և կը ծաւալի ու կը ճիւղաւորուի: Վաթիկները պակկներ զոլապուցեր են արդէն, և բացառա կայծեր կ'երեւան սահմանին երկու ծայրերէն, թաքուն, ազատ ճրագներուն տեղ: Փարձեալ երիտասարդութիւնն է նոր հանգանակին քարոզիչը, ինչպէս և զարկերակը՝ առաջադրուած գործունէութեան: Ա՛ն է որ առաջ կ'անցնի մատաղ ընելով իր հոգին ու կեանքը, և խոր ակօսներ բանալով միօրինակ տարածութեան վրայ: Շատ աւելի վարակիչ էր այս շունչը, և ստով իսկ արտադրեց գործեր որո՞ք թէ՛ ժողովուրդներու տարեգրութեանց մէջ արձանագրուած են:

Հայ ժողովուրդը նոր կը սկսէր գրել իր իսկ պատմութիւնը, երբեմն կենսաբան, յաճախ դաժան, միշտ հարպատ:

... Բայց չանցնինք հարեւանցի ակնարկի մը սահմանը, մտնելու համար հերսոական այլ նկերաբանտ պատմութեան մը ծակերուն մէջ:

Պուզէից ըսել թէ՛ գիտակցութեան, վերածնութեան, ազատագրութեան բոլոր ձեւերակներէն ու պայքարներէն յետոյ, երբ արդէն կը ձեւաւորուի մեր ընկերային քաղաքական կեանքը. նախանք մը կը նշմարենք երիտասարդութեան մէջ,

երիտասարդական տրամագրութեան տեսակէտէն: Դժուար է զարգափարական սեանկութիւն վերագրել այն սերունդին որ չափահասութեան հասած 1914էն յետոյ: Արդէն մարմին առած են տարիներով ցանկած զաղափարներ, և թանձրացեալ, որոշ դաւանանքներ կան որոնք լայն տեղ բռնած են միաբերու մէջ: Արեւեով շարգախառն ակօսները, կտրուած ձամբաները հասկնալի, տեսանելի են մեծամասնութեան համար:

Պակասը, այն ինչ որ կը մատանաչենք, բոլորովին ուրիշ բան է:

Տկարացել է երիտասարդական երակը: Տճոյն, մոլորուն գիծ մը կայ որ կը շեշտուի, դժբախտաբար:

Երէկ, առանց սակարկութեան կրակին մէջ կը ետուտէին տասներորդ տարեկան պատանիներ. այսօր՝ խորշակ մը իջել է այդ անուշ տարիքին վրայ, և անկէ անկի ալ: Հաշուեղով, քաշուեղով կ'առնուին քայլերը: Վ'ընդունինք. ունեւական է պահանջել որ ժարդիկ զգան ոչ շարժին այնպէս ինչպէս ստաք տարի առաջ, մանաւանդ այնքան քստմնելի վերիվայրումներէ յետոյ: Գնանքը ինք ձանրաչափը, լայտարարն է կատարուած փոփոխութիւններուն, և մենք չենք զարմանաւոր ստոր համար. ու չենք պահանջեր բուն պարեցնել վիպական տրամագրութիւնները:

Եւ սակայն, կան մեղիքեր որ շեշտակի կը հակասեն երիտասարդութեան կոչումին:

Մենք խօսք չունինք աղքատ խառնուածքներու, ոչ ալ ժամանակէն առաջ ծերացած, ցամաք հոգիներու համար Չանց կ'առնենք, նաև, արհեստով «փիլիսոփաներ» ու սովետիկները: Ասոնք հարազատ ներկայացուցիչներ են՝ խորշակահար սերունդին, մանաւանդ Հայաստանի մէջ:

Մեզ հետաքրքրողը՝ այն բազմութիւններն են որ վճիր աչքեր ունին և առույզ բաղիբակի, և որ բնազդաբար կը զգան թէ շարժումը, խորհուրդն ու գործն են իրենց գոյութեան գերագոյն իմաստը:

Ասոնց վրայ նայելով է որ մենք խրամատ մը կը տեսնենք երէկուան և այսօրուան միջև:

Ու կը հարցնենք.

— Ինչն բաց պիտի մնայ այդ խրամատը...

«Ինչպի երկիրը» նշանախօսք մըն էր երէկ, երիտասարդութեան համար: Բազմաթիւ ուսանողներ Եւրոպա կ'անցնէին, շքան մը բոլորելու և դառնալու համար: Անոցմէ շատերը կիսատ կը ձգէին ուսումը, աւելի սովորական գտնելով հայրենիքի կոյր: Իսկական հոսանք մը կար դէպի ժողովուրդը, մինչև անոր հեռաւոր խաւերը:

Ինչն այսօր պիտի պակսէր նոյն բնական խանգը, շատ աւելի հասուն պայմաններու տակ:

Պատերազմէն ի վեր, նոր սերունդ մը հասած է, լուսաւոր ուսանողներու մէջ: Միայն Փարիզի մէջ, 150 ուսանող կը համրէին 1921ին: Ո՞ր օրուան համար սորվեցաւ ու զարգացաւ այդ սերունդը: Ինչն անոր ներկայացուցիչները պիտի նախընտրեն իրենց կայտառ գոլովիւնը քաշընչի օտարութիւնը պոպոտանելու վրայ, փոխանակ երթալու Հայաստան: Վար-

չաձեւն է որ կը խրտչեցնէ: Բայց երէկ, առջի օր, երբ մեր ձեռքն էր երկիրը և շատ աւելի թոյլատու էին պայմանները, քանի՜ հոգի ձամբայ ելան: Ընկաակած, Երևանը մեծագոյն պատրուակները կը հայթայթէ այսօր, հրէի և հեթանոսի խտրութիւններ հաստատելով Ձատենք հեթանոսները, — և տակաւին կը մնայ բազմութիւն մը որ ոչ մէկ ներկի պատճառ ունի մեկուսի կենակու:

Ինչ կ'որոճայ այդ բազմութիւնը

Աշխարհի բոլոր սփրփումներն ու թեգերը չեն կրնար տալ այնքան նպատակութիւն և երանութիւն, որքան կենդանի աշխատանքը ժողովուրդի ճոցին մէջ, անոր բարիքին համար: Քաղցեւի բարեկրներու ժտարն ու շքեղանքը, գործարաններու ծովին ու մուրը դուար թէ փոխարինեն Հայքին բուխերիկի մը օրհնութիւնները: Մեծ երկիրներու մէջ, երիտասարդները ընդհանրապէս կ'ուսանին ասպարէզի համար, պետական կամ առևտրական: Արջ շարքատակ իրականութիւնը չի կրնար տանիլ այդքան պերճանք: Հայ երիտասարդութիւնը ինչ իրեն չպիտի ներէր աչքիքը գոց իյնալ այդ ձամբան, որ չափազանց լլղճուս է:

Եւ միայն մեր մանրանկար Հայրենիքը չէ որ պէտք ունի արհեստագրական աւելի: Աշխատակ հարկի հազարներ՝ Եփրատի ափերէն մինչև Ատրանտան, արմատախիչ ցիրուցան և շուարուն: Ինչու փրիտասարդութիւնը չպիտի նետուէր անոնց մէջ, հետքեր ձգելով ձամբուն վրայ, արդարացնելով իր կռչումը: Այս թափառական բազմութիւնները նոյնքան կարօտ են նոր խօսքի և աշխատանքի: Անոնք ալ անկալութիւններ ունին «ուսումնական» ինչպէս, երէկ, Ձէյթունի կամ Մասունի ժողովուրդը: Ֆրանսա, Յունաստան, Պուլկարիա, Սուրիա բայց դուռեր են՝ բեղնուր աշխատանքի համար:

Մ'ըր են մշակները:

Մենք ի գո՛ւր կը փնտռենք նոր համալսարաններու խակական դրոշմը, անոնց հարազատ արտայայտութիւնը՝ մեր հանրային կեանքին մէջ: 1860, 1880, 1900 — այս շրջանի սերունդները որոշ հետքեր ձգեցին իրենց կոխած տեղերը: Մ'ըր է այն լատիկական գիծը որ բարի վկայութիւն պիտի տայ յաջողիկուն համար: Այդ գիծը մենք չենք տեսներ նոյն խակ գուտ մտաւորական գրական դեանի վրայ: Եւ ամենէն ամառային — Ինչպէս դարպասք են աշխարհաքաղաքացիական ճեքճեքումները...

Վա՛յ անոնց որ ոչ երբ ունին, ոչ պատմութիւն:

Մ'ըն է ձեր պատմութիւնը, տղք:

Ո՛րք է ձեր շուկը:

Շ. ՍՈՒՐԷՆ

Ասացուած հրատարակութիւններ

1. Իռչնակցութեան Քաղաքական Ուղիւն. — (X-րդ Ընդհանուր Ժողովի աւիթով.) Վ. Նաւասարդեան, 179 էջ, Մատենաշար «Յուսարթ» ի թիւ 10, Գահիրէ, 1925: Գին՝ 7 եգ. պահ.:

2. Հայրենիք մամագիր, Յուսիս, թիւ 8 (32), Բոստոն, 1925, գին 50 սէնթ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Կ Ր Ի Ց

(Ս Ե Փ Ա Կ Ա Լ Ն Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ն Ն)

... Մայիսի 23

... ամիս է Հայաստանում եմ գտնուում. արդէն առիթ եմ ունեցել լինելու զիւղերում ու զաւտառական քաղաքներում և մտնէն շփելու ժողովրդի հետ: Առ այժմ՝ հարգրդում եմ միայն ընդհանուր տպաւորութիւնս: Ամէն տեղ պատկերը նոյնն է. «կոմունիզմ» իրեն համար, ժողովուրդը՝ իրեն համար: Խորթացումը ուժեղ է, մանաւանդ, զիւղերում՝, որ կոմունիստները փոքր թիւ են կազմուր, և ընդհանուր առմամբ դարձել են չինովիկների մի կաստա, որոնց վրա ամենքը կասկածով ու թշնամութեամբ են նայում:

Որ ժողովուրդն ու բոլշեւիկները տարբեր բանակ են, առանձնապէս շեշտած կերպով երևան է եկել Հայաստանի խորհուրդների վերջին ընտրութիւնների ժամանակ, այս տարւայ գլխին: Հակառակ կոմունիստական կուսակցութեան ձեռք առած կարող միջոցները, բոլոր զիւղերում՝ անխախտ անցել են «անկուսակցական»ները, որ սակ է բոլշեւիկների հակառակորդները: Հայաստանի զիւղական խորհուրդներում տիրող տարրը «անկուսակցական» զանգուածն է որը ոչնչով չի կապւած խորհրդային իշխանութեան հետ և միայն հանդուրժում է նրա գոյութեանը: Սա ընդհանուր երևույթ է. կացութիւնը նոյնն է և Ռուսաստանում:

Գիւղացիութեան ընդամուտի դիրքը օտարակ անհանգստութիւն է պատճառում բոլշեւիկներին, որոնք զգում են, թէ հետզհետէ կործանուում է իրենց ոտքի տակի հողը: Այգ է պատճառը, որ թէ Թիֆլիսի համամիութենական համագումարում, թէ կոմունիստական կուսակցութեան վերջին խորհրդաժողովում և թէ Միութեան խորհուրդների վերջին համագումարում ուշադրութեան կեդրոնն էր կազմում գիւղացիական հարցը. բայց է թողնուած «երեսներս դէպի գիւղ» նշանաբանը. որը չափով կրճատուած են գիւղացիութեան վրա դրւած հարկերը, ընդունւած է հողը կապալով տալու և հողազործութեան մէջ վարձու աշխատաւոր բանեցնելու դրութիւնը: Գիւղական տարրերի ճնշման տակ էր, որ կառավարութիւնը հարկադրեց գիւղացիներ անել ևւաշխատակ, անհատական նախաձեռնութեան ասպարէզում. օրէնք է անցկացւած, որով մասնաւոր մարդկանց իրաւունք է արտում գործարաններ բանալու և առանց արտոնութեան մինչև 200 բանուր աշխատեցնելու, իսկ աւելի համար պէտք է արտոնութիւն ստանալ: Որոշւած է վարկային դիւրութիւններ ընձայել արդիւնաբերողներին ու առևտրականներին: Մի խօսքով՝ «կոմունիստական» իշխանութիւնը չորս ոտքով կանգ է առել կապիտալիստական կարգերի գետնի վրա և ի հերքումն իր երէկայն գաղափարների ու գործունէութեան՝ ջատագով է դարձել «կոմունիստական կապիտալիզմ...»

Թէ Մոսկայից փչող նոր հոգիերը ինչ արդիւնք կը տան, դեռ, ի հարկէ, որոշ բան կարելի չէ տեսլ, բայց մի բան պարզ է. ժողովրդի մէջ զգացում է լաւ թիւն ա կ ի դիտակցութիւնը և, ընդհակառակը, կոմունիստները, մանաւանդ

խոնարհ խաւերը գրում են իրենց չափազանց ճշնւած. էլ ինչո՞ւ համար պէտք է աւերակ դարձէր երկիրը, քանդուէր հիմնաստակ ամբողջ անոնտութիւնը, ինչո՞ւ համար թափանց այնքան արին և արևելցին անհաշիւ զոհեր, եթէ նորից պիտի վերահաստատուէր նախկին դրութիւնը: Դեկաւարները կաշ-ւից դուրս են գալիս հաստացնելու համար շարքերին, որ ոչինչ չի պատահել և որ այս նոր դիշուսները բնաւ չեն հասկատում կոմունիզմին, որ, ընդհակառակը, չէնց կոմունիզմի վերջնական յաղթանակը պահանջում է մասնաւոր արդիւնաբերութեան և առևտրի զարգացումը ներկայ մուսսոստանում, բայց փաստն այնքան է վրան բաց, որ հազիւ թէ յաջողութիւն ունենան. լայն զանգուածները շնտ են չհասթափւած...

Հայաստան եկողի առաջին տպաւորութիւնը այն է, որ ժողովուրդը զարմանալի կերպով պահել և հողեկան արիւն-թիւնը և ամբողջ էութեամբ փարած է հողին ու աշխատանքին: Հողից լեցում է բերկրանքով, երբ պտտում են երկրում և տեսնում ամէն կողմ ցածրած արտեր, մշակուած ագիկներ, մեղաշուն աշխատանք ու եռուչկո: Անտարակոյս, Հայաստանը չի ընկճւել կրած հարւածներէր տակ, հասաքել է ինքնիրեն և ամուր քայլերով շարունակում է իր ճամբան: Այս երեւոյթի մասին քաջատրութիւն են տալիս. կարծում են, Թորհրդային իշխանութիւնն է աղբիւրը շինարարութեան: Այն ինչ, շատ բան կատարում է հ ա կ ա ու կ Թորհրդային իշխանութեան կամքի ու քաղաքականութեան: Հայաստանի վերաշինութեան միակ ազգակը Հայ ժողովուրդը ինքն է՝ իր անօրինակ տոկոսութեամբ և աշխատանքի սիրով, թէև Խորհրդային իշխանութեան հաստատած քաղաքական ու տնտեսական կարգերն այնպէս են որ շատ հանրազուտ ձեռնարկներ խեղդում են չէնց ընում, շատերն էլ հազիւ քար են տալիս իրենց գոյութիւնը: Ինչ հրաշքներ կը գործւէին, եթէ ժողովուրդը թողնէր ազատ և իր շինարարական բնազդը արտայայտի անկաշխուհի. անկասկած Հայաստանում բազմապատիկ աւելի գործ կատարած կը լինէր...

Կառավարութիւնը, ի հարկէ, որոշ շինարար աշխատանք կատարում է. ժողովուրդին քամելով և հարկերի ու այլ միջոցներով հաւաքած գրամի մի մասով բոլշևիկները շինում են ջրանցքներ, ելեկտրակայաններ, ճանապարհներ ու կամուրջներ, բայց մինչև այժմ չեն կարողացել շինել կամուրջ իրենց և ժողովուրդի միջև: Եւ այդ զարմանալի չէ, որովհետև նրանց քայլերը հիմնուած չեն ազգային տնտեսութեան ու ժողովրդի կամ ազգային մշակութիւն զարգացման սկզբունքի վրայ, այլ կատարում են քաղաքական դիտումներով: Բաքուի թագաւորներն ու Եգիպտոսի Փարաւոններն էլ կառուցանում էին հոյակապ ջրանցքներ ու բուրգեր, բայց դրանով ամենին չէին բազարում բռնապետ ու ժողովուրդի հարստագործ լինելուց: Բոլշևիկները, ինչպէս և Հին դարերի բռնապետների համար ժողովուրդը միջոց է սուկ, հում նիւթ. նպատակը յաճախ ոչ էր ամբուցութիւն շունի տեսլ ժողովուրդի շահի ու բարեկեցութեան շնտ: Այս է պատճառը, որ Հայաստանում առանձնապէս խրախուսում են այն ճիւղերը, որոնք անմիջապէս օգտակար են կեդրոնի՝ Մոսկուայի համար. զարկ է տրւում բամբակամշակութեան, որովհետև բամբակը դնում է կեդրոնական մուսսոստանի գործարանները.

հող է տարւում երկաթուղու վրա, որովհետև նա ծառայում է մուսսոստանի ազգամարտական և առևտրական կարիքներին. դրամ է ծախուում Ալյահիբերդի ու Դափանի հանքերի վրա, որովհետև պղինձը անհրաժեշտ է ուսուսկան արդիւնաբերութեան համար և այլն: Բնական է, որ անկից որոշ չափով օգտւում է և տեղական ժողովուրդը, բայց այդ չէ իշխանութեան անմիջական միջը. ժողովուրդը օգտւում է այնպէս, ինչպէս օգտւում էր և ցարերի ժամանակ. ապա, ուրեմն, իսչումն է կոմունիստական կարգերի յատկանշական կողմը:

Այո՛, Հայաստանի վարիչները չեն կարողանում կամուրջ անցկացնել իրենց և ժողովուրդի միջև, հակառակ թախուած ճիւղերի: Դրա պատճառը այն է, որ ժողովուրդը տեսնում է, թէ ամէն տեղ ինքը արհամարհուած է, իր զգացումները ոտքի տակ են տրւում, իր իրաւունքները բռնաբարւում են: Հայաստանը շարունակում է մնալ Ձ է կ ա յ ի և Կ օ մ կ ու ս ի տիրապետութեան տակ: Երկրի իրական իշխանութիւնը իրապէս ժողովուրդը չէ, այլ կ օ մ կ ու ս ի կերպարան կօմիտէն. ժողովրդական գործակարների խորհուրդը հյուս և հնազանդ խրճիկ է միայն Ձ է կ ա յ ի ու Կ օ մ կ ու ս ի դիկտատուրայի ներքոյ: Իսկ ուր կայ փոքրամասնութեան զերիշխանութիւն, այնտեղ, ի հարկէ, խօսք չէ կարող լինել կառավարութեան և ժողովրդի փոխադարձ համակրանքի մասին:

Այսպէս, տեղի են ունենում խորհուրդների ընտրութիւններ: Ազգին արդու է հանում, թախում է անսպառ եռանդ: Ցուցակներ են ներկայացուած, պայքար է մղւում, յաղթութիւն տարւում, բայց ոչ ընդդիմադիր տարր կայ, ոչ հակառակող: Ազատ խօսք, քննադատութիւն գոյութիւն չունի. կոմունիստները իրենց հաշին և՛ ընտրում են, և՛ ընտրում: Ընտրական գործը համեմատաբար ազատ է գիւղերում, ուր կօմունիստները կամ իսպառ չկան, կամ շատ թոյլ են:

Մտաւորականութիւնը ճշնւած է ու խեղճացած: Նրանք, որ շարունակում են մնալ անհաշտ բոլշևիկներին վերաբերմամբ, դուրս են շարուած պետական պաշտօններից և սարափելի զժառանգ կեանք են վարում: Միշտ անօթի, ցնցոտիապատ, ենթակալ Ձէկայի հայածանքի: Նրանք, որոնք «ճանաչել» են Թորհրդային իշխանութիւնը, պահւում են պաշտօններում, բայց տնտեսապէս նոյնքան նեղւած են: Մասնաւորապէս ծանր է գիւղական ուսուցիչների վիճակը, որի շնորհիւ գիւղական ուսուցչութեան կրթական մակարդակը չափից աւելի իջել է. շատ գիւղերում ուսուցիչները տարրական կրթութեան տէր մարդիկ են: Ապահով են և հանգիստ ապրում են միայն կօմունիստները կամ կօմունիստների կառքի յետեկց վաղորդները: Սրանք հաջի հոգից ազատ են, ունին լաւ բնակարաններ և ապրում են կուշտ:

Գրկական գործը, հակառակ արւած մեծազոր ու է կլ ա մներին, իր բովանդակութեամբ երբեք այնքան թշուառ միճակի մէջ չի եղել, որքան է այժմ. փաստորէն զպրոցը կօմունիստական դարձնից է: Նոր սերունդ պատրաստում են կօմունիստներ: Աշակերտութիւնը սխտեմատիկ կերպով անբարոյացում է: Դպրոցում պայքար է մղւում ազգային

ողու և ընտանիքի դէմ: Ազգային պատմութիւնը հայաճած է: Ազգային գրքերը—Ռաֆֆի, Մերեցի, Գամառ-Փաթիպա—արգիււած: Խոսիւ արգիււած են և՛ ազգային-յեղովորական երգերը. «Մեր Հայրենիք» երգելու համար բանտ են դնում:

Կրօնի դէմ՝ յարուցած պայքարի տղայական ձեռքեր այն հետեւանքն են ունեցել, որ ժողովուրդը սկսել է աւելի շատ դառաղել եկեղեցով ու հոգեւորականութեամբ: Երբեք՝ Հայաստանի եկեղեցիները այնքան լիքը չեն եղել, որքան կօմունիստական իշխանութեան օրով: Եկեղեցի գնալը, կրօնական ծէսերին ու թափօրներին մասնակցելը համարուած է հակաբոլշեւիկեան ցոյց, և մամուլի ու խօսքի ազատութեան իրաւունցից զուրկ ժողովուրդը այդ միջոցով է արտայայտում իր ընդդէմապիւր դիրքը հանդէպ Խորհրդային իշխանութեան:

Մարդ հարկ է տալիս. ձրն է այն ոգիք, այն ընկերային իւրը, որի վրա յենւած են բոլշեւիկները: Հայաստանում աշխարհի յենքան չկայ: Բանտըութիւնը գոհ է «բանտարական» իշխանութիւնից, որովհետեւ իր վիճակը աւելի վատ է, քան ցարական օրերին էր: Գիւղացիութիւնը թըշնամի է «գիւղացիական» իշխանութեան, որովհետեւ այս վերջինը զիւրը թայանելով է ապրում: Մտաւորականութիւնը չի հաշտուում «պրօլետարական դեկտատուրայի» հետ, որովհետեւ ճգմւած ու կաշկանկւած է իր միտքը մեծ զիւր է յենւում, ապա՝ Խորհրդային իշխանութիւնը.— այրօր էլ, ինչպէս երէկ, միայն կօմունիստական կուսակցութեան անդամներէ, Ձեկայի և կարմիր բանակի վրա:

Կօմունիստական կուսակցութիւնը ծանր՝ գերեզմանաւաքարի պէս ճնշում է Հայաստանի ժողովրդի միտքն ու հոգին: Ձեռնած որ կեանքը նիւթական տեսակէտից համեմատաբար առաջ է դնում, ո՛չ որ գոհ չէ տիրող կարգերից, որովհետեւ մարդկային միտքը խեղդւած է ու հանրային կեանքի իրնին ու ծիծաղը կազմող ազատութիւնը բռնաբարւած: Կառավարութիւնը ձրոտում է ժողովուրդը վերածել անբան հօտի և ընդհանուր լուծեան ու հնազանդութեան վրա հաստատելով տեւականացնել իր միահեծան տիրապետութիւնը: Այս է, որ անիրազօրծելի ցնորք է, որովհետեւ չի եղել երբեք մի բունապետութիւն, որ տապալւած չլինի ժողովրդի կողմից: Այդ ճակատագրից չեն խուսափիր և բոլշեւիկները:

ՄԻՄԵՌԻՆԱԿ

Ա Ր Տ Ա Ք Ս ՈՒ Մ

Հ. Յ. Դաւնակցութեան 10-րդ Ընդհ. Ժողովին որոշումով, Կուսակցութենէն արտախուսւած են բժ. Արեակ Ղազարեան (Պարսկաստան), բժ. Միխայլէ Մաճեղեան (Լոնոնոն), Յովակ Յակոբեան (Պարսկաստան):

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐՏԱՍՈՒՅՄԱՆՈՒՄ

Մ Ի Ս Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Հոկտեմբերեան յեղաշրջումը և յետագայ քաղաքացիական կռիւները արտասահման շարտեցին մօտ երկու միլիօն Ռուսեր, որոնք ցրւած են ամբողջ աշխարհում՝ զխաւոր կեդրոններ ունենալով Փարիզը, Պրագան, Բեռլինը, Նիւ-Եօքքը, Սերբիան և Բոլզարիան: Ռուսաստանի բոլոր դատակարգներն ու ընկերային-քաղաքական հոտանքները ներկայացւած են այստեղ՝ ծայրայեղ միապետականներից սկսած մինչև անիշխանականները: Ռուս մտաւորականութեան խոշոր մասը —լաւագոյն գրագէտներ, գիտնականներ ու արուեստագէտներ— տաւրագրութեան մէջ են և ամէն կողմ տարածուած են ռուսական գեղարուեստն ու գիտութիւնը: Չնանգան կեդրոններում գոյութիւն ունին տասնեակներով հրատարակչական ընկերութիւններ, լրագիրներ, պարբերականներ, դպրոցներ, թատրոններ, բազմաթիւ կրթական ու մշակութային հիմնարկութիւններ, մինչև իսկ համալսարան Չեխօ-Սլովակիայի մայրաքաղաքում:

Ռուս մտաւորականութիւնն արտասահմանում ևս չի պաղել հանրային-քաղաքական կեանքից: Ընդհակառակը, հարեմիքի իր բոլոր յատկութիւնները —կուսակցական տարամեթ պայքարը, հաւաւածամոլ ոգին— գարգացնում է և տարագրութեան մէջ, եւ դրանով է բացատրուում, որ տարագիր գանգաւանները մի կողմից լարուած հետաքրքրութիւն են ցոյց տալիս դէպի Ռուսաստանի քաղաքական ճակատագիրը, միւս կողմից երևան չեն բերում և ո՛չ մի կամք միանալու որևէ հիմնական գաղափարի շուրջ՝ ընդհանուր թշնամու դէմ միացեալ ճակատ ստեղծելու համար: Կոտորակուած ու պառակտած՝ ռուս տարագրութիւնը շարունակուած է ապարդիւն տեղը վատնել իր ուժերը կրքոտ եւ իրերաջինջ կուսակցական պայքարի մէջ և այդ պատճառով մնում է անոյժ և արհամարհելի քանակ:

Մենք գեռ առիթներ կ'ունենանք, գրադելու ռուս տարագրութեան քաղաքական ապրումներով, այս անգամ կ'ուզէինք շատ թոռցիկ կերպով ներկայացնել այն հոտանքներն ու խմբաւորումները, որոնք գոյութիւն ունին արտասահմանի ռուս գանգաւանների մէջ: Ընդհանուր գծերով, ռուս տարագրութիւնը կարելի է բաժանել երեք մասի. —միապետականներ, հանրապետականներ և բոլշեւիկներ ու բոլշեւիկութիւն անողներ: Կանգ առնենք այս երեքի վրա առանձին, առանձին:

Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ տարագիր ռուսների մեծագոյն մասը եթէ ոչ կուսակցականորէն, գէթ մտայնութեամբ միապետական է եւ այդ հասկանալի է. այն հարիւր հազարաւոր

կամաւորները, որոնք նահանջեցին Վրանգէլի հետ ղէպի Եւրոպայ և Գոլշակի բանակի ձաւցորդները Միբրից, չնչին բացառութեամբ միապետական սպաններ, պաշտօնեաներ ու զինւորներ էին: Միապետական էին և այն բազմահազար փախուսականները, որոնք հոկտեմբերեան յեղաշրջումից առմիջապէս յետոյ, զանազան ճանապարհներով, խուճեցին ղէպի արտասահման. իշխաններ՝ նահանգապետներ, զօրավարներ, կալւածատէրեր, բարձրաստիճան պաշտօնեաներ, եպիսկոպոսներ, դրամատէրեր — տարագրութեան մէջ պատկառելի տղուս են կազմում որոնք, և ի հարկէ, ընդհանրապէս միապետականներ են:

Ի նշ և ոռւս միապետականների նպատակը: Նրանք ձգտում են վերականգնել Ռոմանովների հարստութեան տիրապետութիւնը: Այս կէտում տարկաբաժնութիւն չկայ նրանց մէջ. բաժանումը տեղի է ունենում թեկնածուի շուրջ. մի մասը կամենում է ցարերի գահի վրա տեսնել նախկին մեծ իշխան Կիրիլ Միխայովիչին, որը հիմնական օրէնքների համաձայն օրինաւոր ժառանգն է համարւում, աւր պատճառով նրա հետեւորդները կռւում են շեփոխներ (օրինապահ). միւս մասը պաշտպասում է կովկասի նախկին փոխարքայ Նիկոլայ Նիկոլայիչի թեկնածութիւնը: Այս երկու խումբերը կատարի թշնամի են միմեանց և անողոք պայքար են մղում իրար դէմ: Մնացած մեծ իշխանների մեծ մասը, ինչպէս և Նիկոլայ Բ-ի մայրը՝ Մարիա Ֆէօօրօօվնան, կողմնակից են Նիկոլայ Նիկոլայիչին: Աս վերջինը «հաճել» է զգլխաւորել ազգային շարժումը՝ Ռուսաստանի ռէժիմի վերջնական ձևի որոշումը թողնելով «Ջէմսիկ Սօբօր»ին (Ազգային ժողով): Նիկ Նիկոլայիչի կուսակիցները համարւում են աւելի «ազատամիտ», իրենց շարքերում ունին բաւական յայտնի անուններ (Սարուվէ, Կարաշով, Բուրգը, Մարկով զօր. Վրանգէլ, զօր. Կրասնոօվ, կապալների պետեր կայն): Իրենց զխաւոր օրգանն է Փարիզի «Վօզրօժդնիէ» օրաթերթը, որ լոյս է տեսնում Պ. Սարուվէի խմբագրութեամբ և հայ դրամատեր Արք. Ղուկասեանի հրատարակութեամբ: Նիկոլայ Նիկոլայիչը Սարուվէի հետ ունեցած իր վերջին մի տեսակցութեան մէջ յայտարարել է. թէ ինքը ճանաչում է Ռուսաստանից անջատուած պետութիւնների անկախութիւնը և, առհասարակ, իրեն տալիս է ազատական հովեր: Այս խմբի միապետականները պնդում են, որ իրենց ունին հետեւողներ և Ռուսաստանում, մասնաւոր կարմիր բանակի մէջ: Ռուս ազգայնականների չափաւոր թեւը յարում է այս հոսանքին: Սրանց կեդրոնն է Փարիզը, որի արւարձաններից մէկում ապրում է և ինքը՝ պետը:

Կիրիլեանները աւելի ազմկարար են, ուղղաձիգ և խաւարամիտ: Սրանք կեդրոնացած են զխաւորապէս Սերբիայում, Բաւարիայում և Ղոնւ. գարիայում: Կիրիլը, որ իր ցարերի գահի տեղակալի պաշտօնն ստանձնելը և իր օրինաւոր միակ ժառանգ լինելը յայտարարեց մեծագործ հրովարտակով, այժմ իրեն համարում է «կայսր Ամենայն Ռուսիոյ», ունի իր «պալատն ու պալատական»

ները». պահում է իրեն իբրև կայսր, աստիճաններ ու պատանդաններ է բաժանում, պաշտօններ է տալիս, մի խօսքով, պահում է իրեն իբրև մի վեհապետ, որ այսօրվաղը պիտի վերադառնայ հայրենիք ու նստի իր պապերի գահը: Շրջապատւած է ամէն տեսակ կասկածելի տարրերով. ամենաձայնայեղ միապետականներն ու բռնի միջոցի կողմնակիցները նրա հետ են: Այս հոսանքը աղքատ է մտաւոր ուժերով, բայց աւելի հարուստ դրամով: Նիւթական աջակցութիւն է ստանում գերմանացի և հունգարացի միապետականներից և, մասնաւոր, ռուսական թագաւորական անից. Կիրիլի կինը և ռուսական թագուհին քոյրեր են: Ամիսներ առաջ «կայսրուհին» ճամբորդեց Ամերիկա և այնտեղից էլ բերեց զուճարներ: Այս հոսանքի կողմնակիցները պնդում են, որ իրենք Ռուսաստանում ունին բազմաթիւ հետեւորդներ և որ կարմիր բանակի հրամանատարական կազմի մի կարեւոր մասը իրենց ազդեցութեան տակ է զտնւում: Բէլգրատի «Նօվօյէ Վրէժիան» արքեպիսկոպոսն է:

Ինչպէս ասացինք, միապետական այս երկու ճիւղերը անհաշտ թշնամի են միմեանց և ահագին ոյժ ու դրամ են վաճառում միմեանց դէմ պայքարելու համար: Այս պայքարը յաճախ իջնում է բեմերից և մամուլի էջերից և վերածւում է կոփամարտի և սուսերամարտի: Այս հանդիմանքին պէտք է վերագրել, որ չնայած թեւական հազարներ կռուութեան՝ միապետականները ղեկավար դեր չունին զազդութի ռուսութեան մէջ, և հանրային ու մտաւոր կենսի վրա նրանց ունեցած ազդեցութիւնը բաւական սահմանափակ է: Համեմատաբար աւելի աչքի է ընկնում նրանց ազդեցութիւնը Պրագայում, ուր հաւաքւած են շատ միապետական պրօֆէսորներ ու հանրային գործիչներ: Պրագան է նաև կեդրոնը, այսպէս կոչուած «Եւրաղիկան» հոսանքի, որ ոռւս ազգայնապետութեան թեւեւ հաւատացող ազգայնական-մտաւորական մի խմբակ է, որի շարքերում կան և խոշոր գիտնական ուժեր. այս խմբակը նոյնպէս միապետական զուճաւորում ունի:

Հետաքրքրական է արձանագրել և այն, որ միապետականները անհամեմատ աւելի են ատում դէմօկրատներին ու օսցիալիստներին, քան բօլշեւիկներին: Բօլշեւիկեան գործելակերպը, դիկտատորական ձեւերը իրէպլ են համարւում ռուս միապետականների համար: Իրենց հերթին, ռուս բօլշեւիկներն էլ աւելի համակրում են միապետականներին, քան դէմօկրատ ու օսցիալիստ տարրերին: Կարելի է շատ օրինակներ բերել, ուր միապետականներն ու բօլշեւիկները գործակցում են, երբ պէտք է լինում պայքարիլ օսցիալիստների դէմ: Միապետական ու բօլշեւիկ մամուլը յաճախ միանոյն ձեւով են արտայայտւում օսցիալիստների դէմ: Այս փաստը բացատրւում է և՛ նրանով, որ միապետականների մէջ քիչ չեն այնպիսիները, որոնք համոզուած են, թէ ցարական իշխանութիւնը Ռուսաստանում պիտի վերահաստատուի բօլշեւիկեան դիկտատուրայի միջոցով: Նրանք հիանում են բօլշեւիկների «երկաթէ կարգապահութեան» և ուրա-

խուժեամբ են դիտում, թէ ինչպէս «ամբողջ» արդուում է Չէկայի կրունի տակ: Այս բոլշեւիկա-սիրութեամբ է բացատրուում է այն, որ միապետա-կանները ոչ միայն իրենք չեն կուում խորհրդային իշխանութեան դէմ, այլ ուրիշներին էլ են խանգա-րում. միապետական ռուս սպաները, յաճախ, զրտ-նուում են բոլշեւիկներին ծառայութեան մէջ, լրտե-սութիւն են անում նրանց հաշիւին և ամեն կերպ աջակցում են նրանց: Նրանց աչքին «դաւաճան կէրէնսկիի» ստեղծած քայքայումից յետոյ, բոլշե-ւիկները «հաւաքում են ռուսական հողերը» և «ռուս ազգային գործ» են կատարում:

**ԵՐԿՈՒ ԽՕՄԿ**

**«ԴՐՕՇԱԿ»Ի ՎԵՐԱՇՐԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Մեր պատմութեան վերջին շրջանի անցքերը ան-ծաղոյն հարածը տւին հայկական համախմբումին: Մօտաւոր թւերով հայութիւնը բաժանւած է այսօր երկու խոշոր հատուածի. նրանցից մէկը ամփոփւած է հայրենիքում, իսկ միւրը գտնուում է տարազրու-թեան մէջ: Նիւթապէս անճնար է այսօր ձեռնար-կել հայութեան ամբողջացման գործին իր մայր հայրենիքում:

Այս աշխատանքին լրջօրէն ձեռնամուտի կը լի-նեն նրանք, որոնք կը գործեն պատմական հաս-տատուն շրջանի մէջ: Այսօր, այս անցողակի շրջա-նին, անհրաժեշտ է ամբացնել հոգնկան կապերն այս երկու հատուածների մէջ և կերտել հոգեքանական պատւանդանը ապագայ նիւթական ամբողջացումի: Հոգեքանօրէն կայ այսօր «Հայաստան» տարա-զրութեան մէջ և կայ միաժամանակ «սարագործքին» Հայաստանի մէջ:

Անհրաժեշտ է, որ սերտանան կապերը այս երկու բանակների միջև, ստեղծուի մէկ լեզու մեր բնակչութեան երկու ափերի վրա:

Այս երախտաշատ աշխատանքը լաւապէս կա-րող է կատարել խօսքը, առաւել ևս՝ մանուշի մի-ջոցով:

Փորձւած մարտիկներից Գէորգիյ Պլեխանովը ճիշտ այսպիսի մէկ շրջանի համար յորդորում էր իր հետեւորդներին պայքարի մէջ գործադրութեան դէն Եօթ լաւագոյն գէնքեր.—

- Առաջին — պրոպականդ:
- Երկրորդ — նորից պրոպականդ:
- Յորրորդ կրկին պրոպականդ:
- Չորրորդ — պրոպականդ աննկուն թափով այն դաւանանքի, որ ունիք:
- Հինգերորդ — էլի պրոպականդ:
- Վեցերորդ — դարձեալ պրոպականդ:
- Եօթերորդ — պրոպականդ՝ յստակ, որոշ, յամառ ու հետեւողական ձեւով:

«Դրօշակը» պիտի լինի այդ գէնքերից ամենէն ազդուն և ամենէն կենդանին: Նրա ձայնը հաւասար ուժգնութեամբ պիտի լսուի և Երկրի մէջ, և՛ Երկրից դուրս: Նա պիտի միացնէ Երկրում հոգեքանօրէն տա-րագիր վիճակի մէջ գտնուող հայութիւնը տարա-

զրութեան մէջ գտնուող «Հայաստանի» հետ և ստեղ-ծի ազգային մէկ կուռ եւ ամբողջական զանգաճ, որ տագորւած է մէկ եւ համազգային ազատարար իդէալով:

Նա պիտի շարունակէ այն գործը, որ սկսել է տասնամեակներ առաջ ու չի աւարտել մինչեւ այսօր:

Չմոռանա՛ք, որ պարտւած են այսօր Դաշնակցա-կանները միայն, սակայն յաղթական է Լ. Յ. Դաշնակ-ցութիւնը: Հակառակորդը ամբողջութեամբ իւրացրեմ է մեզնից մեր դաւանանքը, առանց, սակայն, հարա-զատօրէն գործադրելու այն:

Նա այսօր, «կողմնակից» է ազգերի քաղաքա-կան ինքնորոշման, երբ ինքնորոշման իրաւունքը թերեւ երբեք այնքան անարգօրէն կապուած չի եղել:

Նա «դաւանում» է մեղեցիկայի գաղափարը՝ ստորնապէս դաւելով նրա դէմ:

Նա հողերի համայնացման « Գատազով » է իր դեկրետներով՝ ռիւբրիմ հակառակորդը մնալով միա-ժամանակ այդ նոյն համայնացումի:

Նա անհատի երկրպագութեան մի նոր պաշ-տամունք է ստեղծել, երբ անհատը երբեք այնքան դաժանօրէն անարգւած ու արհամարհւած չի եղել, որքան այսօր:

Այսպէս նաեւ միւս հարցերում: Բոլշեւիզմն իր ձեւական դաւանանքով կանգ-նած է այսօր մեր գաղափարական դիրքերի վրա, նկատելով միաժամանակ մեզ իբրեւ ամենէն ան-հաշտ թշնամին:

Մեր խօսքը փոխ առած, նա մեր դէմ կուում է կացնով, որովհետեւ գիտէ, որ կրկնում է մեր գա-ղափարը՝ կեղծելով ու կեղծելով՝ խորապէս վար-կաբեկում է այն:

Դիմակագրած անել վտանգաւոր թշնամուն, պարզել նրա նենդ էութիւնը զանգաճին, ցոյց տալ նրա գաղափարական ամբողջ խարխուռ ու աւեր վիճակը, յամառօրէն տանել մեր գաղափարի քարոզը, — ահա թէ ինչ պիտի լինի «Դրօշակ»ի դերը այս անցողակի շրջանում:

Effectus exsuperat causam.— չմոռանա՛ք ընկե-րային զարգացման «օրէնքների» այս անխոցելի ճշմարտութիւնը: Չանգաւածների վարած պայքարի մէջ ամէն ինչ նախասահմանւած չէ երբեք: Արդիւն-քի մէջ իր նկատելի մասն ունի նաեւ մեր ուրոյն աշխատանքը, որ մենք կը բերենք այսօր, պայքարի ամենէն յարմար ժամին եւ ամենէն յարմար ձե-ւերով:

«Դրօշակ»ին է վիճակուում այս դերը ամենէն մեծ չափերով:

Առաւելապէս Երկրում, ուր այսօր բոլշեւիզմը անցել է բարեկրօնեան մի երկրորդ աշտարակաշի-նութեան, որի արդիւնքն առաջինից տարբեր, ի հարկէ, չպիտի լինի:

Վ. ՆԱԽԱՍԱՐԻՆԵԱՆ

# ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ

Միջազգային ընկերվարական շարժմանը և մասնաւորապէս Ինտերնասիոնալի կենտրոնին հայ ընթերցող հասարակութիւնը ընդհանրապէս անիրազեկ է մնում: Դրա պատճառն այն է, որ մեր արտասահմանեան մամուլը, համակերպելով տարագիր հայութեան առօրեայ տրամադրութիւններին՝ աւելորդ է համարում գրառել նրա անմիջական հոգեբերից գուրգ բանուղ խնդիրներով, իսկ Խորհրդային Հայաստանի մամուլի մէջ, հասկանալի պատճառով, ժամանակակից ընկերվարական շարժումը ծուռ հայելու արտացոլումով է միայն հանդէս գալիս:

Մինչդեռ այդ շարժման մասին ճիշտ ըմբռնողութիւն ունենալը շատ անհրաժեշտ է ոչ միայն հայ աշխատանքող զանգուածների գասակարգային գիտակցութեան, այլ և ընդհանրապէս հայ ժողովրդի քաղաքական հասունութեան տեսակետից: Չպէտք է անտեսել, որ ընկերվարական շարժումը արդէն գուրս է եկել տեսական վարդապետութեան կամ հասարակագիտական աշխարհայեացքի շրջանակից և դարձել մի իրական ազգակառուցիչական ժողովուրդների քաղաքական-ընկերային բախտը որոշող գործերի մէջ: Այսօր չկայ ևս թիչ ըստ քաղաքակիրթ երկրի, ուր միտհանան իշխողները շատիպատ չլինին հաշիկ նստելու ընկերվարական կազմակերպութիւնների հետ:

Հայ ժողովրդի ճակատագիրը բազմաթիւ թեւերով զնայած է միջազգային կենտրոնին: Այդ ճակատագիրը կենսավարելու համար նա պիտի քաղաքական հասունութեամբ մտնենայ միջազգային կենտրոնի միջև ուժերին, պիտի կարողանայ շահել նրանցից իւրաքանչիւրի գերն ու արժէքը, որոշելու համար այն հաստատակիւնը, որի ուղղութեամբ նա պէտք է առաջ շարժուի՝ իր ուժերի նազազդոյն սպառումով առաւելագոյն արգիւնքների հասնելու համար: Այդ ուժերի մէջ ընկերվարական շարժումը կարեւոր տեղերից մէկն է բռնում այսօր և, եթէ գատելու լինինք նրա յողթական ընթացքից, ամենակարեւոր և ամենազաւական տեղը պէտք է բռնէ վաղը:

Դրօշակը առանձին բաժին յատկացնելով այս շարժումը՝ պարբերաբար պէտք է անդրադառնայ նրա ներսն և շարժը տեղի ունեցող խոշոր երեւոյթներին: Այսօր մենք համառօտ ժամանակագրութեամբ առաջ ենք բերում այն գլխաւոր դէպքերը, որ տեղի են ունեցել ընկերվար. Ինտերնասիոնալի մէջ. Դրօշակի գազարուժից մինչև Լամբուրգի Լամպուրգը:



Դրօշակի գազարման միջոցին (1914 թ. աշնան) երկրորդ Ինտերնասիոնալը փաստօրէն կազմալուծւած էր՝ նրա անգամները իրար դէմ զանազան ռազմավարական բռնում գէնքը ձեռքին կուռում էին, իսկ կերպով, բիւրօն, Բրիտանից քաշած Լաւազ՝ անգամաւորի վիճակի մէջ քարը էր տալիս իր անւանական գոյութիւնը: Այս

գրութիւնը շարունակուում է մինչև 1915 թ.ի ամառը, երբ պատերազմական հաշիկից սմափաւած տարրերի մէջ միտք է յղանում վերակենդանացնել Ինտերնասիոնալը և պատերազմական Մոդոքի դէմ գուրս բերել: Կարեւոր դէպքերը հանդէս են գալիս այդ օրերից հետեւեալ ժամանակագրական կարգով:

1915 թ. սեպտ. 3-8 Յիւնկերվարի կոնֆերանսը: Հրաւիրուում է իտալացի, գլիցերացի և տարագիր ռուս ընկերվարականների նախաձեռնութեամբ: Ներկայ էին Իտալիայի և Ռուսմանիայի կուսակցութիւնները պաշտօնապէս, իսկ Ռուսաստանի, Լեհաստանի, Բուլղարիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Զէիցերիայի, Հոլանդիայի և Սկանաւիաեան երկրների կուսակցութիւններից՝ միայն փոքրամասնութեան ներկայացուցիչները: Կոնֆերանսը հրատարակում է մի մասինֆեստ, որի մէջ առաջին անգամ հանդէս է գալիս յետադրութիւն առանց հողագրաւման, առանց պատերազմական տուգանքի և ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրայ՝ նշանաբանը: Կոչի ռակ ստորագրում են Լէդէրուր Հոֆման (Գերմանիա) Մէրհէն, Բուլղերոն (Ֆրանսիա) Լալլաքարի, Մոդոքիցեանի (Իտալիա) Լենին, Աքսելլոս, Բորբով (Ռուսաստան) և ուրիշները: Յետագային այս կոչին միանում է և անգլիական Անկախ Աշխ. կուսակցութիւնը, որի ներկայացուցիչները չեն կարողացել անցագիր ստանալ Յիմնիքովազ գալու համար: Կոնֆերանսը իր որոշումների գործադրութիւնը յանձնում է Միջազգային կոմիտէին, որի մէջ են մտնում Բալաբանով, Մորգարի (Իտալիա) Գրիմ և Նէն (Զէիցերիա):

1916 Ապրիլի 24-30: Կիևքայի խորհրդածոցով: Յիմնիքովազեանների երկրորդ խորհրդածոցում է սա: Լենինի և Բոլազ իւրաքանչիւրի զեկարարութեամբ կազմուում է «Յիմնիքովազեանների ձախկողմեան թեւը» կոչւած խմբակցութիւնը: Ընդունւած բանաձեւի մէջ յայտարարուում է, որ տեսական խաղաղութիւնը միմիայն ընկերվարութեան կատարեալ յաղթանակով կարող է ապահովուել:

1917 թ. Սեպտեմբեր: Հոլանդական և սկանդինաւական ընկերներից կազմւած մի կոմիտէ հրաւիրում է Ստոկհոլմում Ինտերնասիոնալի խորհրդածոցով: Պաշտօնապէս ներկայացուցիչներ են զրկում գերմանական աստորոհունգարական, ռուսական և մի շարք չէզոք երկրների կուսակցութիւնները: Լ. Յ. Իաշնակցութեան կողմից գայիս են Ռուսաստանը և Վալաւիանը: Ֆրանսական և անգլիական կուսակցութիւնները չեն կարողանում մարդ ուղարկել, որովհետեւ նրանց կառավարութիւնները մերժում են անցագիր տալ: Սրա պատճառով խորհրդածոցովը չէ կայանում:

Այս առիթից օգտուում են «Յիմնիքովազեաններ»ը կայացնելու համար իրենց երրորդ կոնֆերանսը (Սեպտ. 4-12) որ ամբողջովին բուլղերիկեան ազգեցութեան շրջանակի մէջ է ընկնում ռուսական դէպքերի բերումով:

1919 թ. Փետրվար 3-11: Բեռնի խորհրդածոցով: Մասնակցում են բոլոր երկրների կուսակցութիւնները բացի ռուս բուլղերիկեանցից և գլիցերական կուսակցու-

Թիւնից, որոնք պատերազմին մասնակից կուսակցութիւններն չհտ գործ չեն ուզում ունենալ, և բեղիական կուսակցութիւնից, որ չի ուզում գերմանական Սոցիալ-դեմոկրատիայի չհտ միւնտոն սեզանի շուրջը նստիլ, և Յ. Գաշնակցութեան կողմից ներկայ են ընկ. Վարանդեան, Համո ՕՏանդանեան և ուրիշները: Օրակարգի Հարցերն են ազգային և սահմանային ինդիքները, աշխատանքի պաշտպանութիւն, ապագայ Ինտերնասիոնալի կազմակերպութիւնը, պատերազմի մեղսակցութեան խնդիրը ևն: Օրակարգի առաջին կէտում քննութեան է դրուում և Հայ-վրացական սահմանային վէճը: Պատերազմի մասնակցութեան խնդրում լուրջ ընդհարումներ են տեղի ունենում գերմանական և ֆրանսական ներկայացուցիչների միջև:

1919 թ. Օգոստոս 2-10: Լիւբեքնի խորհրդատուովը: Ներկայ են Բեյլինի խորհրդատուովին մասնակցող բոլոր կուսակցութիւնները և բեյլիական կուսակցութիւնը: Օրակարգի Հարցերն են միջազգային քաղաքական վիճակը և Ինտերնասիոնալի վերականգնումը: Հայ-վրացական սահմանավէճը նորից քննութեան է դրուում:

1919 թ. Վերջերիս և 1920 թ.ի սկզբներին, Երկրորդ Ինդերնասիոնալից յարձգումար անջատուում են գերմանական Անկախ Ընկերվարականները, Ֆրանսական Ընկերվ. կուսակցութիւնը, անգլիական Անկախ Աշխ. կուսակցութիւնը, աստրիական Սոցիալ-Գեմոկրատիան, զեիցերական, իտալական, լեհական և մի քանի այլ կուսակցութիւններ:

1920 թ. Օգոստոս 1-6.—Փրնկի խորհրդատուովը: Վերոյիշեալ անջատումներից յետոյ՝ շատ քիչ թւով կուսակցութիւններ են ներկայանում Երկրորդ Ինտերնասիոնալի այս կոնֆերանսին: Բեյլիական Ընկ. կուսակցութեան և գերմանական Սոցիալ-Գեմոկրատիայի միջև Հատուութիւն և կայանում: Արդուում է Ինտերնասիոնալի կեդրոնը փոխադրել Լնդոն: Մակերանայը քարտուղարութեան ղեկավարութիւնն է ստանձնում:

1920 թ. Դեկտեմբեր 5-7: — Երկրորդ Ինտերնասիոնալից բաժանուած ընկերվարական կուսակցութիւնները Բեռնում նախնական խորհրդատուով են ունենում նոր Ինտերնասիոնալ կազմումը Համար: Ներկայ են աստրիական կուսակցութիւնը, գերմ. Անկախ Ընկերվարականները, Ֆրանս. կուսակցութիւնը, անգլիական Աշխ. Ընկախ կուսակցութիւնը, ռուսական Սոցիալ-Գեմոկրատիան, գեիցերական, չեխոսլովակեան կուսակցութիւնները: Արդուում է մի միջազգային կոնֆերանս գումարել և այդ մասին կոչ է ուղղուում Երկրորդ Ինտերնասիոնալից անջատուած կուսակցութիւններին:

1921 թ. Փետրվար 22-27. — Վեննայ Ինտերնասիոնալի (2 1/2) կոնֆերանսը: Ներկայ են Երկրորդ Ինտերնասիոնալից անջատուած գրեթէ բոլոր կուսակցութիւնները: Կոնֆերանսը դիտում է իրեն ոչ թէ իրրեւ բոլոր ընկերվարական բանւորներին միացնող Ինտերնասիոնալ, այլ իրրեւ միոց այդպիսին ստեղծելու: Գործադիր կոմիտեի քարտուղար է ընտրուում Ֆրիդրիխ Աշկերը: Մի շարք կուսակցութիւններ, ինչպէս ամերիկեանը, Ֆրնչւան-

դականը, սպանականը, ևն., որոնք ներկայացուցիչ չէին ուղարկել այս կոնֆերանսին՝ յիտազային միանում են նրա որոշումներին:

1922 թ. Ապրիլ 28. — Երեք Ինտերնասիոնալներ (2, 2 1/2 և 3 1/2) գործադիր կոմիտեներ կոնֆերանսը Բեռլինում: Հարւիրում է Վեննայի (2 1/2) Ինտերնասիոնալի նախաձեռնութեամբ: Հ. Յ. Գաշնակցութեան կողմից ներկայ է ընկեր Վարանդեանը: Օրակարգի ինդիքն է Ինտերնասիոնալների միացումը: Ընտրուում է իւր Հոգուց բազկացած մի յանձնաւումը՝ (Խրաքանչիւրից երեք Հոգի) միացման պայմանները մշակելու Համար:

1922 թ. Մայիս 19-22.—Բեռնի կոնֆերանս (Երկրորդ Ինտերնասիոնալի) միացման պայմանները քննելու Համար: Հ. Յ. Գաշնակցութեան կողմից ներկայ են ընկ. Վարանդեան և Ջամայան: Կոնֆերանսը բողոքում է գեմալականների Հայազինվ. քաղաքականութեան դէմ և պահանջում Հայիական Դատի լուծումը:

1922 թ. Մայիս 23.—Միացման Յանձնախումբի (Ինտի Յանձնախումբ) նիստը Բեռլինում: Կոմիտեի անդամները զըրտած լինելով իրենց խոստումը ռուս սոցիալիստ յեղակ փոխականների դատավարութեան՝ ինչպէս և այլ ինդիքներում, պատճառ են դառնում միացման գործի վիժմանը:

1922 թ. Դեկտեմբեր 10-12.—Խորհրդատուով Հասագում Երկրորդ և Վեննայի Ինտերնասիոնալների միացումը կայացնելու Համար: Ընտրուում է մի կազմակերպիչ կոմիտէ, տաքը Հոգուց բազկացած, որ 1923թ. Յունիս 5,6,7,8 Իրեգէնցում որոշում է միացման պայմանները և մշակում ապագայ միացեալ Ինտերնասիոնալի կազմակերպական կանոնների նախագիծը:

1923 թ. Մայիսի 21-28.—Համաբորգի Համագումարը: Ներկայ են 32 երկիրների կուսակցութիւններ, մտա ութ միլիոն անդամով: Ներկայ են նաեւ Ամստերդամի Արհեստակցական Ինտերնասիոնալի ներկայացուցիչները, որոնց թիկունքում կանգնած են մտա 22 միլիոն կազմակերպւած բանւորներ: Յայտարարուում է Ընկերվար. Աշխատաւորական Ինտերնասիոնալի կազմակերպումը և Հաստատուում նրա կազմակերպական կանոնագրի նախագիծը: Հ. Յ. Գաշնակցութիւնը ներկայացնում են այս Համագումարին ընկերներ Վարանդեան, Ջամայան և Համարձուեման:

\*\*\*

ԱՇԽԱՏ. ԸՆԿԵՐՎԱՐ. ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Համաձայն կազմակերպական կանոնագրի 6րդ յօդուածի՝ Աշխատաւորական Ընկերվար Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէն հրաւիրում է իր մասնաճիւղերին համագումարի 1928 Օգոստ. 22-27, Մարտէլում:

Համագումարը տեղի կ'ունենայ Palais des Expositions-ում և կը բացւի Օգոստ. 22ին առ. ժամը 10ին:

**ՄԱՆՆԱԿՑՈՂՆԵՐ**

Համագումարին մասնակցելու իրաւունք ունին Ա. Ը. Ինտերնասիոնալին միացած բոլոր կուսակցութիւնները (Յօդ. 7 կազմ: Կանոնագրի):

**ՊԱՅԳՎԱԲԱՆՈՐՆԵՐԻ ԹԻՒԸ**

Ամէն .ի կուսակցութիւն իրաւունք ունի Հինգ պատգամաւոր ուղարկելու Համագումարին, իր ունեցած առաջին ձայնի համար և երկրորդ պատգամաւոր՝ մնացած ձայների համար:

Բացի պատգամաւորներից՝ ամէն կուսակցութիւն կարող է ուղարկել Համագումարին հիւրեր, որոնք չեն կարող իսպ առնել կամ քւէտրիկէ, և որոնք թիւը աւելի չպէտք է լինի, քան պատգամաւորների թիւը:

**ՕՐԱԿԱՐԳ**

Գործադիր կոմիտէն կազմել է հետեւեալ ժամանակաւոր օրակարգը.

1. Ընկերվարութեան միջազգային խաղաղութեան քաղաքականութիւնը:

ա. Ինտերնասիոնալը եւ ապահովութեան ու զինաթափութեան խնդիրները:

բ. Աշխատատեղի դաշնակցութեան պայքարը պատերազմի վտանգի դեմ:

2. Բանւորական կեանքի պայմանները և գործազրկութիւնը:

3. Վաշինկզընի համաձայնութիւնը և Յ ժամեայ օրը:

4. Կանանց միջազգային խորհրդաժողովի գեկուցումն ու բանաձեւերը:

5. Կազմակերպական խնդիրներ և անդամագնահատման սխտանք:

6. Այլ հարցեր:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

Միայն ինտերնասիոնալին միացած կուսակցութիւններն իրաւունք ունին առաջարկութիւններ անելու: Այս առաջարկութիւնները պէտք է ներկայացնեն Ա. Ը. Իի քարտուղարութեանը ամենաուշը մինչև 30 Յունիսի 1925 թ.: Վերոյիշեալ թւականից յետոյ ներկայացւած առաջարկութիւնները քննութեան կարող են դրւել միայն Համագումարի յատուկ որոշումով:

**ԶՄԻՆՑՆԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ներկայացուցիւններն այն կուսակցութիւնների, որոնք Գործադիր կոմիտէի հետ բանակցութիւնների մէջ են ինտերնասիոնալին անգամագրւելու համար՝ կարող են հիւրերի ստիպման առնել, եթէ դրան դէմ չի լինի Գործադիր կոմիտէն:

**ԿԸՆԱՆՑ ԽՈՐՀՐԳԱԾՈՂԱԸ**

Ընկերվար Կանանց Միջազգային Խորհրդաժողովը պիտի գումարի Մարսելում՝ Օգոստ. 21/ին Օրակարգը պիտի որոշէ Ընկերվար Կանանց Միջազգային կոմիտէն: Խորհրդաժողովին կարող են մասնակցել միայն Ա. Ը. Ինտերնասիոնալի մէջ գտնւող կուսակցութիւնների անդամահիւրերը:

**ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԽՈՐՀՐԳԱԾՈՂԱԸ**

Ինտերնասիոնալի համագումարի ընթացքում տեղի

պիտի ունենայ մի խորհրդաժողով հողային հարցը քննելու համար: Սրան կարող են մասնակցել այն կուսակցութիւնները, որոնք առանձնապէս չահագրուած են այս հարցով:

**ՑԵՆԵԿՆՈՒՄ**

Կուսակցութիւնները պարտաւոր են մինչև Յուլիսի 15ը հարցուցել իրենց պատգամաւորների թիւն ու անունները՝

1. Ա. Ը. Ինտերնասիոնալի քարտուղարութեան, 4, Great Smith street London, S. W. I.

2. Մարսելի տեղական կոմիտէին M. Léon Bon, 42 rue de la République, Marseille (France)

Ա. Ը. Ի.ի Գործադիր կոմիտէն ինքուրմ է ինտերնասիոնալի ըզոր կուսակցութիւններին և ըզոր աշխատաւորական կազմակերպութիւններին ձեռք առնել ամէն միջոց, որպէսզի Միջազգային Համագումարը արտայայտութիւնը լինի ղէպի իր ազատագրութիւնը դիմող աշխատաւոր դասակարգի ուժի:

1925 թ.ի Միջազգային Համագումարը պէտք է դաննայ մի ուժեղ ցոյց

Յօգուտ աշխատաւոր դասակարգի առաջադրած մեծ պահանջների, որպիսիք են ինքազրկութիւնը և Ութ ժամեայ օրը,

Ընդդէմ աշխատաւոր դասակարգի և յառաջդիմութեան թշնամիներին, որպիսիք են կապիտալիզմը և Ֆաշիստական ղեակախոնը,

Յօգուտ աշխատաւորների միացման՝ Աշխատաւորական Ընկերվար Ինտերնասիոնալի ծոցում:

Ա. Ը. ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՕՄԻՏԷ

Փարիզ, 1925 թ.

**Գ Ր Ա Ն Օ Ո Ս Ա Կ Ա Ն**

Վ. Նաւասարդեան. ւշ. Յ. ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՂԻՆ՝ (X Ընդհանուր Ժողովի առիթով) Գա. հիթ, 1925. Մասնաշար «Յուսարե» դիւ 10. Գիճն 7 Եզիպ. դան. \*

Իր տեսակի մէջ մի նոր փորձ է հանդիսանում այս գրաւքը մեր կուսակցական գրականութեան մէջ: Գաշխակցութիւնը իր պաշարի դոկիակ պայմանների բերումով միշտ զգուշացել է իր Ընդհանուր Ժողովների մասին հրապարակալին համարատուութիւն անել: Այդ ժողովների ընդունած բանաձեւերը մին օրս հարգուել են միայն կուսակցութեան կենդ. բնական կոմիտէներին, որպէսզի վերջինկես Երանց ոգով առաջ տանեն կազմակերպւած գանգաձեւերի քաղաքական դասախորհրդութիւնը: Հայն հասարակութեան համար Գաշխակցութեան Գերագոյն Ժողովի որոշումները գրեւորուել են այն չափով միայն, ինչ չափով երանք գ ու թ են դատել, կամ՝

\* Գրի հասոյթն ամբողջովին յաւաքուել է Յ. Կաւանցուրեան օտարգիւրներին:

արտայայտել մեր ընթացիկ քաղաքականութեան մէջ:

Հետ երեսօթիկն այս սովորութիւնն՝ այլեւ չէ համապատասխանում մեր ժամանակի պահանջներին: Արքիին տասնամեակում տեղի ունեցած քաղաքական փոփոխիկներն ուժգնորէն ցնցել են ժողովրդական գանգաճների մ'իտքը: Այդ մ'իտքը հրամայականորէն սնունդ է պահանջում իր համար: Նա պահանջում է մասնաւորապէս լուսարանել հանրային կեանքի հետ կապած իրադարձութիւնները: Եթէ այդ լուսարանութիւնը ճշմարիտ աղբիւրից չտասցի՝ նա կարող է ընկնել հազար ու մի սխալ հեթանոսութիւնների մէջ, կամ նեխարկւել անբարեխիղճ խոստանալարութեան սաղարեքներին...

Այս մտահոգութիւնը անձնօթ չէ ընկ, Նաւասարդեանին. «Քանի որ Դաշակցութիւնը մնում է իբրև կայունը ազգակը մեր հանրային կեանքի, պապ պէտք է, անհրաժեշտորէն պէտք է, որ նրա մտածումներին և ծրագրերին տեղեակ լինին շատերը» — ասում է նա իր գրքի յառաջաբանում: Մակայն մեր հեղինակը միայն այս մտահոգութիւնից չէ ելնում ընդհ. ժողովի որոշումներին հայ հասարակութեանը հազարակից անելիս, այլ և այն համոզումից, որ այդ որոշումները հրապարակուած լաւագոյն միջոցն է հայ ժողովրդի համակուսնը Դաշակցութեան շուրջը աւելի ևս խտացնելու համար: «Իմաստը չունի գողտի պահէ մի բան, երբ ուզում ես, որ նա ծանօթ լինի ամենքին», ասում է նա Նոյն յառաջաբանում այնպիսի մի շեշտով, որ ոչ մի սարակոյս չի թողւում վերոյիշեալ հանդիման եկատմամբ:

«Դաշակցութեան քաղաքական 'ուզին' բաժանւած է երեք զիւրի: Առաջինի մէջ պարզաբանւում է Դաշակցութեան ըմբռնումը Հայկական Դատի խնդրում, և վեր են հանւում այն ազգայինները, որոնք հնարաւոր են դարձնում այդ Դատի լուծումը: Երկրորդ զիւրից ելիւր է X ընդհանուր ժողովի որոշումներին, որոնք Դաշակցութեան ներկայ քաղաքականութեան ուղին են գծում: Երրորդ զիւրից, որ օգտաբանութեան ընդհանուր օրին» վերնագիրն է կրում, այդ ոգու հետ միասին պարզում է հայ հասարակութեան գործակցութեան և Դաշակցութեան ծրագրի վերաբնութեան խնդիրները:

Այս գլուխներին նախորդում է մի յառաջաբան, որ համառօտ տեսութիւն է ներկայացնում այն իրադարձութիւնների, որոնք տեղի են ունեցել մեր կուսակցական կեանքում IXդ (1919թ.) ընդհանուր ժողովից ի վեր, և յաջորդում մի վերջաբան, ուր ներդրում են Հ. Յ. գաշակցութեան պատմական միտին և կենսունակութիւնը:

Նիւթի գաստարութիւնը վերոյիշեալ երեք գլուխներին մէջ զօրախտարար փորք ինչ շիտթ ձեւով է կատարւած. սա դժուարացնում է ընդհ. ժողովի որոշումները յասակ կատեգորիաների բաժանելու գործը, որ այնքան անհրաժեշտ է ներանց վերջիման համար: Այսպէս օրինակ, մեր ներքին, ազգային ձակատում կիրառելիք որոշումներին կցւած են կուսակցական կամ կազմակերպական կեանքին վերաբերեալ մի շարք որոշումներ, միջնդեւ սրանք տարբեր կարգի նիւթեր են: Գամ՝ երրորդ զիւրի մէջ է ընկել հայ հասարակութեան ձեռնարկութեան խնդիրը, որ «քաղաքականութեան ընդհանուր ոգու» հետ անմիջապէս չէ առնչւում, բայց շատ քանակաւ նօրէն կապւում է ազգային ներքին ձակատում կիրառելիք

գործերին: Այնուհետև՝ ծրագրի վերաբնութեան խնդիրը, որ զուտ կուսակցական ճնշթ ունի, կուսակցական որոշումներին շրջանակից դուրս է ընկած և չի:

Նմանօրինակ անպատեհութիւններն ըստ իս մեծ մասամբ կը վերանային, եթէ կուսակցական կազմակերպական խնդիրները ամփոփւէին մի առանձին զիւրի մէջ, գործակցութեան խնդիրը կցւէր ներքին ձակատին վերաբերեալ հատուածին, և «քաղաքականութեան ընդհանուր ոգին», իբրև բաղկացուցիչ տարր, մտնէր երկրորդ զիւրի մէջ:

Այս զուտ տեխնիքական թերութեանը պիտի աւելացնել և այն, որ ընկ. Նաւասարդեանը, չնայած իր ճշմ. բառապաշարին և ոճին, երբեմն անլսքան խրթին արտայայտութիւններ է գիւմում, որ դժուար ըմբռնելի են մինչև իսկ միշակ ընթերցողի համար: Ետապում եմ աւելացնել սուկային, որ այս խրթնարանութիւնները սակաւապէս են մեր ցնուութեանը ենթակայ գրւածքի մէջ: Ընկ. Նաւասարդեանին շատ քիչ ջանք էր հարկաւոր, որպէսզի նրա լեզուն այս գրքի բոլոր մասերում դիւրամբնելիլ գաղաւթ անգամ հայերէնի մէջ թոյլ ընթերցողի համար:

Մի կողմ՝ թողնելով միւս մանր-մունր թերութիւնները, որոնք միանգամայն հասկանելի են այսօրինակ գրուածքում, որ մի կողմից ինչպէս սասցիներ, առաջինն է իր տեսակի մէջ իսկ միւս կողմից, յայտնի պատճառներով, հեղինակին չէ ընձեռնում ազատ արտայայտութեան բոլոր միջոցները՝ պէտք է ասենք, որ ընկ. Նաւասարդեանի այս գիրքը մի շատ արժեքաւոր գործ է հանդիսանում մեր կուսակցական գրականութեան մէջ: Ընդհանուր ժողովի որոշումները հիմնաւորւած և լուսաբանուած են նրան մէջ ընդհանրապէս յաջող, իսկ յամախ շատ յաջող: Ուշագրտու են այս տեսակէտից Հայկական Դատի լուծման հնարաւորութիւնը պարզող շեշտը, ազգային ներքին և արտաքին ձակատներում կատարելիք աշխատութեան լուսարանութիւնը և մանաւանդ այն հիմնաւորումը (էջ 106—126) որ ընկ. Նաւասարդեանը, գիտական ընկերաբանի ձեռնհասութեամբ տալիս է X ընդհ. ժողովի որդեգրած հակարժեհիկան զագափարական պայքարին:

Մինչև այս գրքի լոյս տեսնելը Դաշակցութեան հակաւարդները, աչից և ձախից, ասիթ բռնելով X ընդհանուր ժողովի յայտնի « Կոչը », բազմաթիւ յերկրանքներ են կատարել նրա որոշումները շուրջը: — Թիրքական օրէին-տասին հակառակ ուսուսականի, կռիւ բոլոր ձակատների վրայ, գաւաղական ծրագրերը ընդդէմ Հայաստանի խորհրդային կառավարութեան — բոլորը, բոլորը կը գանեք հակաակորդ մտմունք և հրտարակութիւններին մէջ: Այս լեռնաբանքներին ևս անդրադառնում է մեր հեղինակը, ինչ որ չնաձախ բանավէճի թելոթ է առկա նրա գրքին և վերջինիս անթերցումը դիւրացնում — մինչև իսկ հոսանքի դարձնում: Բանակուի մէջ սուր է ընկ. Նաւասարդեանի գրիլը, հեղինակն և իր խայթիչ արկունքներով — բայց ոչ այնպէս գոեհիկ և թունոտ, ինչպէս հակաւարդների լեզուն:

Ձուենալով պաշտօնական հանգամանք — ինչպէս հեղինակն է ասում իր յառաջաբանի մէջ — կարող է պատահել, որ այս գրուածքը մանրամասնութիւններին կամ երազներին մէջ տարբերի այն բազմամասնութիւններից, որ կրտար X ընդհանուր ժողովի որոշումներին, դիւրաց, մի պաշտօնական մարմին: Բայց

անգամ այս վերապահումով խիստ հրահանգիչ և յանձնարարելի է նրա ընթացումը: Նրա մէջ ընթացողը կը գտնէ մեծ մասը այն բարաբալան մտածումների, որոնք՝ իբրև մեկնակէտ կամ եզրակացութիւն՝ վճռական պեր են կատարում Հ. Յ. Գաղափարական X ընդհանուր ժողովի ընդունած որոշումների մէջ: Ա. Զ.

**ԱՅՆՏԵՂ, ՌԻՐ ԿՈՄՎՈՒՍԸ Կ'ԵՒԷ**

« ԿՕՄՈՒՆԻՍՏ » անապիր, օրգան Հկկկ եւ Երեւանի Կօմ. ի No 1.

Հկկկ-ը, կամ, մարդկային լեզուով, Հայաստանի Կօմունիստական Կուսակցութեան Կեդր. Կոմիտէն սկսեց և հրատարակել « Կօմունիստ » ստուև ամսագիր մը, որու No 1-ը աչքի առջև ունիք: Թէ արտաքինով և թէ բովանդակութեամբ ամբողջ այդ գիրքը Հիտաբերբալան է այն անակէտէն, որ բաւականաչափ առատ էր իւր կը պարունակէ Կօմ. Կուսակցութեան և Հայաստանի առօրեայ կենքի զանազան երեւոյթները Հասկնալու Համար:

Հակառակորդը ճանձնալու լուսագոյն միջոցն է անոր վեճակն ու արդումները բուն իսկ իր ներքին տեղեկութիւններէն քարոզել: Եյս պատճառով կ'աշխատից անաշ բերել « Կօմունիստ » ի Հաղորդած տեւաները, որոնք անՀամեմատ անելի պերճաբառ են, քան որոնք կատարած որեւէ քննադատութիւն:

Աւելորդ կը Համարինք կանգ առնել ամսագրին սկիզբը դրած Բուխարինի ընդարձակ զեկուցման վրա, ուր պրոլետէի անասանը երկաթորէն և մանածագատ եղանակներով կը փորձէ Հայտեցնել կօմունիստական և կապիտալիստական անտեսակարգերը՝ շնչոտելով « գիւղի կապիտալիստական տարբերին կաշկանդումներէ ազատելու », « աւագմեկօմունիստական շրջանի միացորդները վերցնելու և տնտեսական շրջանառութեանը աւելի մեծ ազատութիւն տալու » անհրաժեշտութիւնը: Չենք խօսիր և Ա. Մուսաեանի « Կապիտալիզմի ստաբիլիզացիան և Կօմիտէներին աշխատանքը » աշակերտական շարադրութեան մասին, որու մէջ Հայաստանի ԺողկոմիտորՀի պատուելի նախագահը կը Հաստատէ, թէ « մանակի ստաբիլիզացիայի ենթարկւած կապիտալիստական կարգի Հակայեղափոխական շղագնումներէ պէրիօտը պիտի սեղի տայ յեղափոխական ցեցումների գարնաշրջանին », թէ « վաղայն այդ անխուսափելի յեղափոխական անցքերի Համար է, որ պատրաստում է Թ. Ս. Զ. Միտիթիւնը և միջադպիչին յեղափոխական պրօլետարիատը կօմունիստական Ինտերնացիօնալի զեկավարութեամբ »:

Կ'անցնինք ուղղակի փաստերուն:

Վ. Յովսէփեանը վերլուծութեան կ'ենթարկէ « Երեւանի կազմակերպութեան ոչ-պրօլետարական ըջիջների ստուգման արդիւնքները և « գոհունակութեամբ » կ'արձանագրէ, որ « ըջիջների ակախութիւնն ու դիտակցութիւնը նախորդ երկու տարիների Համեմատութեամբ անկ է: Չկայ անաշայն անտարբեր վերաբերմունքը դէպի ներքին կենքը և իր սեփական Հիմարիութեան աշխատանքը: Չկայ ըջիջի և զեկավարների

միջև գոյութիւն ունեցող անաշայն փոխադարձ անըմբռնութիւնը: Բջիջի 17-րդ կատեգորիայ ուսնիկ ստացող անգամներն ու 3-ն կատեգորիայ ստացող անգամները ըջիջի նիստերին Հանդիպում են որպէս Հաւասար անգամներ... »

Ինչպէս կը տեսնէք, կօմունիստական աշխարհին մէջ գոհունակութեան արժանի երեւոյթ է, որ 17 և 3-ն 3-ն անտրմանի թոշակաւորները այսինքն՝ Հարուստներն ու աղքատները « ըջիջի նիստին կը Հանդիպին իբրև Հաւասար անգամներ »:

Եթէ, սակայն, մեկզկի զենք Յովսէփեանի այս պաշտօնական գոհունակութիւնը և անցնինք իր իսկ արձանագրած փաստերուն, բոլորովին Հակառակ տպաւորութիւն կը ստանաք: « Բջիջների ստուգումը » երեւան է Հանած « ըջիջները դէպի խոսնակութիւնը », « Ինտերգներ », « Խմբաւորումներ », « Իրար տակ փորելու օրինակներ », « շարքային ընկերների Հետ կապիտալ վարեցողութիւն », « մեծամտութիւն », « մասնագիտակերութիւն » և այլն: Ըջիջներուն մէջ « Գաղափարական թեքումներ չկան: Ներկուսակցական դիսկուսիայի անաշին շրջանում, ընկ. Տրօչկու « Հակամեքերի դատերի » յաւաշտութեան լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ, որոշ յափշտակութիւն կար, բայց երբ լոյս տեսան դիսկուսիային վերաբերակ զրական էր թերը և մի շարք զեկուցումներ ու դիսկուսիաներ կազմակերպեցին ընկերների կողմից, յիշատակները վերաբան: Գաղափար, որ այդ ընկերներից շատերը անտապում են նիստային հիւանդութիւններով, նրբեմն շատ անուշանով, եւ մեր պետապարտսի կամ ստանձնիկ ընկերների քերտութիւնները յափազանցւած ձևով են անդրադատւում նրանց յոգնած ուղեղներուն »:

Ինչպէս յայտն է, Տրօչկին ալ իր « Հակամեքերեան Դատերը » հրատարակելէ յետոյ հուշակուցեալ ջգային Հիւանդ, « շատ սուր ձեւով » և արտօրուցեալ Սուխում « բուժուելու »: Յովսէփեանը ջրսեր սակայն, թէ թէջ գեր կատարեց Չեկան « Հիւանդ ընկերների » « յափշտակութիւնը » վերացնելու Հարցին մէջ:

« Եստերը, կը գրէ Յովսէփեանը, զանգատում են Երեւանի կօմիտէից ու նրա կազմակերպչական բաժնից՝ իրենց դիմումների բաւարարման գործում կատարուող ձգձգումների Համար, « անձնական գործերը ճնշող մեծամասնութեամբ փայլում են դատարկութեամբ »: « Բջիջների խառնուրդներից ունակ կանգնած չեն իրենց կոչման բարձրութեան վրայ »: « Բոլոր բջիջները բաղոմում են Երեւանի կօմիտէի քերտուրիսիզմի դիմ »: Կանանց շրջանում կատարուող աշխատութիւնը թոյլ է: « Մարքեզի մի և Լէնինի մի անական Հարցերին, մանաւանդ Մարքեզի մի փիլիսօփայութեանը ձանձօք ընկերները փորձարկել են: « Քաղաքականապէս պակաս պատրաստուածները յամախում են ինչ-գրագիտութեան զարդները, բայց յայտն է և ամեն քեզ կանոնաւոր չէ »:

Ինչպէս կը տեսնէք, « ստուգման » արդիւնքը շատ ալ փայլուն չէ: Բայց, ի Հարկէ, այդ արգիւք չէ, որ Յովսէփեանը եզրակացնէ, թէ՛ « Կուսակցութիւնը ամառ է, մեծանում և խորանում իր բազմակողմանի աշխատանքի մէջ »: Իսկ թէ ինչպէս կը խօսանայ, ցոյց կուտայ և Գ. Սաֆ. իր « Բջիջային ժողովները նախապատրաստութեան Հարցը » յօդուածով, ուր չիեական Հայերէնով կը գրէ: « Մեր ըջիջային ժողովները

որակ կուսակցութեան շարքային՝ անդամ առաջ լուսարանելու տեսակետից, այս կամ այն հարցերում կուսակցութեան մերձեցումը կուսակցականին՝ կուսակցութեան ընդհանուր շինարարութեան բոլոր հարցերին ակտիւօրէն մասնակցելու նշանակով, շահագանց ցած է: Գուսակցութեան կոմիտէները յանձնարարութիւնները մենք քանակօրէն կը կատարենք, մինչդեռ նրանց որակը շատ անգամ մեզ չի էլ հետաքրքրում: Աչաթէ ինչու մեր կուսակցական ժողովները կորցնում են իրենց կենսունակութիւնը:

«Գեներալներ» կը բացակայի «գիւղըջները» ժողովներուն մէջ ալ: Բայանը դառնապէս կը զանգատի որ գիւղըջներէն «շատերն պառաջայ պէս շարունակում են աշխատիլ առանց որևէ ծրագրի: Առանց ծրագրի աշխատիլը մեր մի շարք բջիջների կենսքի խոչորագոյն թերութիւններից մէկն է կազմում», որ պատճառ է դառնում «բջիջների հեղինակութեան անկման»:

«Մեր գիւղական կազմակերպութիւնները, կը գրէ ուրիշ մը՝ Պ. Ալեքսանդրով, աչքի են ըկնում իրենց փոքրաքանակութեամբ. մասնաւորապէս այնպիսի գիւղացի անդամների փոքր քանակով, որոնք դրժան է արօր են բանեցնում: Գիւղական բջիջը յաճախ կազմած է լինում գիւղի վարչական անձերից, խորհրդում աշխատողներից և այլն, և հասկանալի է, որ նման բջիջը կարող չէ հարկաւոր կապ պահպանել գիւղացիական մասսաների հետ հենց այն պատճառով, որ նրա կողմից բացակայում են գիւղացիութեան ստորին ներկայացուցիչները»:

Բանահասանը հետաքրքրական տեղեկութիւններ կը քաղէ «Գուսակցութիւն» այսինքն՝ կուսակցական գաւառական կոմիտէներու հարչետուութեանց մէջ: Այդ «հարչետուութիւն»ները կազմած են «միաստեակ» լըբը «անահասան կրկնութիւններով», «շարժ», ինքնուրոյնութիւնից զուրկ, «ձանձրալի», «ըջմեցող թւերով լեցւած», «լուստես...»:

«Կուսակցութիւնը մէկ-մէկ այնպիսի աստիճանի է հասնում, որ նոյն իսկ համր հանում են: Իրենք օրինակ ենր: Նոր Բայազէդի գաւառը՝ խօսելով գիւղացիներու քաղաքական արհմարտութիւններու մասին՝ միանգամայն լուրջ կերպով կը յայտարարէ: «Մակդոնալի անկման առիթով մեր գիւղացին յանկարծակիի չեկաւ, բայց առանձին զայրութիւնը կատարում աւելի գիտակից տարրերի մէջ հանդէպ կոնսերվատիւ իշխանութեան քաղաքականութեան»:

Շատ զարմանալի է, թէ այդ ինչպէս է, որ Մակդոնալտի կառավարութեան անկումը, որ նոյն իսկ անգլիական բանաւորութեանը յանկարծակիի բերեց, մեր նոր Բայազէդի գիւղացիութիւնը, որի 30% անգամ թերթ չի կարդում, բանաւորական կառավարութեան անկումը ընդունել է շատ սառնաւորութիւնով:

Ինչու զարմանալ, քանի որ նոր Բայազէդի գիւղացիութիւնը Մակդոնալտի կառավարութեան մասին նոյնքան բան գիտէ, որքան Եօրբջիբի ագարակատէրը գիտէ նոր Բայազէտի կուսակցութիւնը մասին:

«Մի շարք գեղուցումներում գրած է, կը շարունակէ Բանահասանը, որ Աշխատկուած հարկը 80-90 եւ նոյն նիսկ 1400<sup>0</sup> ուղ հաւաքում է, բայց ոչ մէկ խօսք այն մասին, թէ ինչպէս է հաւաքել և ինչ ազդեցութիւն է թողել գիւղացի-

ների վրայ... Իսկ մենք գիտենք, որ շատ տեղերում մեր հարկային ապարտների սխալները մեծ դժգոհութիւններ են առաջացրել չքատուր և միջակ գիւղացիների մէջ, որ սուրբը տեղ տեղ հասարակած է մինչև 1400<sup>0</sup> և ձայն չհանել — աւելի քան յաւատարմութիւն է:

Նոյնը կարելի է ասել և մեր գիւղախորհուրդներու մասին. «ամեն տեղ գիւղախորհուրդներում անցել են մեզ հարաւոր ելեմէնտներ, բայց չէ որ այդ նոյնպէս շահագանցութիւն է...» որպէսզի մեր խորհուրդներում բոլորն է և ամեն տեղ հարազատ էլեմէնտներ անցնին, դրա համար դեռ երկար տարիներ են հարկաւոր:

«Գիւղացի գաւառի հարչետուութեան մէջ շատ բանաստեղծական ու վառ գոյներով կերպարած է գիւղացիութեան շտեմեւած հուանդուն ձգտումն ու ծարաւըէպի անգարչետութեան վերացումը, որ նոյն իսկ 50 տարեկան ձերտակները մեծ հանոյցով յաճախում են լիկկայանները: Նոր Բայազէդի գաւառի գեղուցման մէջ կարգում ենք, որ գիւղացիները շատ մեծ դժուարութեամբ են սովորում. նոյն իսկ կոմբջիջները հակառակ իրենց կամքին կուսակցական կարգով հարկ են յաճախում գրագիտութեան պարագմունքներին»:

Ինչպէս կ'ըլլայ այսքան մեծ տարբերութիւն երկու հարւան գաւառներու մէջ:

«Նոր Բայազէդի գաւառի հարչետուութեան մէջ կը կարգանք, որ «չքատուր և միջակ գիւղացիներու վերաբերմունքը դէպի խորհրդ. իշխանութիւնը խօսք լինելի կարող, որ աւելի քան լաւ է», իսկ յետոյ հենց գեղուցման մէջ կը տեսնենք որ, բջիջները որոշ վախի տակ են պահում գիւղացիներին, ցանկալի յարգանքը չեն վաչելում գիւղերում, իսկ շրջտեսային գործովի նախագահները լաւ հեղինակութիւն չունին գիւղացիական մասսաների մէջ»:

«Լէն-Գաւառի հարչետուութիւնը... մասնանշում է, որ մեր ժողովները գիւղերում խանդավառութիւն են առաջ բերել և այլն... Իսկ հենց նորիս մի գրութիւն է ստացել Լէնգաւառի կուս. ընկեր Դուկաստեանից, որ գրում է հետեւեալը.

— «Ընտրութիւնների ժամանակ շատ գիւղացիներ (ի հարկէ չքատուր) հրաժարում էին մտնել խորհուրդների կազմի մէջ և հրաժարում էին կատեգորիկ կերպով: Նա գրանցից մի քանիսի հետ ունեցայ մասնաւոր խօսակցութիւն. թէ «ինչու են հրաժարում» նրանք ինձ պատասխանում են ամենէն առաջ՝ «իմ խօսքը գիւղում չի անցնում, քանի որ ինձանից հարուստը կայ»: Զբաղուները և նոյն իսկ միջակները հրաժարում են նախագահ ընտրելուց ասելով, որ դրա համար կարողութիւն — «դուրիկ» — է հարկաւոր»:

Ի. Երիցեանը կը քննէ Գոմեփոստական Գուսակցութեան դերը գիւղի մէջ գիւղատնտեսական տեսակետէն և նոյնպէս կը յանգի մեայլ եզրակացութիւններու. «Թէ խորհրդային պատասխանատու աշխատակիցների և թէ կոմունիստների մէջ կան դեռ այնպիսի ընկերներ, որոնց վերաբերմունքը դէպի գիւղատնտեսները, քակարին չիտոյնիսխական է, քիտոյնիսխական, պաշտօնական. նրանք անկասկածօրէն են վերաբերում գիւղատնտեսներին եւ այդպիսով անցրցան են սանդոնում իրենց եւ գիւղատնտեսների միջև... Գիւղացի-կոմունիստները և կոմիտէականները ոչ մի ակտիւութիւն չեն ցուցա-

